

**ISSN 1829-1155**

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԵՎՈՒՆԴՎՐՈԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ

## ՍԱՅՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Խոմքագրական  
խորհուրդ՝

Գաղղիկ Նարովշյաննեան  
Արմեն Տարովայրնյան  
Վահե Մինասյան  
Վորովյան Հովհաննիպյան  
Վաղերի Շաղրայան  
Ռաֆայել Պատղայան  
Արուշան Նակորյան

Գլխավոր խոմքագիր՝  
Գոհար Աշոտոնի

Խոմքագրության Խառնեն՝  
Երևան, Բայրության 10  
Հեռախոս՝ 58-31-71

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**

**1(50)  
2009**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

\* ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱՆՁԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ՎԵՐԱՀԱՎՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍԱԿԱՐԳՈՒՄ - Հ ԳՐԱԳՈՐԾԱՆ ..... 4

## II. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (742-754)

- \* ՍԴՈ-742. 2007 թվականի ՄԱՅԻՍԻ 25-ին ՅԱԼԹԱՅՈՒՄ ՍՈՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱՆ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ  
ԳՈՐԾԵՐԻ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ /ՈՍԽԿԱՆՈՒԹՅԱՆ/ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԶՈՐքԵՐԻ ՀԱՍԱՐ ԿԱԴՐԵՐԻ  
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՍԱԳՅԱԿՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 14
- \* ՍԴՈ-743. 2007 թվականի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ին ԴՈՒՇԱԲԵՈՒՄ ՍՈՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՆՑՎՈՐ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ (ԼՎԱՑՄԱՆ) ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԻՄԱԳՐՎԱԾՆՈՒՄ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը  
ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 17
- \* ՍԴՈ-744. 2007 թվականի ՄԱՅԻՍԻ 25-ին ՅԱԼԹԱՅՈՒՄ ՍՈՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱՆ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ  
ԳՈՐԾԵՐԻ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ /ՈՍԽԿԱՆՈՒԹՅԱՆ/ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԶՈՐքԵՐԻ ՀԱՍԱՐ ԿԱԴՐԵՐԻ  
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՍԱԳՅԱԿՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 21
- \* ՍԴՈ-745. 1999 թվականի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ին ՍՈՏՈՐԱԳՐՎԱԾ ՕԶՈՆԱՅԻՆ ԾԵՐՏԸ  
ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ ՍՊՈՆՏԵԱԼԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵԿԻՆՅԱՆ  
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 25
- \* ՍԴՈ-746. 1997 թվականի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-ին ՍՈՏՈՐԱԳՐՎԱԾ ՕԶՈՆԱՅԻՆ ԾԵՐՏԸ  
ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ ՍՊՈՆՏԵԱԼԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՊՈՆՏԵԱԼՅԱՆ  
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 28
- \* ՍԴՈ-747. ՔԱՂԱՔԱՅԻ ՆԻԽԱՆ ԴԱՎԱՐՅԱՆԻ ԵՎ ԱՅԼՈՅ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ,  
159-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, «ԻՆՔՆԱԿԱՆ ԿԱՍՈՒՑՎԱԾ ԾԵՆԵՐԵՐԻ, ՇԽՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԵՎ ԻՆՔՆԱԿԱՆ ԶՔԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՍՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻճԱԿԻ ՄԱՍԻՆ»  
ՀՀ ՕՐԵՆՏՐԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ ՀՀ ԴԱՏԱՎԱՐ ՕՐԵՆՍԳՐԻ 94-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ  
2-ՐԴ ՄԱՍԻ՝ «ԱՎԱՄԴԱՏՈՒ» ԲԱՌԻՑ ՀԵՏԾՈ ԱՄՊՈՂՈՒԹՅԱՆ, ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 31
- \* ՍԴՈ-748. 2007 թվականի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ին ԵՎ 2008 թվականի ՀՈՒՆՎԱՐԻ 21-ին  
ՍՈՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԵՎ ԿՈՍՈՎՈՅԻ ՈՒԺԵՐԻ ԳՈՐԾՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀՐԱՋՎԱՅԻՆ ԴԱՍՎԱՅ ԿՈՍՈՎՈՅՈՒՄ  
ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳՈՐԾՈՎԱՏՎԱԿԻ ԿԱԶՄՈՒՄՆԵՐԻԳՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
2003 թվականի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-Ի ՓՈԽԸՆՔՆԵՐԻ ՀՈՒՆՎԱՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 37

* ՍԴՈ-749. 2008 թվականի ՀՈՒՆՎԱՐԻ 23-ին ՍԱՆԻԼԱՅՑՈՒՄ ԵՎ 2008 թվականի ՀՈՒՆՎԱՐԻ 30-ին ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԿԱՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ԱՍԻԿԱՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԵՏԱԿԱՐ ԱՌԱՋԼՈՒԹՅԱՆ ՍԱՄԻ ՀԱՍՏԱՑՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 40
* ՍԴՈ-750. 2006 թվականի ԴԵԿԵՄԵԲԵՐԻ 14-ին ԵՎ 2007 թվականի ՀՈՒՆԻՍԻ 28-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԿԱՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԳՅՈՒՂԱԿԱՄ ՑԱԽԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՐ ԳՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒԽՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՍԱՐ ՓՈՔՐԱԾԱՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ» 4895 ARM ՆԱՍԱԿ-ՀԱՍԱՅԱՆՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 44
* ՍԴՈ-751. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐՄԵՆ ՀԱՍՏԱՁՅԱՆԻ, ԱԻՆ ՔՈՉԱՐՅԱՄԻ, ԻՐԻՆԱՆ ՕԳԱՆԵԶՈՎԱՅԻ, ԱՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԵՎ ԱԳՆԵՍԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԴԻՍՊՈՒՏԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՍԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 68 ՀՈԴՎԱԾԻ 10-ՐԴ ՍԱՍԻ 2-ՐԴ ՊԱՐՔԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ 12-ՐԴ ՍԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 47
* ՍԴՈ-752. «ԼՈՌԻՇԵՆ» ՍՊԸ-Ի ԴԻՍՊՈՒՏ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 1998 թվականի ՀՈՒՆԻՍԻ 17-ին ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 77 ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 63
* ՍԴՈ-753. «Ո-ԱԴԻԽ ՀԱՅ» ՍՊԸ-Ի ԴԻՍՊՈՒՏ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԵՌՈՒՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՎԴԻՈՅԻ ՍԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 53 ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՍԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 69
* ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ ..... 84
* ՍԴՈ-754. ՔԱՂԱՔԱՑԻ ԷՄԻԼԻՅԱՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԴԻՍՊՈՒՏ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 231.1. ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՍԱՍԻ ԸՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ 233 ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՍԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 88
* ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ..... 100
<b>III. ՏԵՂԵԿԱՎՈՒԹՅՈՒՆ</b>
* ԳԻՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՆՏԵՐԱՆՍ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ ՈՒԽԱՍՍԱՆԻ ԴԱՅՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ..... 102
* ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՍԱԿԱՐՀԱՅԻՆ ԱՊԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱԳՈՂՈՎՔ ..... 104
* ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ՝ «ՖԵՄԻԴԱ»-Ի ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ ..... 107
* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ..... 108



**ԵՐԻՍԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆԻ ԱՄՔԻՈՆ**

**Հայկ Գրիգորյան**

ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի  
սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԻՇԽԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱՆՁԱՏՄԱՆ ՍԿՂԲՈՒՆՔԸ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ՀԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

Իրավական պետության հիմնահարցը ժամանակակից քաղաքակրթության արդիական հիմնախնդիրներից է: Իրավական և ժողովրդավարական պետության պարտադիր նախապայմաններից մեկն էլ պետական իշխանության իրականացումն է իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա<sup>1</sup>: Սահմանադրության առաքելությունը նաև այն է, որ պետությունը և նրա տարածքում բնակչող մարդիկ համընդիանուր քարեկեցության նկատառումներով փոխադարձաբար սահմանափակեն միմյանց<sup>2</sup>: Հասարակության բնականոն զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է պետական իշխանության այնպիսի համակարգ, որում հստակորեն տարանջատված լինեն իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերը, իսկ նրանց ներդաշնակ համագործակցությունն ապահովելու համար գործի զսպումների ու հակակշիռների մի ամբողջ համակարգ<sup>3</sup>: Սահմանադրականությունը՝ որպես ամենաթողության հականիշ, ունի ինստիտուցիոնալ երաշխիքների անհրաժեշտություն, որն իշխանության երեք ճյուղերի այնպիսի կազմակերպվածությունն է, երբ վերջիններս, լինելով բավականաչափ ինքնուրույն և իրավահավասար, փոխա-

1. В. Острем. Смысл американского федерализма. Москва 1994, кн. 80-85: Հարկ է նշել, որ հետխորհրդային երկրներում 1990-ական թվականներից միայն անցում կատարվեց պետական կառավարման ողբրում աշխատանքի բաժանումից դեպի սահմանադրության անվագրված իշխանությունների տարանջատման գաղափարին:

2. А.Шանօ.Самоогрануւене власну. Москва 1999, кн. 78:

3. Գ. Հարույտյան, Սահմանադրական վերահսկողություն, Երևան 2002., էջ 4:

Դարձաբար սահմանափակում են միմյանց՝ հիմնվելով զայումների ու հակակշիռների համակարգի վրա<sup>4</sup>:

Իշխանությունների տարանջատումը ժամանակակից սահմանադրական կարգի հիմունքներից մեկն է, որը կոչված է բացառելու իշխանության կենտրոնացումը մեկ հիմնարկության կամ իշխանության մեկ ճյուղի շրջանակներում և դրանով իսկ կանխելու հնարավոր չարաշահումները։ Իշխանությունների տարանջատումը համարվում է նաև սահմանադրական ունիվերսալ սկզբունքներից<sup>5</sup> մեկը, իսկ ժողովրդավարական սահմանադրական սկզբունքները դիտարկվում են որպես «ժողովուրդների քաղաքակրթական ձեռքբերում և հանդիսանում նարդկության հասարակական նվաճումը»<sup>6</sup>։ Պատահական չէ նաև, որ իշխանությունների տարանջատման սկզբունքը դասվում է այն սկզբունքների թվին, որոնք ենթակա են վերաբայցանական միայն բարդեցված ընթացակարգով (Խաղաղիա, Ավստրիա) կամ ընդիհանրապես ենթակա չեն վերաբայցանակարգով (Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա)<sup>7</sup>:

Սահմանադրական սկզբունքների յուրօրինակ տիպարանություն է առաջարկում Է. Կյուրիխը: Նա մատնանշում է առաջնային, համալիր և ածանցյալ սկզբունքները: Առաջնային սկզբունքներն ուղղակիորեն ու հստակ ձևակերպված են Սահմանադրության տեքստում և չունեն մեկնաբանման կարիք: Բավական է ուղղակի վկայակոչել դրանք: Այստեղ գործում է «ակնհայտը չի պահանջում մեկնաբանություն» բանաձևը: Համալիր կամ բարդ սկզբունքները բխեցվում են Սահմանադրության մի շարք համալիր դրույթներից, իսկ ածանցյալ սկզբունքների մասին Սահմանադրության տեքստում ուղղակիորեն չի խոսվում, դրանք ձևավորվում են սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության մեկնաբանման ընթացքում՝ բխեցվելով առաջնային կամ համալիր սկզբունքներից<sup>8</sup>: Այս համատեքստում իշխանությունների տարանջատման սկզբունքը հնարավոր չէ միանշանակորեն դասել այս սկզբունքներից որևէ մեկին, քանի որ Սահմանադրությունները տարբեր մոտեցում են ցուցաբերել հիշյալ հաղողի շուրջ:

Տալով իշխանությունների տարածատման սկզբունքի բավականին նեղ մէկնարանություն՝ ԷԿուուրը գտնում է, որ իշխանությունների տառած-

4 Конституционное правосудие. Выпук 3 (37) 2007, т. 17: Այս համակարգը ենթադրում է նաև, որ իշխանության մի քը ներկայացնել պաշտոնատար անձը չպետք է որևէ պաշտոն օքանտեղնի իշխանության մեջ այլ քում: Այս կամանից էլ երբեմն արված են բացառություններ, օրինակ՝ Լիոնայի Սահմանադրության 60-րդ հոդվածը սահմանում է, որ Սեյմի անդամը կարող է հանակել վարչապետ կամ նախարար:

6 В. Е. Чиркин. Общечеловеческие ценности и российское право. //Общественные науки и современность. № 2, 2001, т. 64-76.

7 Ավելի մանրամաս տես՝ Сравнительное конституционное обозрение, N 2 (47), 2004, էջ 45:  
8 Stein նոյն տեղը, էջ 70-71:

## ՎԵՐԼՈՒԾՎԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ջատման սկզբունքն ամենին էլ չի բխում իրավական պետության, ժողովրդավարության կամ Սահմանադրության գերակայության սկզբունքներից: Այդ սկզբունքն անմիջականորեն կապված չէ նաև մարդու իրավունքների ապահովման հետ: Իշխանությունների տարանջատման հիմքերը չամրագրող Սահմանադրությունը<sup>9</sup> և կարող է գտնվել իրավական ակտերի իիերարխիայի բարձունքում, իմնական իրավունքի գերակայության վրա: Նման երկրում կարող են գործել ժողովրդավարական ինստիտուտներ և ապահովված լինեն մարդու իրավունքները: Հեղինակը զայիս է այն եզրահանգման, որ ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության ապահովման համար ամենին էլ անհրաժեշտ չէ օրենսդիր և գործադիր իշխանությունների տարանջատումը. դրա համար բավարար է ունենալ անկախ դատարան: Իր այս դիրքորոշումը Կյուրիսը հիմնավորում է պառամենտական ինքնիշխանության հիմքերի վրա խարսխված քաղաքական և իրավական համակարգ ունեցող պետությունների (Մեծ Բրիտանիա, սկանդինավյան երկրներ) ժամանակակից փորձով<sup>10</sup>: Ընդունելով հեղինակի մոտեցման հիմնավորված ու արդարացի լինելու հանգամանքը՝ անհրաժեշտ է, այնուամենայնիվ, կարևորել իշխանությունների տարանջատման սկզբունքի էական նշանակությունը Սահմանադրության և իրավունքի գերակայության ու հենց նույն դատարանի անկախության ապահովման գործում:

Իշխանությունների տարանջատման տեսության համաձայն, պետության բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որ երկրում միաժամանակ և փոխամագործակցության պայմաններում գործեն միմյանցից հարաբերականորեն անկախ իշխանության երեք քևեր՝ օրենսդիր, գործադիր և դատական: Այս տեսության էությունը կայանում է նրանում, որ բացառվի պետական ամրող իշխանության կենտրոնացումը մեկ անձի, մեկ ինստիտուտի կամ մարդկանց որոշակի խմբի ձեռքում, ինչն անխուսափելիորեն կիանգեցնի ժողովրդավարության և ժողովրդական իշխանության խարարման<sup>11</sup>:

Իշխանությունների տարանջատման տեսությունն անցել է հասարակական-քաղաքական մտքի զարգացման երկարաւուն ճանապարհ: Սադմնային վիճակում այն արտացոլվել է դեռևս հին հունական փիլիսոփաների աշխատություններում, իսկ որպես ժողովրդավարական պետության հիմ-

9 ԱՄՆ Սահմանադրությունը իշխանությունների տարանջատման սկզբունքը որպես այդպիսի չի ամրագրում, այն պարզապես բխեցվում է Սահմանադրության առաջին երեք հոդվածների բովանդակությունից, որոնք իշխանության երեք քետի իրականացումը բաշխում են երեք տարրեր ինստիտուտների միջև:

10 Ըստ Համաշխառության օգոզրենու, N 2 (47), 2004, էջ 72-73: Լատվիայի սահմանադրական դատարանն իր 2002 թվականի գեկտեմբերի 24-ի որոշման մասնանշում էր, որ իշխանությունների տարանջատման սկզբունքը չի նոյնանու մերկայացուցական մարմիններին գործադիր մարմինների հաշվետու լինելու սկզբունքի (Zin., 2003, №19-828): Ընդ որում, եթե վերշին կիրատելի է ինչպես պետական, այսպես է տեղական իրենականավարման մարմինների նկատմամբ, ապա իշխանությունների տարանջատումը՝ միայն պետական իշխանության նկատմամբ:

11 Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, պատ. Խմբ. Ն. Այվազյան. Երևան 2007, էջ 150-151:

## ՎԵՐԼՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

նարար բաղադրիչ ու ամբողջական տեսություն ձևավորվել է 17-18-րդ դարերում: Այն իր դասական ձևակերպումն է ստացել անգլիացի փիլիսոփա Ջոն Լոկի և Փրանսիացի իրավաբան Շարլ Լուի Մոնտեսքյոյի աշխատություններում<sup>12</sup>:

Ըստ Լոկի, մարդու հիմնական իրավունքներն ապահովելու նպատակով անհրաժեշտ է սահմանափակել քաղաքական իշխանությունը՝ այն բաժնելու միջոցով։ Ընդ որում, Լոկը գտնում էր, որ օրենսդիր իշխանությունն ավելի բարձր է իր կարգավիճակով, քան իշխանության մյուս երկու թևերը<sup>13</sup>։ Իշխանության ճյուղերի համակարգում նախապատվությունը տալով օրենսդիր իշխանությանը՝ մտածող գտնում էր, որ չկան պետություններ, որոնք ամբողջովին երաշխավորված լինեն քոնապետության վերածվելու վտանգից, իսկ նման իրավիճակներում «անօրինական և անարդարացի» ուժի դեմ ժողովուրդը ևս իրավունք ունի ուժ կիրառելու, քանի որ պետության ինքնիշխանությունը ստորադասվում է ժողովրդի ինքնիշխանությանը<sup>14</sup>։

Զոն Լոկի տեսությունն իր տրամաբանական ավարտին հասցրեց Շարլ Լուի Մոնտեսըյոն: Նա առավել մեծ նշանակություն էր տալիս փոխադարձ զապումների ու հակակշիռների համակարգի ձևափորման հիմնախնդրին: Հստ Մոնտեսըյոյի, անհատի ազատությունը կարող է ապահովված լինել միայն այն պետությունում, որտեղ առկա է իշխանությունների տարանջատումը: Հստ այդմ էլ Մարդու և քաղաքացու իրավունքների 1789 թվականի ֆրանսիական հռչակագրի 16-րդ հոդվածն ամրագրում է՝ «Այն հասարակությունը, որտեղ իշխանությունների տարանջատում չի անցկացվել, չունի Սահմանադրություն»<sup>15</sup>: Հստ Մոնտեսըյոյի, իշխանության շարաշահումները բացառելու համար անհրաժեշտ է այնպիսի համակարգ, որի պայմաններում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները լինեն բաժանված և փոխադարձաբար զավեճ միմյանց: Այդ իշխանությունները պետք է լինեն ինքնուրույն և հավասարակշռեն մեկո մլուսին<sup>16</sup>:

Այսպիսով, Լոկը իշխանությունների քաժանումը մեկնաբանում էր որպես այդ իշխանությունների միջև համազործակցություն՝ օրենսդիր իշխանությունը գործադրությունը առաջարկությունը և այլն:

12 Այստեղ տեղին չէ ամրողությամբ շարադրել իշխանությունների տարանջատման տեսությունը, մենք պարզապես կանո-րադարձնամբ այլ տեսության հիմնադրություններին:

13 Джон Локк. Избранные философские произведения. М. 1960, §.2, № 85-86:

15 Французская Республика. Конституция и законодательные акты, № 29:

<sup>16</sup> Ш. А. Монгескье. Избранные произведения. Москва 1955, кн. 294-296. Упомянутая им книга не была издана в России.

## ԳԵՐԼՈՒԾՎԱՆ ՆՅՈՒԹԵՐ

խանության գերակայության պայմաններում, իսկ Մոնտեքյոն շեշտադրումը կատարում էր այդ իշխանությունների հավասարակշռման, նրանցից յուրաքանչյուրի անկախության և տարանջատման վրա:

Լոկի և Մոնտեքյոնի առաջ քաշած տեսությունը ստացավ իշխանությունների տարանջատման կազմակերպարավական կոնցեպցիա անվանումը, որի դեմ համեստ եկավ ֆրանսիացի մեկ այլ մտածող Ժան-Ժակ Ռուտոն: Վերջինս մերժում էր այդ տեսությունը սոցիալական դիրքերից: Ըստ Ռուտոյի, քանի որ ինքնիշխանությունն անօտարելի է ու անբաժանելի, ժողովուրդը որպես ինքնիշխան, որպես ընդհանուր կամքի կրող և արտահայտող, կարող է ներկայացվել միայն ինքն իրենով, իսկ փոխանցվել կարող է իշխանությունը, բայց ոչ երբեք կամքը<sup>17</sup>: Դրանով իսկ Ռուտոն մերժում էր իշխանության ներկայացուցչական ձևը և պետության ներսում ինքնիշխանության՝ տարբեր իշխանությունների բաժանման սկզբունքը և գաղափարը: Այսպիսով, իշխանությունների տարանջատման սկզբունքին Ռուտոն հակադրում էր պետական մարմինների գործառույթների տարանջատման գաղափարը<sup>18</sup>:

Ժամանակի ընթացքում տեսության մեջ տեղի ունեցավ այս երկու հակադիր մոտեցումների (կազմակերպարավականը՝ իշխանության թևերի մասին, և սոցիալականը՝ ժողովովի իշխանության մասին) միաձուլում. ԱՄՆ 1787 թվականի Սահմանադրության մեջ իրենց արտացոլումը գտան երկու մոտեցումներն էլ միաժամանակ<sup>19</sup>: Այդ մոտեցումը հետագայում արտահայտվեց նաև աշխարհում ընդունված Սահմանադրությունների մեծ մասում<sup>20</sup>:

Ժամանակակից պայմաններում իշխանությունների տարանջատման տեսության յուրօրինակ մեկնաբանություն է տալիս անզիացի քաղաքագետ Մ.Վայլը: Նա սահմանափակվում է միայն օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջև փոխհարաբերությունների ձևականիրավանական հետազոտությամբ և միաժամանակ ուսումնասիրում է իրավական, սոցիալական և քաղաքական ինստիտուտների փոխհարաբերությունները: Առավել լուրջ և բարդ խնդիրների լուծումը և պետության ու հասարակության միջև հավասարակշռության ապահովումը նա տես-

17 Ж. Ж. Руссо. Об общественном договоре или о принципах политического права. Москва 1938, т. 42: ժողովովի ինքնիշխանության Ռուտոյի դրվագում էր ինպերատիվ մանդատի առկայություն, ինչն իր հերին բացառում էր անկաս օրենսդիր իշխանության գործույթում: Տես նաև՝ «Հրանտ Շահնշահի կոնստիտուցիոն օճառք»:

18 Հ. Գրիգորյան. «Ժան-Ժակ Ռուտոյի ժողովրդաբնիշխանության ուսմունքը և իրավաստեղծագործության արդի հիմնախնդիրը»: //Օրենք և իրականություն. N 9, 2008, էջ 22:

19 Ա. Ռանո. Նշված աշխատությունը, էջ 80: Մելիքոնի կարծիքով, եթե պետական մարմինների համակարգը կառուցվի այնպես, որ նրանցից յուրաքանչյուրն ի վճարվի լին հզրանալու միայն ի հաշիվ մյուսի, ապա նրանցոց յուրաքանչյուրը կիետուի մյուսի գործողություններին՝ հակաշենքը ու զայելով նրան:

20 Իշխանությունների նույնագործության մասմադրասկն, իշխանության վեց ճյուղ: Այժմի 1976 թվականի Սահմանադրությունը, մասմադրասկն, իշխանության վեց ճյուղ: Ավելի նույնագործության տես՝ Բ. Ե. Կորկու. Կոնտրոլառ ռալամբ. //Գույացարտություն և ուսումնական համակարգը մեջ իրմանակարգը և կազմակերպում է մյուսին, ապա խոսր ոչ թե իշխանությունների տարանջատման, այլ միասնությամ մասին է: Տարանջատման հնարավոր է մեկ բարձրագույն իշխանության կողմից հիմնադրված իշխանության տարբեր ճյուղերի միջև լիազությունների առանձնացման առումով: Տես՝ «Հրանտ Շահնշահի կոնստիտուցիոն օճառք»:

նում է պետության ներ սահմաններից դուրս՝ ողջ քաղաքական համակարգի կազմակերպման և բնականուն գործունեության շրջանակներում<sup>21</sup>:

Հաճախ, իշխանությունների տարանջատումն ընկալվում է բավականին նեղ իմաստով՝ նույնացնելով այն լիազորությունների տարանջատման հետ: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այս սկզբունքը սերտորեն փոխկապակցված է նաև սահմանադրականության ինստիտուտի հետ, որը հասարակական համերաշխությամբ պայմանավորված պետական իշխանության սահմանափակումն է<sup>22</sup>: Ըստ Վ.Զորկինի, սահմանադրական դատարանի գործունեության ոլորտում իշխանությունների տարանջատման սկզբունքը կարելի է դիտարկել երկու փոխկապակցված ասպեկտով: Մի կողմից՝ սահմանադրական դատարանը, որպես Սահմանադրության պաշտպանության գործառույթ իրականացնող մարմին, պաշտպանում և մեկնաբանում է նաև սահմանադրական կարգի հիմունք հանդիսացող իշխանությունների տարանջատման սկզբունքը, իսկ մյուս կողմից՝ սահմանադրական արդարադատության պետական իշխանության իրականացման գործընթացի մի մասը հանդիսանալու հանգամանքն, իր հերթին, բերում է նրան, որ սահմանադրական դատարանը՝ որպես դատական իշխանության մարմին, ևս գտնվում է իշխանությունների տարանջատման առկա համակարգում<sup>23</sup>:

Իշխանությունների տարանջատման տեսությունն ամենին չի նշանակում իշխանության տարբեր ճյուղերի միջև զրբաժանի անցկացում։ Դա հնարավոր չէ նաև այն պատճառով, որ այդ իշխանություններն, ի վերջո, միասնական պետական իշխանության մաս են կազմում և փոխհամագործակցում միմյանց հետ։ Օրենքներն ընդունում է օրենսդիր իշխանությունը մարմնավորող պառլամենտը<sup>24</sup>, սակայն, հաճախ, պառլամենտի գործունեության ոլորտ կարող են թափանցել նաև սահմանադրական դատարանները, որոնք պառլամենտի ընդունած օրենքները կարող են ճանաչել հակասահմանադրական։ Իր հերթին պառլամենտը կարող է իրականացնել գործադիր իշխանության որոշ գործառույթներ<sup>25</sup>։ Պառլամենտն իրականացնում է նաև դատական իշխանության որոշ գործառութեներ, մասնավո-

21 M. G. Vile, *Constitutionalism and separation of powers*, Oxford, 1967, § 3-8;

22 Конституционное правосудие. Выпуск 4 (38) 2007, № 51:

23 Конституционное правосудие. Выпуск 2 (40)-3 (41) 2008, № 27:

23 Հայության պատճենագիրը, 2005. Ենթադր. կազմ. 2005, էջ 27.

24 Հայ երկրաբան դպրության նմուշ պատվիրակված (դիմեցազման) օրենսդրության ինստիտուտը, երբ պատվամենտի շնորհած լիազորության ուժով գործադրի իշխանության նարմաններն ընդունում են օրենքի ուժ ունեցող ակտեր՝ օրենսդրական դեկրետների (Խաղաղի) կամ օրենքի ուժ ունեցող ակտերի (Ֆրանչա) տարբար։ *Տես՝* Հրանութեանու հոգածականության պարագաները։ Օրե. թե. Բ.Ե. Կարսկ, էջ 241։ Որու երկրաբան ուղղակիրքն արգելվում է դեկրետաված օրենսդրության պահպանիկան։ *Տես օրինակ՝* Լատվիայի սահմանադրավան դատարանի 1999 թվականի հունիսի 3-ի որոշում (Zin., 1999, №50-1624)։ Նաև արականիկան բացառիկ նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական վերջին փոփոխություններում։

25 Այստեղ Անախ ունեմք Սեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում տարածում գտած մասնավոր օրենքների ընտանան պարակի կամ: ԱՄՆ Կոնգրեսը և նախանձների օրենսդիր մարմինները կարող են ժամանակ առ ժամանակ ընդունել կողմնական դրույթներ: Սեծ Բրիտանիայում մասնավոր օրենքները կազմում են բնիհանոր իրավունքի օրենտարկան ամսերի մեծ մասը, որորն իմանական ոլովքա էն իշխանության տեղական մարմիններին հասուն իրավունքներով օժտելով: Ավելի մարդասան տևս՝ **Ա.Ռամա**, Նվազա աշխատությունը, էջ 99:

## ՎԵՐԼՈՒԲԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

բապես՝ համաներման իրավունքի իրականացումը և պետական բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ պաշտոնանկության (հմայիչմենտի) գործընթաց հարուցելը:

Սակայն, իշխանությունների փոխհամագործակցությունից քացի, առկա է նաև այդ իշխանությունները զապելու և հակակշռելու հիմնախնդիրը: Անհրաժեշտ է պետական իշխանությունը ոչ միայն տարանջատել, այլև զապումների ու հակակշռների համակարգի միջոցով մի իշխանությունը հավասարակշռել մյուսով, որի արդյունքում իշխանություններից ոչ մեկը չի լինի անվերահսկելի, իսկ այդ իշխանության իրականացումը՝ կամայական: Որպեսզի մի իշխանությունը զայի մյուսին, հետևաբար՝ քաղաքական ազատություններն առավել երաշխավորված լինեն, անհրաժեշտ է, որ այդ իշխանությունը տարանջատվի, իսկ այդ համակարգում պետական մարմինների գործողությունների վերահսկողության գործառույթը վերապահված լինի դատարաններին: Այս առումով Սահմանադրությունն ավելին է, քան պետական մարմինների միջև իրավասությունները տարանջատող մի փաստաբույր<sup>26</sup>:

Սիամանանակ, պետք է նշել, որ եթե իշխանությունները հստակ տարանջատված են ըստ իրենց ոլորտների, ապա նրանք չեն կարող հավասար լինել: Իշխանության ճյուղերի միջև հավասարություն ասելով՝ հասկանում ենք հավասար իրավաբանական ուժով օժտված նորմերի ընդունման իրավասության առկայություն և այդ իրավասության իրականացման հավասար հնարավորություն: Տվյալ դեպքում, նման իրավասության առումով, իշխանության ճյուղերի միջև տարբերությունը կամ նորմաստեղծման ընթացակարգում է, կամ նյութական-բովանդակային ոլորտում, կամ՝ երկուսում էլ միաժամանակ:

Ըստ Վ. Զորկինի, իշխանությունների տարանջատումը ենթադրում է մի շաբթ պարտադիր նախապայմաններ՝ սահմանադրական երաշխիքների, զապումների ու հակակշիռների համապատասխան համակարգի առկայություն, իսկ այդպիսի համակարգն, իր հերթին, բացառում է իշխանության կենտրոնացումը, ապահովում է նրանցից յուրաքանչյուրի անկախությունն ու ինքնուրույնությունը, նրանց միջև համապատասխան համագործակցությունը<sup>27</sup>: Իշխանության թևերից յուրաքանչյուրը պետք է օժտված լինի գործառնական անկախությամբ, իսկ նրանց լիազորությունները պետք է ամբողջական լինեն և ներդաշնակեն իրենց գործառույթներին, այսինքն՝ լինեն անհրաժեշտ և բավարար իրենց առջև դրված խնդիրներն և իրենց սահմանադրական գործառույթներն իրականացնելու համար:

26 Ж. Жакке. Конституционное право и политические институты. Москва 2002, кг 90: 9 відео, 1803 рифлайзің тұмсақынан әмбасарғаң жаңаралғы үйнелдік үрнектің орталынан орталынан һақасашынан ашылғандаң әмбасарғаң үшін. 9-кітаптың 11-ші жаңаралғы үйнелдік үрнекінде: Ашылғандаң үшін. А.Шашов. 12-кітап да жаңасаптегімдер. кг 78-79;

27 Конституционное правосудие. Выпуск 2 (40)-3 (41) 2008, № 28-29:

Սահմանադրականության գաղափարը ենթադրում է պետական իշխանության իրավական հնարավորությունների սահմանափակման անհրաժեշտություն, ասկայն դա չի կարող ընկալվել բացարձակ իմաստով։ Այս սկզբունքի մեկնաբանումն ամենակին էլ չի կարող նշանակել, որ իշխանության թևերից որևէ մեկը չի կարող իրականացնել գործառություններ, որոնք պարունակում են իշխանության մեկ այլ թևի գործունեության տարրեր։ Սա հիմնականում վերաբերում է գործադիր իշխանությանը, քանի որ օրենսդիր և դատական իշխանության պարագայում Սահմանադրությունները, որպես կանոն, այդ իշխանությունների իրականացումը վերապահում են բացառապես որպահ համար ստեղծվող մարմիններին<sup>28</sup>:

Իրականում դժվար է պատկերացնել պետական մի մարմին, որն օժիված չինի գործադիր իշխանության գործառույթների տարրեր պարունակող, այսպես կոչված, օժանդակող լիազորություններով (պայմանական ակտեր ընդունելու իրավունք), որոնք կոչված են ապահովելու տվյալ մարմնի բնականոն ու անխափան գործունեությունը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ամեննենին էլ չի բացառում գործադիր իշխանության իրականացումը բացառապես միայն կառավարության կողմից: Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրության 62-րդ հոդվածն ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը, իսկ 91-րդ հոդվածի համաձայն, որը գետեղված է «Դատական իշխանություն» վերտառությամբ 6-րդ գլխում, Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան<sup>29</sup>:

Իշխանությունների տարանջատման սկզբունքից բխում է նաև հետևյալ՝ եթե Սահմանադրության մեջ պետական իշխանության որոշակի ինստիտուտի ուղղակի վերապահված է որոշակի լիազորություն, ապա այդ ինստիտուտն իրավասու չէ իրաժարվելու այդ լիազորության իրականացումից կամ փոխանցելու այն մեկ այլ ինստիտուտի կամ մարմնի: Ընդ որում, Սահմանադրությունը չի բացառում նաև իշխանության թերից ոչ մեկին շպատկանող պետական մարմինների գոյությունը, ավելին՝ այդպիսի մարմինների գոյությունն առավելապես կարևորվում է հենց իշխանությունների հավասարակշռման առումով: Ի վերջո, իշխանությունների տարանջատման սկզբունքի էությունը կայանում է ոչ թե նրանում, որ այս կամ

28 A. Շանօ. Նշված աշխատությունը, էջ 20:

28. Установка, ее функции и задачи в управлении, с. 20.

29. Липсваж Ушамбашинитпрежаан 5-ти липтвади башмадайын, үфенсалыкабан իжлиниитпрежеан бирасынашынди таң Ушырь, Հանրապետикпрежаан նախасында и կառավարитпрежеан, դистаралынди таң: Այս һептвади սահմանитմէ է պետական իշխанитпрежаан ինсанитпрешеан և ոչ թէ իշխанитпрешеан ձորվեր: Սակայն Լիմпվյան սահմանադրական դատարանն իր որոշումներով արդեն մատանշում է, թէ իշխанитпрежаан որ թիւն են նրանք պատկանում Հանրապետикпрежаан նախագահին ընթացկեղով գործադիր իշխанитпрежаан հանձնարկում (իրու ենթանитпрежеан բարևացած այսպէս կոչված, պրախиспакында գործադիր իշխанитпрежаан): Стат. Сравнительное конституционное обозрение, N 2 (47), 2004, էջ 71:

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

այն գործառույթն իրականացվի բացառապես որոշակի պետական մարմանի կողմից, այլ որպեսզի ապահովվի պետական մարմինների համակարգի ինքնուրույն գործունեությունը՝ բացառելով անհարկի միջամտությունը և ապահովելով անհրաժեշտ հավասարակշռությունը նրանց միջև:

Բացի այդ, իշխանությունների տարանջատման սկզբունքի հույժունից բխում է, որ իշխանության ճյուղերից յուրաքանչյուրի բնութագրական, էական և հիմնական գործառույթները կարող են իրականացվել պետական մեկ մարմնի կամ պետական մարմինների մեկ միասնական համակարգի կողմից, իսկ մյուս մարմինները կարող են օժտված լինել միայն առանձին, ոչ էական գործառույթներով։ Չպետք է մոռանալ, որ իշխանությունների տարանջատման սկզբունքի հեղինակներ Զ. Լոկի և Շ. Սոնտեսքյոյի ժամանակաշրջանում գոյություն չուներ պետական մարմինների այսքան բարդ համակարգ, որքան ժամանակակից երկրներում<sup>30</sup>:

Իրավունքի և քաղաքականության հակադրումը իշխանությունների տարանջատման տեսության վերաբերյալ քննարկումների ժամանակ ձեռք է բերում մեծ կարևորություն և հանգեցնում է երկու հակադիր՝ իրավաբանական և քաղաքագիտական մոտեցումների ձևավորման։ Խնդրի բարդությունն այն է, որ մի կողմից փորձ է արվում իշխանությունների տարանջատման հիմքում ընկած քաղաքական հիմնախնդիրները դիտարկել խիստ իրավաբանական մոտեցմամբ, իսկ մյուս կողմից, խնդրի ոչ իրավական ոլորտին մեծ նշանակություն տվող գիտնականներն ընդգծում են դատարանի քաղաքական բնույթը՝ անուշադրության մասնելով նրա իրավական քաղադրիչը, որի արդյունքում դատարանը որակավորվում է որպես «քաղաքական ինստիտուտ», իսկ սահմանադրական արդարադատությունը՝ որպես «այլ անվանման տակ իրականացվող քաղաքականություն»<sup>31</sup>:

Այս պայմաններում իշխանությունների տարածատման վերաբերյալ գործերով դատական որոշումները գտնվում են լուրջ կախվածության մեջ քաղաքական իրավիճակից: Բնականաբար, որոշումների ընդունման չափորոշիչների հստակ և սկզբունքայնորեն որոշված ցինելու պայմաննե-

<sup>30</sup> Н.М.Азаркин. Всебашаисторияюриспруденции. - М. 2003, № 334-338: Створіть юрисконсультації юридичного обслуговування та юридичного консультації юриста. Актуальні проблеми юриспруденції та юридичного обслуговування. - К.: Юрист, 2003. - № 4 (7), 2004, № 4 (7). - Статті: Справництво юриста в юриспруденції. - Статті: Справництво юриста в юриспруденції.

31 Հետաքրքրական է իշխանությունների տարածաշատամ սկզբանուրի վերաբերյալ ԱՄՆ Գեղաքանակի դատավաճան պարագիկան, որը դասվում է «ասմանադրական իրավունքի առավել լածված և հակասական ոլորտների թվին»: Սանանդրապահն, Youngstown Sheet & Tube Co. v. Sawyer, 343 US 579 (1952) գրողն Քերարյան դատավաճ դեմքնանի հաստի կարծիքում մասնավիրապս ասվում է, որ «եթե Նախագահը քրծում է Կոնդրեփ կողմից իր լիազորություններին հասկանություն տպու բարակայտրայն կամ հավանաբարում չտպու պայմաններում, նա կարող է կենել միայն իր սեփական անկախ իշխանությունից, սակայն գյուրյան ունեցող «անորոշության գոտիում» նրա և Կոնդրեփի լիազորությունները կարող են համեմատել կամ ոչ միանանակ ձևով բաշխվել: Այդ դեպքում Կոնդրեփն անտարեկությունն կամ անփորությունն կարող է փաստացիութեան բոլորատեր կամ խրանել Նախագահի անկախ պատասխանատվության ներք համապատասխան միջոցառումներ ձևանարկելու նրա իրավունքը»: Տես՝ Հրանիտեալու հոգածությունը (Հայաստան), N 2 (47), 2004, էջ 47–48.

րում իրավունքն իր տեղը կարող է զիջել քաղաքականությանը: Այս ամենի արդյունքում ԱՄՆ իրավական պրակտիկայում իշխանությունների տարանջատման վերաբերյալ վեճերի մեծ մասն իրենց լուծումն են ստանում արտադատական կարգով<sup>32</sup>:

Այսպիսով, սահմանադրական վերահսկողություն և հսկողություն իրականացնող բոլոր մարմիններն իրենց գործունեության լմբացքում անմիջականորեն առնչվում են սահմանադրական իիմնական սկզբունքների պահպանման, այդ թվում՝ իշխանությունների տարանջատման, դրանց գործառնական անկախության ապահովման և զապումների ու հակակշիռների մեխանիզմի գործադրման իիմնախնդիրներին: Սահմանադրական վերահսկողության համար առանցքային նշանակություն ունի ոչ միայն իշխանությունների հստակ տարանջատումը և հավասարակշռումը, այլև դրանց գործառույթների և լիազորությունների ներդաշնակումը, գործառնական, հակակշռող և զապող լիազորությունների կայուն հաշվեկշռի ձևավորումը և պահպանումը: Առանց իշխանությունների հստակ տարանջատման և ներդաշնակ համագործակցության, առանց իշխանության թերի միջև հավասարակշռության անհնար է ապահովել պետական իշխանության համակարգի կայուն զարգացումը:

Հետևաբար, իշխանությունների տարանջատման սկզբունքի արդյունավետ կիրառման, զապումների ու հակակշիռների համակարգի բնականոն գործունեության և իշխանության ճյուղերի միջև հնարավոր հակասությունները հարթելու գործում գործնական մեծ նշանակություն ունեն սահմանադրական համապատասխան դրույթների ամրագրումը, պահպանումը և կիրառումը, իսկ այդ առաքելության պատշաճ իրականացումը հնարավոր է սահմանադրական վերահսկողության գործուն և արդյունավետ համակարգի գոյության, սահմանադրական վերահսկողություն և հսկողություն իրականացնող մարմինների միջև հստակ և արդյունավետ համագործակցության պայմաններում: Մյուս կողմից, նման համագործակցության ապահովման առումով էական նշանակություն ունի իշխանությունների տարանջատման սկզբունքի անշեղ կենսագործումը հասարակական պրակտիկայում, զապումների ու հակակշիռների արդյունավետ համակարգի առկայությունը և իշխանության երեք թերերը ներկայացնող պետական մարմինների կամ մարմինների միասնական համակարգի միջև հավասարակշռության և փոխադարձ վերահսկողության ապահովումը, նրանց միջև համագործակցության հնարավոր եղանակների ամրագրումը:

32 Сравнительное конституционное обозрение, N 2 (47), 2004, էջ 78-79: Այս մոտեցման առավել ծայրահեղ ներկայացնություններն առաջարկում են ԱՄՆ Գերագույն դատարանի իրավասության ոլորտից դրսությունը թերել Նախագահի և Կոնգրեսի միջև իշխանությունների տարանջատման վերաբերյալ գործերի թեմությունը՝ նրա իրավասության ոլորտում թողնելով միայն դատական իշխանության անկախության վերաբերյալ հարցերը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-ԻՆ ՅԱԼԹՎՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՎՄՆԱԿԻՑ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
/ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ/ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԴՐԵՐԻ  
ՊԱՏՐԱՎԱՏՄԱՆ ՄՎՄԻ ՀԱՄԱՅՆՎԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**1 ապրիլի 2008 թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թողյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դրեբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց՝ «2007 թվականի մայիսի 25-ին Յալթայում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ներքին գործերի մարմինների /ուստիկանության/ եւ ներքին գործերի համար կադրերի պատրաստման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնափրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետ Հ. Հարույրունյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Քննության առարկա համաձայնագիրն Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների կողմից ստորագրվել է 2007թ. մայիսի 25-ին, Յալթյում նպատակ ունենալով ապահովելու Կողմերի ներքին գործերի մարմինների /ոստիկանության/ եւ ներքին գորքերի համար կադրերի պատրաստման բարձր մակարդակ, որը կպատասխանի ժամանակակից աշխարհի մարտահրավերներին եւ սպառնալիքներին:

Կողմերը կադրերի պատրաստման գործում համագործակցությունն իրականացնում են իրենց իրավասու մարմինների միջոցով, սույն համաձայնագրին համապատասխան, պահպանելով ազգային օրենսդրությունը եւ այն միջազգային պայմանագրերը, որոնց մասնակից են իրենք:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության սկզբունքով, մասնավորապես պարտավորվում է.

- կադրերի պատրաստման գործում համագործակցությունն իրականացնել իրավասու մարմինների միջոցով, որոնց ցանկը որոշվում է յուրաքանչյուր Կողմի կողմից եւ փոխանցվում ավանդապահին,
- մեկ ամսվա ընթացքում գրավոր ծանուցել ավանդապահին իրավասու մարմինների ցանկի մեջ փոփոխությունների մասին,
- կադրերի պատրաստումն իրականացնել ընդունող Կողմի ուսումնական հաստատությունների ուսումնական պլաններով եւ ծրագրերով՝ հետևելով այն սահմանափակումներին, որոնք կապված են ընդունող Կողմի գաղտնի տեղեկատվության եւ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկատվության, գաղտնիության պայմանակարգի ապահովման հետ,
- որպես ընդունող Կողմ՝ ուսումնական գործընթացը կուրսանտների/ունկնդիրների հետ համատեղ եւ առանձին կազմակերպել ոուսաց լեզվով,
- կադրերի պատրաստումն իրականացնել վճարովի հիմունքներով կամ ՀՀ կողմից սահմանվող քվոտաներով՝ արտոնյալ կամ անվճար հիմունքով, ինչպես նաև կատարել արտոնյալ հիմունքով կադրերի պատրաստման ժամանակ ուսուցման ծախսերը:

3. Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի այն իրավունքներն ու պարտավորությունները, որոնք բխում են նրանց կողմից կնքված այլ միջազգային պայմանագրերից:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4. Համաձայնագիրը նախատեսում է վերջինիս դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերի լուծման, տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև ուժի մեջ մտնելու եւ գործողության դադարեցման կարգն ու ժամկետները:

Համաձայնագրի դրույթները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9 հոդվածին, ինչպես նաև կարևոր իրավական երաշխիք են ստեղծում ՀՀ Սահմանադրության 39 հոդվածում ամրագրված իրավունքի իրացման համար:

Ենելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2007 թվականի մայիսի 25-ին Յալթայում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ներքին գործերի մարմինների /ոստիկանության/ եւ ներքին զորքերի համար կադրերի պատրաստման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1 ապրիլի 2008 թվականի  
**ՍՊԸ-742**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԴՈՒՇԱՆՔԵՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՍԱԳՈՐԾՎԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՆՑԱՎՈՐ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ (ԼՎԱՅՄԱՆ)՝  
ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՎՈՐՄԱՆ ԴԻՄԱԳՐԱՎԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ,**

**Քաղ. Երեւան**

**1 ապրիլի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարուբյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի (գեկուցող), Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 5-ին Դուշանբեում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ հանցավոր եկամուտների օրինականացմանը (լվացմանը) եւ ահաքեկչության ֆինանսավորմանը դիմագրավելու մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահ S. Սարգսյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով պայմանագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Պայմանագիրն ստորագրվել է 2007 թվականի հոկտեմբերի 5-ին, Դուշանբեում՝ հանցավոր եկամուտների օրինականացմանը (լվացմանը) եւ ահարեկչության ֆինանսավորմանը դիմագրավելու իրավական հիմքերը կատարելագործելու, հանցավոր գործունեությունից ստացված եկամուտներից եւ հանցագործություններ կատարելու համար օգտագործվող այլ միջոցներից հանցագործներին զրկելու, մասնակից պետությունների ազգային օրենսդրության ներդաշնակեցման, իրավական օգնություն ցույց տալու նպատակով:

2. Պայմանագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է, ՀՀ օրենսդրությանը համապատասխան, որոշել իրենց իրավասության շրջանակներում պայմանագրի իրագործման լիազորություններն իրականացնող իրավասու պետական մարմինների ցանկը՝ դրանում նշելով լիազորված մարմինը, որն իրականացնում է պարտադիր վերահսկողության ենթակա գործարքների եւ կասկածելի գործարքների վերաբերյալ հաղորդագրությունների ստացումը եւ վերլուծումը, ինչպես նաև հանցավոր եկամուտների օրինականացման եւ ահարեկչության ֆինանսավորման հնարավոր դեպքերին առնչվող տեղեկատվության փոխանցումն իրավապահ մարմիններին:

Հայաստանի Հանրապետությունը պետք է նաև կրի ՀՀ տարածքում առաջացած՝ հարցման (հանձնարարության) կատարման հետ կապված ծախսները, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այլ կարգ չի համաձայնեցվում, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի ՀՀ օրենսդրության ներդաշնակեցման համար՝ հաշվի առնելով հանցավոր եկամուտների օրինականացմանը (լվացմանը) եւ ահարեկչության ֆինանսավորման համար միջոցները, կանխել ու խափանել նման եկամուտների եւ միջոցների հետ կապված գործողություններն ու գործարքները, դրանց փոխանցումը կամ այլ ձևով տնօրինումը,

Հայաստանի Հանրապետությունը միաժամանակ պարտավոր է՝

- ընդունել նորմատիվ իրավական ակտեր, որոնք իր իրավասու մարմիններին բույլ են տալիս նույնականացնել, որոնել հանցավոր եկամուտները եւ ահարեկչության ֆինանսավորման համար միջոցները, կանխել ու խափանել նման եկամուտների եւ միջոցների հետ կապված գործողություններն ու գործարքները, դրանց փոխանցումը կամ այլ ձևով տնօրինումը,

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ընդունել նորմատիվ իրավական ակտեր, որոնք իր իրավասու մարմիններին իրավունք են տալիս հանցավոր եկամուտների օրինականացմանը (լվացմանը) եւ ահարեկչության ֆինանսավորմանը դիմագրավելու միջոցների ձեռնարկման համար անհրաժեշտ տեղեկատվություն հայցել,
- ընդունել նորմատիվ իրավական ակտեր, որոնք դրամական միջոցների կամ այլ ունեցվածքի հետ կապված գործարքներ իրականացնող կազմակերպություններին պարտավորեցնում են հանցավոր եկամուտների օրինականացմանը (լվացմանը) եւ ահարեկչության ֆինանսավորմանը դիմագրավելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկել,
- որոշել այն պետական մարմինների ցանկը, որոնք վերահսկողություն են իրականացնում դրամական միջոցների կամ այլ ունեցվածքի հետ կապված գործարքներ կատարող կազմակերպությունների կողմից հանցավոր եկամուտների օրինականացմանը (լվացմանը) եւ ահարեկչության ֆինանսավորմանը դիմագրավելու ուղղությամբ պայմանագրում նշված միջոցների իրագործման նկատմամբ,
- ընդունել նորմատիվ իրավական ակտեր, որոնք սահմանում են դրամական միջոցների կամ այլ ունեցվածքի հետ կապված գործարքներ իրականացնող կազմակերպությունների պատասխանատվությունը տեղեկություններ տրամադրելուց խուսափելու կամ թաքցնելու, ինչպես նաև հանցավոր եկամուտների օրինականացմանը (լվացմանը) եւ ահարեկչության ֆինանսավորմանը դիմագրավելու հետ կապված պարտավորությունները չկատարելու համար,
- ընդունել նորմատիվ իրավական ակտեր, որոնց նպատակն է ապահովել հանցավոր եկամուտների, ինչպես նաև ահարեկչության ֆինանսավորման համար միջոցները բռնագրավումը, ձեռնարկել օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրով արգելված արարքները քրեորեն պատժելի արարք ճանաչելու համար:

Պայմանագրի դրույթների զարգացման նպատակով մասնակից պետությունների իրավասու մարմինները կարող են միմյանց հետ կնքել միջգերատեսչական պայմանագրեր:

Պայմանագրի կիրառման կամ մեկնարանման հետ կապված վիճելի հարցերը մասնակից պետությունների միջև լուծվում են շահագրգիռ կողմերի խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Քննության առարկա պայմանագրով ստանձնած պարտավորությունները լիովին համահունչ են ՀՀ ունիվերսալ միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ նաև «Ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 1999թ. դեկտեմբերի 9-ի Նյու Յորքի միջազգային կոնվենցիայով ստանձնած պարտավորություններին:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

1. 2007 թվականի հոկտեմբերի 5-ին Դուշանբեում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ հանցավոր եկամուտների օրինականացմանը (լվացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը դիմագրավելու մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**1 ապրիլի 2008 թվականի  
ՍՊԸ-743**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 թվականի Հոկտեմբերի 5-ին ԴՈՒՏԱՆՔԵՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ  
ՀԱՎԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԵՎ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՎԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՍՏՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԲՅ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ.**

**Քաղ. Երեւան**

**1 ապրիլի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գելուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախարար Մ. Հարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրսեաց նիստում գրավոր լինեց «2007 թվականի հոկտեմբերի 5-ին Դուշանբեում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցությունում խաղաղության պահպանման հավաքական ուժերի անձնակազմի սոցիալական եւ իրավական երաշխիքների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԵՒՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Անկախ պետությունների համագործակցությունում խաղաղության պահպանման հավաքական ուժերի անձնակազմի սոցիալական եւ իրավական երաշխիքների մասին համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) ստորագրվել է 2007 թվականի հոկտեմբերի 5-ին՝ Դուչանքե քաղաքում:

Համաձայնագրի նպատակն է ապահովել Անկախ պետությունների համագործակցությունում խաղաղության պահպանման հավաքական ուժերի անձնակազմի (այսուհետ՝ ԽՊՀՈՒ անձնակազմ) սոցիալական եւ իրավական պաշտպանությունը, խաղաղության պահպանման գործողություն (ԽՊԳ) անցկացնելու մանդատին համապատասխան իրենց պարտավորությունները կատարելու ժամանակ ԽՊՀՈՒ-ի անձնակազմի անվտանգության եւ պաշտպանության ապահովումն ու ԽՊՀՈՒ-ի անձնակազմի եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական եւ իրավական պաշտպանվածության ուժեղացումը:

Համաձայնագրի դրույթներով կարգավորվում են ԽՊՀՈՒ-ի անձնակազմին եւ նրանց ընտանիքների անդամներին սոցիալական եւ իրավական երաշխիքներ տրամադրելու ֆինանսավորման կարգը, ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ ԽՊՀՈՒ-ի անձնակազմի անդամի գործելու (մահվան) դեպքում նրա ընտանիքի անդամների միանվագ լրացուցիչ նպաստ ստանալու իրավունքը, ԽՊՀՈՒ-ի անձնակազմի համար նախկինում զբաղեցրած պաշտոնների դրամական բավարարման, իրավունքների, երաշխիքների, փոխհատուցումների եւ այլ վճարումների՝ այդ թվում ԽՊԳ-ին մասնակցության ընթացքում հատուկ պայմաններով ծառայության չափանիշներով, պահպանումը եւ այլն:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես.

- Անկախ պետությունների համագործակցությունում խաղաղության պահպանման հավաքական ուժերի անձնակազմի (այսուհետ՝ ԽՊՀՈՒ անձնակազմ) համար սահմանել՝ ըստ նախկին զբաղեցրած պաշտոնների՝ ապրուստի, դրամական միջոցի (միջին աշխատավարձի), իրավունքների, երաշխիքների, փոխհատուցումների եւ այլ վճարումների (այդ թվում ԽՊԳ-ին մասնակցության ընթացքում ծառայության (աշխատանքի) հատուկ պայմաններով) պահպանում,

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ԽՊՀՈՒ-ի անձնակազմի համար սահմանել դրամական վարձատրություն, որի վճարման չափը եւ կարգը հաստատվում է համաձայնագրի Կողմերի որոշմամբ,
- ԽՊՀՈՒ-ի անձնակազմի համար սահմանել վարձատրվող լրացուցիչ արձակուրդ՝ 15 օր տևողությամբ՝ արձակուրդն անցկացնելու վայր ուղևորվելու եւ հետդարձի ժամանակը չհաշված,
- ԽՊՀՈՒ-ի անձնակազմի համար սահմանել՝ ԽՊՀՈՒ-ի զինվորական, ոստիկանական անձնակազմի ծառայության ժամկետի կենսարոշակի հաշվարկի համար հաշվանցում երկարամյա ծառայության մեջ, ԽՊՀՈՒ-ի քաղաքացիական անձնակազմի աշխատանքի ժամկետի կենսարոշակի հաշվարկի համար (պետական (պարտադիր) կենսարոշակային իիմնադրամին ապահովագրական մուծումներ վճարելու պայմանով) հաշվանցում աշխատանքային ստաժի մեջ՝ ծառայության (աշխատանքի) մեկ ամիսը՝ որպես երեք ամիս,
- սահմանել՝ միանվագ նպաստի վճարում ԽՊՀՈՒ-ի անձնակազմին, որը ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ ստացել է խեղումներ (վերքեր, վնասվածքներ, կոնտուզիաներ), հիվանդություններ, որոնք հանգեցրել են ժամանակավոր անաշխատունակության եւ հաշմանդամություն չեն առաջացրել, 5 ամսվա դրամական վարձատրության չափով, իսկ հաշմանդամության առաջացման դեպքում՝ 10 ամսվա դրամական վարձատրության չափով. նշված նպաստը վճարվում է որպես հավելում ուղարկող Կողմի ազգային օրենսդրությամբ սահմանված նպաստների (ապահովագրական վճարների),
- ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ սահմանել բժշկական ապահովում,
- ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ ԽՊՀՈՒ-ի կազմից անձի գոհվելու (մահվան) դեպքում նրա ընտանիքի անդամներին տալ իրավունք հավասար մասնաբաժիններով ստանալու 30 ամսվա դրամական վարձատրության չափով միանվագ լրացուցիչ նպաստ՝ որպես հավելում ազգային օրենսդրությամբ սահմանվածի,
- զոհվածի (մահացածի) մարմնի եւ անձնական իրերի տեղափոխումը հուղարկավորման վայր իրականացնել համաձայնագրի 5 հոդվածով սահմանված միջոցների հաշվին,
- համաձայնագրով նախատեսված սոցիալական եւ իրավական երաշխիքները չտարածել այն անձանց վրա, որոնք ինքնակամ բողել են զորամասը կամ ծառայության (աշխատանքի) վայրը, քրեորեն պատժելի արարք են գործել ԽՊՀՈՒ-ի կազմում առաջադրանքներ կատարելու ընթացքում,

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- որպես ուղարկող Կողմ իրականացնել ԽՊՀՈՒ-ի անձնակազմին եւ նրանց ընտանիքների անդամներին սոցիալական եւ իրավական երաշխիքներ տրամադրելու ծախսերի ֆինանսավորումը՝ ԽՊՀՈՒ ստեղծելու մասին Կողմերի որոշման եւ ԽՊԳ անցկացնելու մանդատի հիման վրա, այն ֆինանսական միջոցների շրջանակներում, որոնք ամեն տարի սահմանված կարգով նախատեսվում են ազգային բյուջեներում համապատասխան նպատակների համար:

3. Համաձայնագիրը բաց է Անկախ պետությունների համագործակցության այլ մասնակից պետությունների միանալու համար եւ ուժի մեջ է մտնում միանալու մասին գրավոր ծանուցումն ավանդապահին հանձնելու ամսաթվից:

4. ԱՊՀ մասնակից պետություններից համաձայնագիրն ստորագրել են Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը (Վերապահումով), Ղրղզստանի Հանրապետությունը, Օւսաստանի Դաշնությունը եւ Տաջիկստանի Հանրապետությունը:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են միջազգային փոխահավետ համագործակցության հաստատման վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 9 հոդվածում ամրագրված սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. Անկախ պետությունների համագործակցությունում խաղաղության պահպանան հավաքական ուժերի անձնակազմի սոցիալական եւ իրավական երաշխիքների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1 ապրիլի 2008 թվականի  
**ՍՊԸ-744**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**1999 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿԱԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ՍԱՈՐԱԳՐՎԱԾ ՕԶՈՆԱՅԻՆ  
ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄՎՄԻՆ ՄՈՆՐԵԱԼԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵԿԻՆՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԿ ՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**1 ապրիլ 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (գեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1999 թվականի դեկտեմբերի 3-ին ստորագրված՝ Օգնային շերտը քայլայող նյութերի մասին Մոնթեալի արձանագրության պեկինյան փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը՝ մուտքագրված 2008 թվականի մարտի 11-ին:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանի գրավոր բացատրություն-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ները, հետազոտելով արձանագրության պեկինյան փոփոխությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Օգնային շերտը քայլայող նյութերի մասին Մոնթեալի արձանագրության պեկինյան փոփոխությունն ստորագրվել է 1999 թվականի դեկտեմբերի 3-ին, ուժի մեջ է մտել 2002 թվականի փետրվարի 25-ին: Օգնային շերտի պահպանության մասին 1985թ. Վիեննայի կոնվենցիային եւ Օգնային շերտը քայլայող նյութերի մասին 1987թ. Մոնթեալի արձանագրությանը Հայաստանի Հանրապետությունը միացել է 1999 թվականին, իսկ Մոնթեալի արձանագրության 1990թ. լոնդոնյան եւ 1992թ. կոպենհագենյան փոփոխություններին՝ 2003 թվականին:

2. Պեկինյան փոփոխությունը, ի հավելումն Մոնթեալի արձանագրությամբ եւ լոնդոնյան ու կոպենհագենյան փոփոխություններով նախատեսված վերահսկվող նյութերի, ընդլայնում է դրանց ցանկը, նախատեսում է վերահսկվող նյութերի նոր խմբեր եւ հստակեցնում դրանց օգտագործման ու արտանետումների կառավարումը (հավելվածներ Ա եւ Գ):

3. Պեկինյան փոփոխությամբ Կողմերը պարտավորվում են, մասնավորապես.

- 2004 թվականի հունվարի 1-ից սկսած՝ սահմանված ժամանակացույցին համապատասխան Ա եւ Գ հավելվածների 1-ին խմբերով նախատեսված վերահսկվող նյութերի (քլորֆոռածխածինների կամ դրանց խառնուրդների՝ ֆրեոնների) սպառման եւ արտադրության ծավալը չգերազանցել տարեկան 2,8%-ը (որոշ դեպքերում՝ մինչև 15%-ը),
- 2002 թվականի հունվարի 1-ից սկսած՝ սահմանված ժամանակացույցին համապատասխան Գ հավելվածի 3-րդ խմբով նախատեսված վերահսկվող նյութերի (բրոմֆլորմեթանի) սպառման եւ արտադրության ծավալը չգերազանցել տարեկան 0%-ը,
- 2004 թվականի հունվարի 1-ից սկսած արգելել Գ հավելվածի 1-ին եւ 3-րդ խմբերով նախատեսված վերահսկվող նյութերի (հիդրոքլորֆոռածխածինների) ներմուծումը կամ արտահանումը Մոնթեալի արձանագրության կոպենհագենյան եւ պեկինյան փոփոխությունների կողմ չհանդիսացնող երկրներից,
- Քարտուղարությանը ներկայացնել հաշվետվություն վերահսկվող նյութերի արտադրության, ներմուծման եւ արտահանման վիճակագրական տվյալների վերաբերյալ:

4. Հայաստանի Հանրապետության համար վերը նշված պարտավորություններն սկսելու են գործել ՀՀ-ի համար Մոնթեալի արձանագրության պեկինյան փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

5. Մոնթեալի արձանագրության պեկինյան փոփոխությամբ Հայաստանի Հանրապետության ստանդնած պարտավորությունները բխում են ՀՀ միջազգային իրավական մյուս պարտավորություններից եւ ՀՀ Սահմանադրությանը համապատասխան (հոդվածներ 3, 10, 42 եւ այլն) կոչված են ըստ միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի ապահովելու մարդկանց կողեկտիվ իրավունքների պաշտպանությունը, շրջակա միջավայրի պահպանությունը եւ վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը եւ այլն:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 1999 թվականի դեկտեմբերի 3-ին ստորագրված՝ Օգոնային շերտը քայլայող նյութերի մասին Մոնթեալի արձանագրության պեկինյան փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**1 ապրիլի 2008 թվականի  
ՍԴ.Ռ-745**



ՀԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ

1997 թվականի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՕՉՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ ՄՈՆՐԵԱԼԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄՈՆՐԵԱԼՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵԶ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ և  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

1 ապրիլի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի (գեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1997 թվականի սեպտեմբերի 17-ին ստորագրված՝ Օգոնային շերտը քայլայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրության մոնրեալյան փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հան-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով արձանագրության մննիքայլյան փոփոխությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Մոնթեալյան փոփոխությունն ստորագրվել է 1997թ. սեպտեմբերի 17-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. նոյեմբերի 10-ին՝ Մոնթեալի արձանագրությամբ կարգավորվող նյութերի ցանկն ընդլայնելու եւ դրանց օգտագործման ու արտանետումների կառավարումը հստակեցնելու նպատակով:

Մոնթեալի արձանագրության մոնթեալյան փոփոխությամբ սահմանվում են վերահսկող միջոցառումներ՝ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը բրոնմեթիլի աստիճանաբար փոխարինումն ապահովելու եւ օգնային շերտը քայլայող նյութերի ներմուծման/արտահանման քվոտավորման համակարգը երկրներում հիմնադրելու համար:

2. Մոնթեալյան փոփոխության տեքստի, ինչպես նաև արձանագրության, լոնդոնյան եւ կոպենհագենյան ուղղումների տեքստերի համադրության արդյունքում Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- մոնթեալյան փոփոխության՝ Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ մտնելուց հետո, մեկ տարվա ընթացքում, արգելել Ե հավելվածում նշված վերահսկող նյութերի ներմուծումը Մոնթեալի արձանագրության Կողմ չհանդիսացող ցանկացած պետությունից,
- մեկ տարի հետո արգելել Ե հավելվածում նշված վերահսկող նյութերի արտահանումը Մոնթեալի արձանագրության Կողմ չհանդիսացող ցանկացած պետություն,
- վերահսկող նյութի համար համապատասխան փուլային վերացման ժամկետի լրանալուց հետո, չնայած արձանագրությամբ ստանձնած Հայաստանի Հանրապետության պարտավորությունները կատարելու նպատակով ձեռնարկած որոշակի քայլերին, տվյալ նյութի արտադրությունը ներքին սպառման համար դադարեցնելու հնարավորության բացակայության դեպքում, արգելել այդ նյութի օգտագործված, վերաշրջանառված և վերամշակված քանակությունների արտահանում՝ բացառությամբ ոչնչացման նպատակով նախատեսված դեպքերի,
- Հայաստանի Հանրապետության համար մոնթեալյան փոփոխության ուժի մեջ մտնելուն հաջորդող երեք ամիսների ընթացքում ստեղծել եւ իրականացնել Ա, Բ, Գ եւ Ե հավելվածներում նշված նոր, օգտագործված, վերաշրջանառված եւ վերամշակված վերահսկող նյութերի ներմուծման եւ արտահանման արտոնագրման համակարգ:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3. Մոնթեալի արձանագրության մոնթեալյան փոփոխություններով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են միջազգային փոխահավետ համագործակցության հաստատման վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 9 հոդվածում ամրագրված սկզբունքներից են ուղղված են ՀՀ Սահմանադրության 10 և 33.2. հոդվածների դրույթների իրականացնանք:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1997 թվականի սեպտեմբերի 17-ին ստորագրված՝ Օգոնային շերտը քայլայող նյութերի մասին Մոնթեալի արձանագրության մոնթեալյան փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1 ապրիլի 2008 թվականի  
ՍԴԱ-746



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ՆԻԽԱ ՂԱԶԱԲՅԱՆԻ ԵՎ ԱՅԼՈՅ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ  
ՎՐԱ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 2-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 159-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, «ԻՆՔՆԱԿԱՄ»  
ԿԱՌՈՒՅՑՎԱԾ ԸԵՆՔԵՐԻ, ԸԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ  
ԶԲՈՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳՎՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ»  
ՀՀ ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ ՀՀ ԴԱՏԱՎԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 94-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ «ԱՎԱՆԴԱԾՈՒ» ԲԱՌԻՑ  
ՀԵՏՈ՝ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ, ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՊՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

4 ապրիլի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողների ներկայացուցիչ Կ. Մեժլումյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Զաղաքացի Նինա Ղազարյանի եւ այլոց դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

վարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի, 159-րդ հոդվածի, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդատու» բառից հետո՝ ամբողջությամբ, եւ 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելով վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ն. Ղազարյանի, Խ. Հովհաննիայանի, Ա. Հարությունյանի եւ Ա. Հովհաննիսյանի՝ 19.11.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի հաղորդումը, դիմողների գրավոր փաստարկները, պատասխանող կողմի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ դատական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաբերքը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998թ. հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

«Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 26-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003թ. հունվարի 31-ին եւ ուժի մեջ է մտել 2003թ. փետրվարի 22-ից: Օրենքի 11-րդ հոդվածին համապատասխան այն ուժը կորցրել է 2005թ. փետրվարի 22-ին:

ՀՀ դատական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007թ. փետրվարի 21-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007թ. ապրիլի 7-ին եւ ուժի մեջ է մտել 2007թ. մայիսի 18-ից:

2. Դիմողները գտնում են, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասը եւ 159-րդ հոդվածը, իրավակիրառական պրակտիկայի կողմից դրանց տրված բովանդակությամբ, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «ավանդատու» բառից հետո՝ ամբողջությամբ, եւ 3-րդ մասը հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 5, 6, 18, 19, 83.5., 91, 97 եւ 98-րդ հոդվածներին:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Մասնավորապես, ըստ դիմողների՝ Երևանի Արարկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի եւ ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ իրենք համապատասխան դատական վարույթում չեն դիտվել որպես շահագրգիռ անձ, ինչի արդյունքում խախտվել են ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված իրենց իրավունքները:

Ինչ վերաբերում է «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին, ապա դիմոնները գտնում են, որ այն, իրավակիրառական պրակտիկայի կողմից տրված մեկնարանությամբ, հակասում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին՝ այնքանով, որքանով անձը զրկվում է պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքն իրականացնելու հնարավորությունից:

Ըստ դիմոդների՝ ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի վիճարկվող դրույթները խախտում են դատավորների անկախության սահմանադրական սկզբունքը:

3. Պատասխանող կողմը նկատի ունենալով, որ «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրել է 2005 թվականին, ուստի հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 47 եւ 60-րդ հոդվածները, միջնորդում է սույն գործի վարույթը՝ «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության մասով՝ կարծել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2008 թվականի հունվարի 1-ից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածն ուժը կորցրած է ճանաչվել, եւ հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 47 եւ 60-րդ հոդվածները, պատասխանող կողմը միջնորդում է սույն գործի վարույթը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի սահմանադրականության մասով՝ կարծել: Պատասխանող կողմը նաեւ գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի եւ ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածներում ամրագրված դրույթների միջև հակասություն չկա:

Պատասխանող կողմի կարծիքով, ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասում կետերով ամրագրված սահմանափակումների թույլատրելիության աստիճանը պետք է կերլուծվի 2-րդ մասի սկզբնամասում ձեւակերպված դրույթի եւ թվարկված կետերի ամբողջության համատեքստում, քանզի, իր կարծիքով, սահմանափակումների թույլատրելիության այդպիսի աստիճանը ՀՀ Սահմանադրության հետ հակասության չի հան-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

գեցնում, այլ, ընդհակառակը, ամրագրելով բուն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքը՝ միաժամանակ թույլատրելի է համարվում բնականոն գույքային շրջանառությանը մասնակցելը՝ առանց ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի (օրինակ՝ բաժնետոմսերի ձեռքբերում): Ընդ որում, այդպիսի մասնակցությունն էլ իր հերթին կրում է սահմանափակ բնույթ՝ այդ թվում ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով:

4. Դիմումում վիճարկվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածն ուժը կորցրել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 28.11.2007թ. ընդունված ՀՀ ՀՕ-277-Ն օրենքով: Բացի դրանից, վիճարկվող 159-րդ հոդվածը գետեղված էր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում, որը ՀՀ սահմանադրական դատարանն իր 28 նոյեմբերի 2007թ. ՍԴՈ-719 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածին եւ 32-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանադրական դատարանի կողմից գործի վարույթը ենթակա է կարծնան, եթե դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշումը:

5. Սահմանադրական դատարանը գործի ուսումնասիրության արդյունքներով գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի վիճարկվող 94-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդատու» բառից հետո՝ ամրողությամբ, եւ 3-րդ մասի նորմերը ՀՀ ընդհանուր իրավասության դատարանների կողմից դիմումների նկատմամբ չեն կիրառվել:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող «...եւ չի կիրառվել» բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետեւանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմից ուշադրությունն է իրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասին եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ անհատական դիմում կարող է ներկայացվել ընդհանուր իրավա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

սուբյան եւ մասնագիտացված դատարաններում դատավարության կողմ հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որեւէ օրենքի դրույթ, որն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60 եւ 32-րդ հոդվածներին համապատասխան՝ գործի քննությունը ենթակա է կարճման, եթե դիմումը չի համապատասխանում նշված պահանջներին:

6. Դիմողների կողմից վիճարկվող՝ «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «... քաղաքացիները կամ իրավաբանական անձինք ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի նկատմամբ իրավունքների ճանաչման նպատակով, ըստ դրանց գտնվելու վայրի, պետք է դիմեն անշարժ գույքի կաղաստը վարող պետական մարմնի տարածքային ստորաբաժանումներ»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետը եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասն անձին իրավունք են տալիս դիմել սահմանադրական դատարան ոչ թե ցանկացած օրենքի, այլ միայն իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցով:

Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցին՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, ապա դիմողներն այս կապակցությամբ ըստ էության բարձրացնում են ոչ թե իրավակիրառական պրակտիկայում ստացած բովանդակությանը համապատասխան նշված դրույթների սահմանադրականությունը որոշելու հարց, այլ այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց:

7. Համաձայն ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի՝ անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, եթե նա խնդիր ունի վերականգնելու իր ենթադրյալ խախտված իրավունքները: Սահմանադրական այս դրույթի իմքում ընկած է այն տրամաբանությունը, որ յուրաքանչյուր դեպքում անձն իր՝ դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, եթե տվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգուվածություն: Սահմանադրական այս դրույթին համահունչ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 2-րդ հոդվածի 1-ին մասը դատարան դիմելու իրավունքը վերապահել է շահագրգիռ անձին, այն է՝ անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են:

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ «շահազրգիո անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, եւ յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս հասկացությունը եւ պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը գործի ելքում ունի իրավական շահազրգովածություն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումում շարադրված փաստարկները, ինչպես նաև դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում են, որ խնդիրը վերաբերում է ոչ թե վկայակոչվող նորմերի սահմանադրականությանը, այլ դատական կարգով բողոքարկման առարկա դարձած առանձին ենթաօրենսդրական ակտերի (մասնավորապես, Երեւանի քաղաքապետի 2005թ. հոկտեմբերի 14-ի թիվ 2191-Ա որոշման, դրա հիման վրա կնքված առուվաճառքի պայմանագրի) օրինականությանն ու օրենքների ճիշտ կիրառմանը, որոնց գնահատման եւ դրանց առնչությամբ որոշում կայացնելու լիազորություն սահմանադրական դատարանը չունի:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի, ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդատու» բառից հետո՝ ամրողությամբ, եւ 3-րդ մասի, ինչպես նաև «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ գրադարանների իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով գործի վարույթը կարճել՝ հիմնվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ մասի, 60 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի եւ 69 հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերի վրա:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

4 ապրիլի 2008 թվականի  
ՍՊ- 747



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆՎԱՐԻ 21-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԵՎ ԿՈՍՈՎՈՅԻ ՈՒԺԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ  
ՈՒԺԵՐԻ ՀՐԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՎԿԵ ԿՈՍՈՎՈՅՈՒՄ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ  
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳՈԽՄԱՐՏՎԿԻ ԿԱԶՄՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ**

**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-Ի ՓՈԽԸՆՔԸ ՆՄԱՆ**  
**ՀՈՒՆՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՎՄՐՎԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԿԱՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀՄՐՅԱ ՈՐՈՇԵԼՈՒ**

**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**8 ապրիլի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրեաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի դեկտեմբերի 19-ին և 2008 թվականի հունվարի 21-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Հունաստանի Հանրապետության միջև Կոստովյի ուժերի գործողությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրաձգային դասակը Կոստովյում Հունաստանի զինված ուժերի գումարտակի կազմում ներգրավելու վերաբերյալ 2003

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԵՒՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թվականի սեպտեմբերի 3-ի փոխըմբռնման հուշագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախարար Մ. Հարությունյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Հունաստանի Հանրապետության միջև Կոսովոյի ուժերի գործողությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրաձգային դասակը Կոսովոյում Հունաստանի զինված ուժերի գումարտակի կազմում ներգրավելու վերաբերյալ 2003 թվականի սեպտեմբերի 3-ի փոխըմբռնման հուշագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունը Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 2007 թվականի դեկտեմբերի 19-ին, իսկ Հունաստանի Հանրապետության կողմից՝ 2008 թվականի հունվարի 21-ին:

2. Հայաստանի Հանրապետության եւ Հունաստանի Հանրապետության միջև Կոսովոյի ուժերի գործողությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրաձգային դասակը Կոսովոյում Հունաստանի զինված ուժերի գումարտակի կազմում ներգրավելու վերաբերյալ փոխըմբռնման հուշագիրը (կից արձանագրությամբ) ստորագրվել է 2003 թվականի սեպտեմբերի 3-ին՝ Կոսովոյի ուժերի շրջանակներում Կոսովոյում հունական առաքելության կազմում հայկական հրաձգային դասակի ներգրավման հետ կապված խնդիրները կարգավորելու նպատակով եւ Հայաստանի Հանրապետության կողմից այն վավերացվել է 2003 թվականի դեկտեմբերի 13-ին:

3. Արձանագրության նպատակն է Հայաստանի Հանրապետության առավել ակտիվորեն մասնակցությունը միջազգային խաղաղապահ առաքելություններին եւ կայունացման գործընթացին:

Նկատի ունենալով միջազգային խաղաղապահ առաքելություններին եւ կայունացման գործընթացին առավել ակտիվորեն մասնակցելու Հայաստանի Հանրապետության ցանկությունը, ելնելով Կոսովոյում Հունաստանի զինված ուժերի գումարտակի կազմում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի եւս մեկ հրաձգային դասակ ներգրավելու անհրաժեշ-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տուրյունից, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես՝

- Կոստոյում Հունաստանի զինված ուժերի գումարտակի կազմում գտնվող մինչեւ 30 հոգի ունեցող հայկական հրաձգային դասակը փոխարինել նվազագույնը 70 զինծառայողից բաղկացած հայկական վաշտով:

Արձանագրությամբ Փոխըմբռնման հուշագրից հանվել է հետեւյալ դրույթը.

«Եթե Կողմերը որեւէ հայցապահանջի առնչությամբ փոխադարձաբար որոշում են, որ վճար, կորուստը, մարմնական վճասվածքը կամ մահը պատճառվել են միայն Կողմերից մեկի չմտածված գործողությունների, բացքողումների, պարտավորությունների միտումնավոր չկատարման կամ անփութության հետեւանքով, ապա պատասխանատվության հետ կապված ծախսերը կրում է միայն այդ Կողմը»:

Քննության առարկա արձանագրությունը կազմում է Փոխըմբռնման հուշագրի անբաժանելի մասը:

ՀՀ զինված ուժերի ներկայությունը Կոստոյում համապատասխանում է Հայաստանի Հանրապետության՝ ՄԱԿ-ի շրջանակներում փոխադարձ կողեկտիվ համակարգին մասնակցությանը, ՄԱԿ-ի կանոնադրության պահանջներին, ինչպես նաև այլ միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին:

Ելեկով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Հունաստանի Հանրապետության միջեւ Կոստոյի ուժերի գործողությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրաձգային դասակը Կոստոյում Հունաստանի զինված ուժերի գումարտակի կազմում ներգրավելու վերաբերյալ 2003 թվականի սեպտեմբերի 3-ի փոխըմբռնման հուշագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**8 ապրիլի 2008 թվականի  
ՍՊԸ- 748**



ՀԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ

2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-ԻՆ ՄԱՆԿԱՅՑՈՒՄ ԵՎ

2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ  
ԲԱՆԿԻ ՄՇՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՎՅԱՆԱԳՐՈՒՄ

ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

8 ապրիլի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարուբյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թողյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրեբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի հունվարի 23-ին Մանկայում եւ 2008 թվականի հունվարի 30-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ Ասիական զարգացման բանկի մշտական առաքելության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնափրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ Դ. Ավետիսյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

Քննարկվող համաձայնագիրը նպատակ ունի Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ իրականացնել ԱԶԲ-ի գործառնությունները:

ԱԶԲ-ն ունի իրավաբանական անձի կարգավիճակ եւ, մասնավորապես, իրավասու է.

- ա) կնքել պայմանագրեր,
- բ) ձեռք բերել եւ տնօրինել անշարժ եւ շարժական գույք,
- գ) սկսել դատական վարույթներ:

Համաձայն Կանոնադրության 37 հոդվածի 2-րդ կետի՝ ԱԶԲ-ն կարող է Հայաստանի Հանրապետությունում ստեղծել Մշտական առաքելություն՝ Հայաստանի Հանրապետությունում ԱԶԲ-ի գործունեության արդյունավետ իրականացման օժանդակելու նպատակով:

Մշտական առաքելությունը կզիսավորի Մշտական ներկայացուցիչը, իսկ աշխատակազմում կընդգրկվեն այլ աշխատակիցներ, որոնք կարող են նշանակվել ԱԶԲ-ի կողմից:

Համաձայն սույն համաձայնագրի 2-րդ բաժնի դրույթների՝ ԱԶԲ-ն կարող է զնելու միջոցով կամ այլ կերպ ձեռք բերել հոդ եւ այլ անշարժ գույք, որոնք կարող են պահանջվել Մշտական առաքելության նստավայրի նպատակների, ինչպես նաև Մշտական առաքելության պաշտոնյաների եւ աշխատակազմի ու նրանց ընտանիքների բնակության համար:

Համաձայն Կանոնադրության 50 հոդվածի դրույթների՝ ԱԶԲ-ն եւ նրա ողջ սեփականությունն անձեռնմխելի են դատական ցամկացած հետապնդումից: Անձեռնմխելի են նաև ԱԶԲ-ի արխիվները՝ անկախ գտնվելու վայրից:

Մշտական առաքելության նստավայրում պետք է գործեն Հայաստանի Հանրապետության օրենքները, եւ Հայաստանի Հանրապետության դատարանները պետք է իրավազորություն ունենան Մշտական առաքելության նստավայրում կատարված գործողությունների նկատմամբ:

Ըստ համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետությունը կրում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

1. ԱԶԲ-ի կամ Մշտական առաքելության խնդրանքով Հայաստանի Հանրապետության պատկան մարմինները պետք է տրամադրեն ուստիկանության բավարար թվով աշխատակիցներ՝ Մշտական առաքելության նստավայրում օրենքի եւ կարգ ու կանոնի պահպանման եւ օրինախախտներին այնտեղից հեռացնելու համար:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

2. Կառավարությունը պետք է ԱԶԲ-ին աջակցի ապահովել ծառայություններ, որոնք պահանջվում են Մշտական առաքելության նստավայրը պահպանելու համար այնպիսի պայմաններում, որոնք հարմար են Մշտական առաքելության գործառությների արդյունավետ իրականացման համար:

3. Կառավարությունը խնդրանքի դեպքում պետք է աջակցի ԱԶԲ-ին՝ Մշտական առաքելության պաշտոնյաններին եւ Մշտական առաքելության աշխատակազմին եւ նրանց ընտանիքներին հարմար բնակարաններով ապահովելու համար:

4. ԱԶԲ-ի հրավիրած հանդիպումների ժամանակ կառավարությունը պարտավոր է ապահովել, որ ոչ մի խոչընդոտ չհարուցվի քննարկումների եւ որոշումների կայացման լիարժեք ազատության հարցում:

5. Կառավարությունը պետք է իր դեսպանություններին, դիվանագիտական ներկայացուցություններին, հյուպատոսություններին եւ Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնող ցանկացած այլ գրասենյակի ընդհանուր հրահանգներ տա՝ հարկ եղած դեպքում մուտքի բույլտվություններ տրամադրել սույն համաձայնագրի 27-րդ բաժնում նշված անձանց առանց հապաղման կամ որեւէ վարձի վճարման՝ չպահանջելով նրանց ներկայությունը՝ որպես կանոն:

6. Մշտական առաքելության պաշտոնյանները եւ աշխատակազմը, նրանց ընտանիքները եւ տնային աշխատակազմի անդամները պետք է ազատված լինեն Հայաստանի Հանրապետությունում գինվորական ծառայության պարտավորություններից: Այդ ազատումը չպետք է տարածվի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա:

7. Այն բոլոր դեպքերում, եթե սույն համաձայնագրի Հայաստանի Հանրապետության իշխանությունների համար սահմանում է այլ պարտավորություններ, քան կառավարությունը, կառավարությունը պետք է ապահովի այդ պարտավորությունների կատարումը:

Կառավարությունը եւ ԱԶԲ-ն կարող են մտնել այնպիսի լրացուցիչ պայմանագրային հարաբերությունների մեջ, եթե դրանք կարող են անհրաժեշտ լինել սույն համաձայնագրի շրջանակներում:

Համաձայնագրի դրույթները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9 հոդվածին, ինչպես նաև կարենոր իրավական երաշխիք են ստեղծում ՀՀ Սահմանադրության 39 հոդվածում ամրագրված իրավունքի իրացման համար:

Եվելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Յ**.

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. 2008 թվականի հունվարի 23-ին Մանիլայում եւ 2008 թվականի հունվարի 30-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ասիական զարգացման բանկի միջև Ասիական զարգացման բանկի մշտական առաքելության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**8 ապրիլի 2008 թվականի  
ՍՊԸ- 749**

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ

2006 թվականի դեկտեմբերի 14-ին ԵՎ 2007 թվականի  
ՀՈՒՆԻՍԻ 28-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՄԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ՝ «ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
ԻՐԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓՈՔՐԱԾՎԱԸ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՕԺՎՆԴՎԿՈՒԹՅՈՒՆ» 4895 ԱՐՄ ՆԱՄԿ-ՀԱՄԱՁՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

8 ապրիլի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Կոլկայանի, Հ. Նազարյանի (գենուցող), Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի դեկտեմբերի 14-ին և 2007 թվականի հունիսի 28-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և Ասիական զարգացման բանկի միջև «Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի իրագործելիության ուսումնասիրություն կազմակերպելու համար փոքրածավալ տեխնիկական օժանդակություն» 4895

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ARM նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Ա. Մանուկյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով նամակ-համաձայնագրիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Նամակ-համաձայնագրի նպատակը գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի իրագործելիությունն ուսումնասիրելն է:

Նամակ-համաձայնագրով Ասիական զարգացման բանկը ՀՀ կառավարությանը որպես տեխնիկական օժանդակություն տրամադրում է 150.000 ԱՄՆ դոլար գումար՝ 2007 թվականի հոկտեմբերի 31-ին եւ 2007 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջև «Գյուղական ճանապարհահատվածի ծրագիր (Հատուկ գործառնություններ)» վարկային համաձայնագրով նախատեսված ծրագրի իրագործելիությունն ուսումնասիրելու նպատակով:

2. Նամակ-համաձայնագրով նախատեսվում է այդ աշխատանքները կատարող խորհրդատունների նկատմամբ կիրառել այն առավելությունները, արտոնությունները եւ իմունիտետը, որպիսիք 1965 թվականի դեկտեմբերի 4-ին Մանիլայում ստորագրված՝ Ասիական զարգացման բանկի հիմնադիր համաձայնագրին համապատասխան (ՍԴՈ-560, 29.04.2005թ.) կիրառվում են Ասիական զարգացման բանկի համար առաջադրանքներ կատարող փորձագետների նկատմամբ:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունը համահունչ է արտաքին քաղաքականության բնագավառում բարիդրացիական եւ փոխշահավետ հարաբերություններ հաստատելու վերաբերյալ՝ ՀՀ Սահմանադրության 9 հոդվածում ամրագրված սկզբունքին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ր Ո Շ Ե Յ**.

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. 2006 թվականի դեկտեմբերի 14-ին և 2007 թվականի հունիսի 28-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և Ասիական զարգացման բանկի նիշեւ «Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի իրագործելիության ուսումնասիրություն կազմակերպելու համար փոքրածավալ տեխնիկական օժանդակություն» 4895 ARM նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**8 ապրիլի 2008 թվականի  
ՍՊ- 750**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐՄԵՆ ՀԱՍՏԱՁՅԱՆԻ, ԱԻԴԱ ՔՈՉԱՐՅԱՆԻ,  
ԻՐԻՆԱ ՕԳԱՆԵԶՈՎԱՅԻ, ԱՆՆԱ ԲԱԴԴԱՄՅԱՆԻ ԵՎ  
ԱԳՆԵՍԱ ԲԱԴԴԱՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ  
«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 68 ՀՈԴՎԱԾԻ  
10-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ՊԱՐՔԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ 12-ՐԴ ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ

**Քաղ. Երեւան**

**15 ապրիլի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողներ՝ քաղ. Աիդա Քոչարյանի եւ Իրինա Օգանեզովայի,  
գործով որպես պատասխանող ներքրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր լնիքացակարգով քննեց «Քաղաքացիներ Արմեն Համամշյանի, Աիդա Քոչարյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա Բադդամյանի եւ Ազնեսա Բադդամյանի դիմումների հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության եւ 12-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Արմեն Համամջյանի, Արմա Քոչարյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա և Ազնեսա Բաղդասարյանների դիմումներն են սահմանադրական դատարան, որոնց հիման վրա, դեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածով, մինչեւ դատաքննությունն սկսվելը գործերը միավորվել են դատարանի նույն նիստում քննելու համար:

Ուսումնամիջելով գործով գեկուցողի հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, լսելով պատասխանող կողմի լրացուցիչ պարզաբնումները, հետազոտելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերությունը և 12-րդ մասը ու գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ՊԱՐՁԵՑ.

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հունիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2006 թվականի հունիսի 14-ին և ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 1-ից:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածը վերնագրված է «Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործերի քննությունը Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին, 3, 4 և 8-րդ կետերում նշված մարմինների և անձանց դիմումների հիման վրա (իրավական նորմերի սահմանադրականության վերացական վերահսկողություն), որի 10-րդ մասը սահմանում է. «Վիճարկվող ակտն ամրողությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում այն իրավարանական ուժը կորցնում է սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից, բացառությամբ սույն հոդվածի 12-րդ և 13-րդ մասերով սահմանված դեպքերի»:

Այդ ակտերի վրա հիմնված սահմանադրական դատարանի որոշման ընդունմանը նախորդող ժամանակահատվածում ընդունված են կատարված վարչական կամ դատական ակտերը վերանայման ենթակա չեն:

Չկատարված վարչական են դատական ակտերի կատարումը սահմանադրական դատարանի որոշումը իրապարակելուց հետո անհապաղ դադարեցվում է իրավասու վարչական մարմնի կամ դատարանի որոշմամբ»:

Իսկ 68 հոդվածի 12-րդ մասը սահմանում է. «Սույն հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետում նշված որոշումը սահմանադրական դատարանն իրավասու է տարածելու նաեւ այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, եթե այդպիսի որոշում չընդունելը կարող է հանրության կամ պետության համար առաջացնել ծանր հետեւանքներ»:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Սույն մասի առաջին պարբերությունում նշված որոշմամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմատիվ ակտի, ինչպես նաև այդ ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերի վրա հիմնված՝ սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող երեք տարիների ընթացքում ընդունված եւ կատարված վարչական կամ դատական ակտերը ենթակա են վերանայման վարչական կամ դատական ակտն ընդունած մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով»:

2. Դիմողները սահմանադրական դատարան են ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վերջնական դատական ակտեր հանդիսացող որոշումներ, որոնցով սույն գործով դիմողների նկատմամբ կիրառվել են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության եւ 12-րդ մասի դրույթները, եւ վիճարկում են այդ դրույթների սահմանադրականությունը:

Ըստ վերջնական դատական ակտերի՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, քննելով Ա. Համամջյանի վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի 13.02.2007թ. որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու մասին դիմումը, ինչպես նաև Ա. Քոչարյանի, Ի. Օզանեզովայի, Աննա եւ Ագնեսա Բաղդասարյանների վճռաբեկ բողոքները վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի 05.02.2007թ. եւ 07.02.2007թ. որոշումները նոր հանգամանքի հիմքով վերանայելու դիմումները, իր 02.08.2007թ. եւ 18.06.2007թ. որոշումներով դրանք մերժել է:

Վճռաբեկ դատարանը մերժումը պատճառաբանել է նրանով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241.1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նոր հանգամանքներով վճիռների եւ որոշումների վերանայման համար հիմք է ՀՀ սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտած որոշումը, որով ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչվել այն օրենքը կամ իրավական ակտը, որը կիրառել է դատարանը (տվյալ դեպքում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը, որը սահմանադրական դատարանի 09.04.2007թ. որոշմամբ հակասահմանադրական է ճանաչվել):

Վճռաբեկ դատարանն իր որոշումներով պատճառաբանել է, որ սահմանադրական դատարանի՝ դիմողների կողմից վկայակոչված 09.04.2007թ. որոշումն ուժի մեջ է մտել կայացման պահից, իսկ սահմանադրական դատարանն այն չի տարածել դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, հետեւաբար՝ այն տվյալ քաղաքացիական գործերով որպես նոր հանգամանք չի կարող հանդիսանալ:

Սահմանավորապես, Ա. Համամջյանը 12.11.2007թ. դիմել է սահմանադրական դատարան, գտնելով, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության՝ իր նկատմամբ

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կիրառված դրույքը հակասում է ՀՀ Սահմանադրության 3 և 6 հոդվածների 1-ին և 2-րդ մասերի, 18 և 19 հոդվածների 1-ին մասերի պահանջներին, ուստի խնդրում է այն անվավեր ճանաչել:

Դիմողն իր դիրքորոշումը հիմնավորում է նրանով, որ դրանից առաջ դիմել էր սահմանադրական դատարան՝ խնդրելով անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը, սակայն դիմումը քննության ընթացքում այն պատճառաբանությամբ, որ սահմանադրական դատարանի 09.04.2007թ. որոշմամբ արդեն իսկ քննվել էր սույն հոդվածի սահմանադրականության հարցը:

Դիմողներ U. Քոչարյանը, Ի. Օգանեզովան, Աննա և Ազնեսա Բաղդասարյանները 19.12. 2007թ. դիմել են սահմանադրական դատարան՝ գտնելով, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի՝ իրենց նկատմամբ կիրառված դրույքը հակասում է ՀՀ Սահմանադրության 3, 14.1., 18 և 19 հոդվածների պահանջներին, ուստի խնդրում են այն անվավեր ճանաչել:

Դիմողներն իրենց դիրքորոշումը հիմնավորում են նրանով, որ դրանից առաջ իրենք նախատեսել են դիմել սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետում անվավեր ճանաչելու խնդրանքով, սակայն սահմանադրական դատարանի 09.04.2007թ. որոշմամբ արդեն իսկ լուծվել էր նշված հոդվածի սահմանադրականության հարցը, ուստի դրա հնարավորությունը բացառվեց, քանի որ առկա է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքը:

Դիմողները գտնում են, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության և 12-րդ մասի դրույքները զրկել են իրենց Սահմանադրության 18 և 19 հոդվածների 1-ին մասերի համաձայն իրենց խախտված իրավունքները դատական կարգով վերականգնելու հնարավորությունից:

3. Պատասխանողը գտնում է, որ դիմողների կողմից բերված հիմնավորումներն անհիմն են և դիմումները ենթակա են մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

1) «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի դրույքները, համակարգային առումով փոխսկապակցված լինելով նույն հոդվածի 12-րդ մասի դրույքների հետ, երաշխավորում են Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարումը: Սահմանադրական վերահսկողության այս ձեւի կիրառումը, որը հիմնվում է իրավական ակտի հակասահմանադրականության մասին որոշման ընդունումից հետո ծագող իրավահարաբերությունների վրա տարածելու պայմանի վրա, բխում է Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասում

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ամրագրված նորմի բովանդակությունից, քանի որ ըստ ժամանակի մեջ գործողության հիմքի՝ սահմանադրական դատարանի որոշումները ուժի մեջ են մտնում իրավարակման պահից։ Այս մոտեցումը բխում է նաև Սահմանադրության 42 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներից, քանի որ իրավական ակտն հակասահմանադրական ճանաչելու մասին սահմանադրական դատարանի որոշումը, ըստ էության, հանդիսանում է անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտ եւ, հետեւաբար, այն կարող է հետադարձ ուժ ունենալ, եթե միայն դա նախատեսված է այդ ակտերով։

2) Ըստ պատասխանող կողմի՝ կարեւորելով սահմանադրական դատարանի որոշման հետեւանորդ առաջացող հնարավոր իրավիճակների սահմանադրականության խնդիրը, օրենսդիրը, միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ և 12-րդ մասերի ուժով սահմանադրական դատարանին օժտել է դատական ակտին հետադարձ ուժ տալու հայեցողական իրավագորությամբ։ Բնականաբար, նման որոշումների առկայությունը ենթադրում է վերականգնել մինչեւ որոշման ընդունման պահն առկա հարաբերությունները, բայց ակնհայտ է, որ՝ առանց բացառող պայմանների, սահմանադրական դատարանի ակտին հետադարձ ուժով օժտելը գործնական առումով կարող է հանգեցնել երկրում իրավական անվտանգության խարարմանն ու անլուծելի իրավիճակների առաջացմանը։ Եվ այս տրամաբանությամբ օրենսդիրը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի ուժով սահմանափակել է սահմանադրական դատարանի հայեցողական մոտեցումների շրջանակները, որը նպատակ է հետապնդում ապահովել հանրության եւ պետության օրինական շահերի պաշտպանությունը՝ չպատճառելով էական վճարներ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին։

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս կամ այն վիճարկվող ակտը կամ դրա դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ իր որոշման իրավական հետեւանքները կապվում են ոչ միայն տվյալ ակտի, այլ նաև դրա հիման վրա կայացված դատական կամ վարչական ակտերի իրավական հետեւանքների, այդ ակտերի հիման վրա մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների ապահովման ու պաշտպանության հետ՝ որպես անմիջական գործող իրավունք։ Հետեւաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերությունում եւ 12-րդ ու 13-րդ մասերում ամրագրված դրույթներով կանոնակարգվել են սահմանադրական դատարանի՝ նման որոշումների իրավական հետեւանքներն այն դատական եւ վարչական ակտերի համար, որոնք կա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

յացվել են մինչեւ սահմանադրական դատարանի համապատասխան որշման ընդունումը: Ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության՝ սահմանադրական դատարանի որոշումները, որպես ընդհանուր կանոն, չունեն հետադարձ ուժ եւ չեն տարածվում մինչ սահմանադրական դատարանի որոշման ընդունումը ծագած եւ դատական կամ վարչական ակտերով կարգավորված իրավահարաբերությունների վրա: Ընդ որում, եթե կատարված դատական կամ վարչական ակտերը վերանայման ենթակա չեն, ապա չկատարված վարչական կամ դատական ակտերը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 3-րդ պարբերության՝ ենթակա չեն կատարման եւ դրանց կատարումն անհապաղ դադարեցվում է իրավասու վարչական մարմնի կամ դատարանի որոշմամբ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ եւ 13-րդ մասերը նախատեսում են վերոհիշյալ ընդհանուր կանոնից բացառություններ՝ տարբերակված մոտեցում դրսեւրելով քաղաքացիարավական եւ քրեափական հարաբերություններին: Օրենքի 68 հոդվածի 12-րդ մասով նախատեսված բացառության համաձայն՝ սահմանադրական դատարանի հայեցողությանն է բողնիկած իր որոշումներին հետադարձ ուժ տալու հարցը: Նույն մասը որոշակի սահմաններ է նախատեսում սահմանադրական դատարանի այդ հայեցողության իրացման համար, այն է՝ սահմանադրական դատարանը կարող է իր այս հայեցողությունից օգտվել այն դեպքում, եթե իր որոշմանը հետադարձ ուժ չտալը հանրության կամ պետության համար կարող է առաջացնել ծանր հետեւանքներ: Ինչպես նաև սահմանադրական դատարանի նման որոշման հիման վրա վերանայման ենթակա են այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող միայն երեք տարիների ընթացքում ընդունված եւ կատարված վարչական կամ դատական ակտերը:

Նույն հոդվածի 13-րդ մասով նախատեսված բացառությունը վերաբերում է սահմանադրական դատարանի այն որոշումների հետադարձ ուժին, որոնք Սահմանադրությանը հակասող եւ անվավեր են ճանաչում քրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի վիճարկվող դրույթը: Այս բացառությունը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ քրեական եւ վարչական պատասխանատվություն նախատեսող դատական ակտերն անձի փաստացի վիճակի վրա ազդեցության առումով ունեն առանձնակի նշանակություն: Մասնավորապես, այս դեպքում հաշվի է առնվել անձի նկատմամբ քրեական օրենսգրքով կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքով հարկադրանքի միջոց կիրառելու եւ դրանից բխող հետեւանքների առկայությունը եւ դրանց վերացման իրական հնարավորությունը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ինչպես վիճարկվող դրույթում ամրագրված ընդհանուր կանոնի, այնպես էլ վերոհիշյալ բացառությունների հիմքում ընկած է հետեւյալ տրամաբանությունը. սահմանադրական դատարանի որոշումներին հետադարձ ուժ կարող է տրվել այն դեպքում, եթե դա անհրաժեշտ է որոշակի կենսական շահերի պաշտպանության նպատակով, եւ եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանը, քննության առնելով այդ կենսական շահերի պաշտպանության անհրաժեշտության հարցը, հիմնավորված եւ պատճառաբանված որոշում է կայացնում իր որոշմանը հետադարձ ուժ տալու մասին:

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածն ունի այն բնորոշ առանձնահատկությունը, որ դրանով կանոնակարգվում են իրավական նորմերի վերացական սահմանադրական վերահսկողությանն առնչվող իրավահարաբերությունները: Անհատական դիմումների քննությանը կամ կոնկրետ սահմանադրական վերահսկողությանն առնչվող իրավահարաբերությունները կանոնակարգվում են օրենքի 69 հոդվածով: Սահմանադրական դատարանը գտնում է, որ իհշյալ 69 հոդվածի 11-րդ մասի հերում օրենքի 68 հոդվածի 6-17-րդ մասերին խորությամբ հաշվի չի առել վերացական ու կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակն ու առանձնահատկությունները: Մասնավորապես, դա վերաբերում է սահմանադրական դատարանի որոշման հետադարձության ինստիտուտի առանձնահատկություններին՝ վերացական ու կոնկրետ սահմանադրական վերահսկողության պարագաներում: Եթե նախնական եւ հետազա վերացական սահմանադրական վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում Սահմանադրության գերակայության երաշխավորումը՝ իրավական համակարգում օրենքների եւ այլ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ապահովելու ճանապարհով, ապա անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության դրույթների անմիջական գործողության երաշխավորումն է, մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը: Հետեւաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածի պահանջները հաշվի առնելով, սահմանադրական դատարանը քննության առարկա հարցի վերաբերյալ հստակ իրավական դիրքորոշում կարող է արտահայտել միայն անձի նյութական եւ դատավարական իրավունքների պաշտպանության տեսանկյունից վիճարկվող դրույթները «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 11 եւ 12-րդ մասերի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32 բաժնի (մասնավորապես՝ 20420 հոդվածի) դրույթների հետ համադրության մեջ դիտարկելով միայն:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

6. Սահմանադրական դատարանի կողմից իրականացվող կոնկրետ վերահսկողությանը մասնավորապես բնորոշ է իրավական ակտի սահմանադրականության մասին որոշման տարածումը տվյալ գործին առնչվող իրավահարաբերությունների վրա: Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաև անհատական շահերի պաշտպանության խնդիրը: Այս բնորոշ գծերին համարունչ՝ ՀՀ ներպետական օրենսդրությունը նախատեսել է շահագրգիռ անձի անհատական դիմումի հիման վրա ընդունված՝ սահմանադրական դատարանի որոշման արդյունքում տվյալ դիմողի առնչությամբ կայացված դատական ակտի վերանայման հնարավորությունը, ինչը լիարժեքություն եւ արդյունավետություն է հաղորդում սահմանադրական դատարանում անհատական դիմումի հիման վրա անձի սահմանադրական իրավունքների՝ որպես անմիջականորեն գործող իրավունքների, պաշտպանությանը: Սասնավորապես, օրենքի 69 հոդվածի 12-րդ մասը նախատեսում է դիմողի կողմից վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունվելու դեպքում դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով վերանայելու հնարավորությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության եւ քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածներով սահմանված է սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման կարգը:

Օրենսդրական նման կարգավորումը հնարավորություն է տալիս սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացրած անձին լիարժեքորեն իրացնելու իր իրավունքները եւ ապահովում է սահմանադրական դատարանում անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության արդյունավետությունը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ՀՀ դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախկին 2411 հոդվածի (որն ընդունվել էր ըստ 21.02.07թ. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին») ՀՀ օրենքի եւ ուժը կորցրել ըստ 28.11.07թ. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի կիրառման առնչությամբ ձեւավորվել էր իրավակիրառական պրակտիկա, որը հիմնվում էր վերոհիշյալ 2411 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ««Սահմանադրական դատարանի մասին»» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում» դրույթի մեկնարանության վրա: Ըստ որոշ մեկնարանությունների՝ այդ նախադասությունը հիմք էր տալիս եզրակացնելու, որ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի հիման վրա դատական ակտի վերանայումը եւս հնարավոր է միայն

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

այն դեպքում, եթե սահմանադրական դատարանն օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի ուժով հետադարձ ուժ է տվել իր որոշմանը՝ այն տարածելով այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա: Մինչդեռ այս մեկնարանությունը ոչ միայն անընդունելի է, այլ նաև անհմաստ է դարձնում սահմանադրական դատարանի միջոցով անձի խախտված իրավունքների պաշտպանության գաղափարը, քանզի օրենսգրքի 2411 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վերոհիշյալ նախադասության մեջ ամրագրված «դեպք» բառը ներառում էր ոչ միայն օրենքի 68 հոդվածի 12-րդ մասով նախատեսված դեպքը, այլ նաև օրենքի 69 հոդվածի 12-րդ մասով նախատեսված դեպքը:

7. Վերացական եւ կոնկրետ սահմանադրական վերահսկողության առանձնահատկություններով է պայմանավորված նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ եւ 69 հոդվածի 12-րդ մասերի միջև եղած «անհամապատասխանությունը»: Մասնավորապես, օրենքի 68 հոդվածի 10-րդ մասը սահմանում է ընդհանուր կանոն, որից բացառություն է անում նույն հոդվածի 12-րդ եւ 13-րդ մասերով նախատեսված դեպքերում միայն, այդ ցանկում չներառելով օրենքի 69 հոդվածի 12-րդ մասը: Մինչդեռ օրենքի 69 հոդվածի նշված մասն ամրագրում է, որ օրենքի՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունվելու դեպքում դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման: Այսինքն՝ այս նորմը եւս բացառություն է օրենքի 68 հոդվածի 10-րդ մասով սահմանված ընդհանուր կանոնից, բնորոշ է կոնկրետ վերահսկողությանը, որի մասին, բնականաբար, հիշատակում չեր կարող լինել 68 հոդվածում, որն էլ իր հերթին տարաբնույթ մեկնարանությունների հենարավորություն է տալիս: Եվ եթե ձեւավորված իրավակիրառական պրակտիկայի արդյունքում ընդհանուր իրավասության դատարանների կողմից շարունակվի նախապատվությունը տալ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասին՝ անտեսելով 69 հոդվածի 12-րդ մասի պահանջը, ապա ընդհանրապես անհմաստ կդառնա սահմանադրական դատարան անհատական դիմումներ ներկայացնելը:

8. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ օրենքի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: Սահմանադրական դատարանը, այդ հոդվածին համապատասխան, հարկ է համարում անդրադառնալ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԵՍԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի սահմանադրականության հարցին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ այս դրույթի հիման վրա դատարանների կողմից վերանայվում են միայն այն անձանց առնչությամբ կայացված դատական ակտերը, որոնց դիմումի հիման վրա սահմանադրական դատարանն ընդունել է օրենքի կիրառված դրույթի՝ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում:

Նշված իրավակիրառական պրակտիկայի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի, ինչպես նաև 32 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերի համադրված վերլուծությունը վկայում է, որ այն անձինք, որոնց համար դեռեւս չի լրացել սահմանադրական դատարան դիմելու համար օրենքով սահմանված վեցամսյա ժամկետը, գրկում են սահմանադրական դատարան դիմելու միջոցով իրենց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից:

Վերոհիշյալ իրավակիրառական պրակտիկան արդյունք է նաև նրա, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասում օգտագործված՝ «դիմող» եզրույթի բովանդակությանը տրվել է սահմանափակ մեկնարանություն:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի՝ «Սահմանադրական դատավարության մասնակիցները» վերտառությամբ 44 հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ «Սահմանադրական դատավարության մասնակիցներն են դատավարության կողմերը՝ դիմողը՝ սույն օրենքի 25-րդ հոդվածին համապատասխան՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող մարմինները եւ անձինք»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի համաձայն՝ «Սահմանադրությամբ եւ սույն օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել Սահմանադրության 101-րդ հոդվածով նախատեսված մարմինները եւ անձինք, ընդ որում, Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետում նշված դեպքում սահմանադրական դատարան կարող են դիմել նաև իրավաբանական անձինք՝ Սահմանադրության 42.1-րդ հոդվածին համապատասխան»:

Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, եթե առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Սահմանադրության եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ դրույթներից բխում է, որ այն ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ովքեր Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով կոնկրետ գործով իրավասու են վիճարկել այդ ակտով իրենց նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը, հանարվում են սահմանադրական դատարան դիմելու իրավունքի սուրյեկտներ: Տվյալ դեպքում «դիմող» հասկացությունը պետք է մեկնարանվի լայն իմաստով եւ անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը պետք է օրենսդրութեն երաշխավորված լինի:

9. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետը երաշխավորում է անձի՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, օրենքով այդ իրավունքն իրացնելու համար սահմանվում է վեցամսյա ժամկետ, սակայն, գործնականում ստեղծվում է մի այնպիսի իրավիճակ, երբ մեկ այլ անձի կողմից իր իրավունքների պաշտպանության նպատակով սահմանադրական դատարան դիմելը խոչընդոտում է անձին իրացնելու իր՝ սահմանադրական դատարան դիմելու սահմանադրական իրավունքը: Այսինքն՝ մի անձի իրավունքի իրացումը կանխվում է մեկ այլ անձի կողմից իր իրավունքի իրացման փաստով, ինչի արդյունքում նրանց միջեւ ստեղծվում է նաեւ անհավասար վիճակ:

Սահմանադրական իրավունքների պաշտպանության նպատակով սահմանադրական դատարան դիմելու՝ սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությունը պահանջում է, որպեսզի այդ իրավունքի իրացումը կախվածության մեջ չդրվի տվյալ անձի կամքից անկախ առաջացած որեւէ հանգամանքից: Հետեւարար, յուրաքանչյուր անձ պետք է հնարավորություն ունենա օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում օգտվելու սահմանադրական դատարանի միջոցով տրամադրվող իրավական պաշտպանությունից: Նման հնարավորությունը կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերանայվեն նաեւ այն անձանց առնչությամբ կայացված դատական ակտերը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման եւ տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցով սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջեւ ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 101

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հոդվածի 6-րդ կետով երաշխավորված՝ սահմանադրական դատարան դիմելու անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը։ Դա նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի պահանջն է, քանի որ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս պետք է հաշվի առնեն նաև մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների բույլատրելիությունը, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը։ Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովումը, որոնց օրենսդրորեն հստակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը։

Հետեւաբար, օրենսդիրը պարտավոր է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32 բաժնում սահմանել նոր հանգամանքների հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի հստակ իրավակարգավորում, որը կերաշխավորի անձի՝ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետով ամրագրված՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի, ինչպես նաև Սահմանադրության 19 հոդվածում ամրագրված իրավունքների արդյունավետ իրացման հնարավորությունը։ Անհրաժեշտ է հստակ ամրագրել նաև այն անձանց վերաբերյալ դատական ակտերը վերանայելու օրենսդրական պահանջ, որոնք թեև սահմանադրական դատարանում չեն հանդիսացել դատավարության կողմ, սակայն սահմանադրական դատարանում իրենց գործի քննության հնարավորությունից զրկված են եղել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կամ 5-րդ մասերի ուժով։ Այլապես, սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, ինչպես նաև խախտված իրավունքների՝ սահմանադրական դատարանի միջոցով դատական պաշտպանության իրավունքը կդառնան անհրական եւ երեսութական՝ զորկ լինելով արդյունավետ իրացման հնարավորությունից։

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

10. Սահմանադրական դատարանը նաեւ արձանագրում է, որ համաձայն 28.11.07թ. ընդունված եւ 01.01.08թ. ուժի մեջ մտած «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի, նախկին 2411 հոդվածը փոխարինվել է 20420 հոդվածով, որի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է.

«1. Նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման համար հիմք են՝

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտած որոշումը, որով ամբողջությամբ կամ մի մասով հակասահմանադրական է ճանաչվել այն օրենքը կամ այլ իրավական ակտը, որը կիրառել է դատարանը...»:

Փաստորեն, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը դիտարկում է սահմանադրական դատարանի համապատասխան որոշումները որպես դատական ակտերի վերանայման հիմք՝ անկախ որեւէ հանգամանքից եւ առանց որեւէ բացառության կամ վերապահման։ Մյուս կողմից, շարունակում է գործել այն իրավակիրառական պրակտիկան, երբ քաղաքացիների նկատմամբ «նոր հանգամանքներով վճիռների եւ որոշումների վերանայման» ինստիտուտը չի կիրառվում բոլոր այն դեպքերում, երբ սահմանադրական դատարանը հետադարձություն չի տվել իր որոշմանը՝ անկախ այն բանից, թե վերացական կամ կոնկրետ սահմանադրական վերահսկողություն է իրականացվել։

Վիճարկվող դրույթների եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32 բաժնի (մասնավորապես՝ 20420 հոդվածի) դրույթների համակարգային վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն անձի՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի իրացման արդյունավետության տեսանկյունից կարեւորում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով՝ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի կարգի սահմանումը, որը, նախ՝ չի խաթարի երկրի իրավական անվտանգությունն ու քաղաքացիական շրջանառության կայունությունը, ինչպես նաև լիարժեք հնարավորություն կտա անձին սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերականգնելու հակասահմանադրական նորմի կիրառման արդյունքում խախտված իր իրավունքը։ Բացի վերշարադրյալից, խնդիրը վերաբերում է նաեւ այն բանին, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան բաժնի նոր խմբագրությամբ (20422 հոդված) սահմանադրական դատարանի որոշման հիմքով փաստորեն վերանայման ենթակա են բոլոր այն դատական ակտերը, որոնք օրինական ուժի մեջ են մտել 20 տարուց ոչ վաղ։ Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանադրական դատարանի որոշման ուժը տարածում է 20-ամյա վաղեմությամբ իրավահարաբերությունների վրա։

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՒԽ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ակնհայտ է, որ նշված նորմը հակասում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասին, իսկ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 2-րդ կետի՝ «2. Իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին»: Ըստ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 6-րդ կետի՝ «6. Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին» (տվյալ դեպքում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի դրույթները պետք է համապատասխանեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթներին, շնայած այն բանին, որ ՀՀ Ազգային ժողովը 2007թ. փետրվարի 21-ին փոփոխություն կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2411 հոդվածի 1-ին մասում, շեշտել էր, որ նոր հանգամանքների ինստիտուտը կիրառվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում: 2007թ. նոյեմբերի 28-ի փոփոխությունների արդյունքում օրենսգրքից այս նորմը նույնականացվեց):

Նոյն կանոնն ամրագրված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1 հոդվածի 1-ին մասում. «1. Հայաստանի Հանրապետության դատարաններում... քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով եւ դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով»:

Այլ օրենքներում... պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին, իսկ հակասության դեպքում կիրառվում են սույն օրենսգրքի նորմերը»:

Հաջորդ խնդիրը կայանում է հետեւյալում: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 20420 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը, որի համաձայն՝ «նոր հանգամանքներով վերանայման ենթակա են առաջին ատյանի դատարանների դատական ակտերը», կարող է խոչընդոտներ ստեղծել անձի խախտված իրավունքները սահմանադրական դատարանի որոշման իհման վրա վերականգնելու համար, քանի առանձին դեպքերում անձի խախտված իրավունքների՝ սահմանադրական դատարանի որոշման իհման վրա վերականգնումը կարող է պահանջել վերաքննիչ դատարանի կամ վճռաբեկ դատարանի որոշումների վերանայում: Հաշվի առնելով վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների լիազորությունները՝ հնարավոր են իրավիճակներ, երբ խախտված իրավունքների՝ սահմանադրական դատարանի որոշման իհման վրա վերականգնման համար ընդհանրապես չպահանջվի առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայում, եւ խախտված իրավունքը հնարավոր չինի վերա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կանգնել առանց վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի ընդունած դատական ակտի վերանայման:

Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32 բաժնում համապատասխան փոփոխությունների միջոցով պարտավոր է կարգավորել նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման գործող կարգը՝ այն հաշվով, որպեսզի չխաբարվի իրավական անվտանգությունը, եւ քաղաքացիները լիարժեքորեն կարողանան վերականգնել հակասահմանադրական նորմի կիրառման հետեւանքով խախտված իրենց իրավունքները:

Սահմանադրական դատարանը նման օրենսդրական փոփոխության անհրաժեշտությունը կարեւորում է նաեւ այն տեսանկյունից, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 20420 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթն իրավակիրառական պրակտիկայում կարող է լուրջ խոչընդոտներ հարուցել ոչ միայն սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա անձանց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների վերականգնման կամ պաշտպանության համար, այլ նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա անձանց կոնվենցիոն իրավունքների վերականգնման եւ պաշտպանության, հետեւաբար՝ նաեւ Եվրոպական դատարանի վճիռները կատարելու՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորության բարեխիղճ կատարման համար:

Ելեկով գործի քննության արդյունքներից, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 21-ին եւ նոյեմբերի 28-ին ընդունված օրենքներով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների փոփոխություններն ու լրացումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության եւ 12-րդ մասի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի դրույթները, որոնք համակարգային առումով փոխկապակցված են օրենքի վիճարկվող դրույթների հետ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր այն մասով, որով սահմանափակվում է նոր հանգամանքների

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման և տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջեւ ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**15 ապրիլի 2008 թվականի  
ՍՊԸ-751**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱՊՄԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

«ԼՈՂԻՇԵՆ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆ ՎՐԱ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ  
ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ ԲՆԴՈՒՆՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՖԻ 77 ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՊՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԲՅ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

**Քաղ. Երեւան**

**22 ապրիլի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի և 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դրաբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Լոռիշեն» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթը «Լոռիշեն» ՍՊԸ-ի դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմողի գրավոր փաստարկները, պատասխանող կողմի գրավոր բացատրությունները եւ լսելով վերջինիս լրացուցիչ պարզաբնումները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստարդերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 77 հոդվածը սահմանում է.

«1. Դատարանը, գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա, սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու ռեալում, վերականգնում է բաց թողնված ժամկետը:

2. Բաց թողնված ժամկետը վերականգնելու կամ վերականգնելը մերժելու մասին դատարանը կայացնում է որոշում»:

3. Ըստ վերջնական դատական ակտի՝ «Լոռիշեն» ՍՊ ընկերության դիմումը՝ ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, երրորդ անձ՝ «Պրոմեթեյ-Խիմպրոմ» ՓԲ ընկերության՝ պետական մարմնի անգործությունը վիճարկելու պահանջի մասին քաղաքացիական գործով ՀՀ տնտեսական դատարանի 22.11.2006 թվականին կայացրած վճռի, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 26.06.2007 թվականի որոշմամբ մերժվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 եւ 228.1. հոդվածների հիման վրա՝ վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված դատավարական ժամկետը դիմողի կողմից բաց թողնելու եւ այն վերականգնելն անհարգելի համարելու պատճառաբանությամբ:

4. Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 հոդվածը հակասում է ՀՀ Սահմանադրության 3, 6 (1-ին, 2-րդ եւ 5-րդ մասեր), 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին, քանի որ աշխատանքային օրվա ավարտից հետո մինչեւ ժ. 24:00 դատավարական գործողությունների կատարման անհնարինության պատճառով բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնման պայման չնախատեսելու, ինչպես նաև բաց թողնված այդ ժամկետը վերականգնելու կամ վերականգնելը մերժելու մասին դատա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կան որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու հետեւանքով, չի ապահովում արդարադատության արդյունավետության եւ դրա բավարար մատչելիության իրավական երաշխիքներ:

Դիմողը միաժամանակ գտնում է, որ դատավարական գործողության կատարումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրը՝ աշխատանքային ժամի ավարտից հետո մինչեւ նույն օրվա ժ. 24:00-ն գործնականում անհնար է, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74, 75 հոդվածների եւ վիճակվող 77 հոդվածի կարգավորման պայմանները չեն պարունակում այդպիսի գործողություն կատարելու բավարար իրավական երաշխիքներ:

5. Պատասխանողը գտնում է, որ դիմողի պնդումը հիմնավորված չէ եւ դիմումը ենթակա է մերժման հետեւյալ նկատառումներով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով վճռաբեկ բողոքի կազմման եւ ներկայացման համար սահմանված է բավական երկար ժամանակահատված՝ վեց ամիս, որն ավելի քան բավարար է ցանկացած բարդության գործի ուսումնասիրման եւ բողոքի ներկայացման համար: Բացի դրանից, դիմողի նշած դատավարական ժամկետների սահմանման եւ վերականգնման հիմնահարցն իր կարգավորումն է ստացել նաեւ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 5 եւ 84 հոդվածներում, որոնց եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերի վերլուծությունից բխում է, որ դրանք լրացնում են միմյանց: Հետեւարար, եթե դատավարական գործողությունը պետք է կատարվի հիմնարկում կամ կազմակերպությունում, ապա այդպիսի գործողության կատարման ժամկետը լրացնում է այն ժամին, եթե այդ հիմնարկի կամ կազմակերպության սահմանած կանոններով ավարտվում է աշխատանքային օրը: Խսկ դատավարական բաց թողնված ժամկետի վերականգնման կամ վերականգնումը մերժելու վերաբերյալ դատարանի պատճառաբանված որոշման կայացման պարտադիր պայմանը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144 հոդվածի բովանդակությունից, հետեւարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 հոդվածում դատական որոշման պատճառաբանված լինելու անհրաժեշտության մասին դրույթի ամրագրման կարիքը բացակայում է, եւ այն իր բովանդակությամբ չի հակասում ՀՀ Սահմանադրությանը:

6. ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի (1-ին մաս) եւ 19 հոդվածի (1-ին մաս) համաձայն յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների, ինչպես նաեւ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք, որն ամրագրված է նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6 հոդվածում: Դատավարական ժամկետների ինստիտուտն

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԵՒՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ընդհանրապես կոչված է երաշխավորելու անձանց իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության սահմանադրական վերոհիշյալ իրավունքի արդյունավետ իրացումը: Այն օրենքով կամ դատարանի կողմից նշանակված որոշակի ժամանակահատված է, որի ընթացքում դատարանը, կողմերը եւ գործի մյուս մասնակիցներն իրավունք ունեն (այսուավոր են) կատարելու օրենքով նախատեսված դատավարական գործողություններ: Միաժամանակ, որոշակի ժամկետով այդպիսի գործողությունների կատարման սահմանափակումը դատավարական հարաբերությունների կայունությունը, որոշակիությունը, հստակությունը, դատավարական սկզբունքների պահպանումը, գործով բազմակողմանի եւ օրյեկտիվ քննությունը, ի վերջո, արդարադատության արդյունավետությունն ապահովող եւ անձանց խախտված իրավունքները ողջամիտ ժամկետում վերականգնելու կարեւոր երաշխիք է:

7. Քաղաքացիադատավարական ժամկետների սահմանման եւ կիրառման (այդ թվում՝ նաև գործողությունների կատարման) ընդհանուր կանոնները նախատեսված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-77 հոդվածներով, համաձայն որոնց՝ դատավարական գործողությունները կատարվում են սահմանված ժամկետներում (օրենսդրությամբ, դատարանի որոշմամբ), եւ կարող են կատարվել մինչեւ այդ ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն, որը որպես իրավական ակտով նախատեսված գործողությունը կատարելու ընդհանուր կանոն նախատեսված է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 84 հոդվածի 1-ին մասում:

Միաժամանակ, օրենսդրությամբ կարգավորված է քաղաքացիադատավարական ժամկետների հաշվարկի, դրանք բաց թողնելու դեպքում վերականգնելու ընթացակարգ: Վերականգնման կանոնները որոշված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 հոդվածի 1-ին մասում, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածում (կատարողական թերթը կատարման ներկայացնելու դեպքում), համաձայն որոնց՝ բաց թողնված դատավարական ժամկետը դատարանի որոշմամբ վերականգնվում է հարգելի պատճառների առկայությամբ՝ գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա:

Վերոհիշյալ նորմերի բովանդակությունից հետեւում է, որ դատավարական ժամկետը բաց թողնելու հնարավոր պատճառներն օրենքով օրյեկտիվորեն կանխորոշված չեն, որի պայմաններում դրանք գնահատելու եւ արդյունքում այդ ժամկետի բացքումը հարգելի կամ անհարգելի ճանաչելու (զնահատման չափանիշներ ընտրելու) դատարանի լիազորությունը կրում է հայեցողական բնույթ: Սակայն, ի տարբերություն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածի 4-րդ մասում ամրագրված կանոնի, դատավարական գործողության կատարման բաց թողնված ժամկետը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգր-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

քի վիճարկվող 77 հոդվածի հիմքով վերականգնելու վերաբերյալ դատարանի որոշման բողոքարկման, հետեւաբար՝ այդ ակտի հիմնավորվածությունը (օրինականությունը) վիճարկելու իրավական հնարավորություն նախատեսված չէ, որի սահմանադրականությունը սույն գործի շրջանակներում չի վիճարկվում:

Ի դեպք, քննության առարկա հիմնահարցի վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ դատարանների նախազահների խորհուրդն իր «Դատական ակտերը բողոքարկելու ժամկետների վերաբերյալ օրենսդրության կիրառման դատական պրակտիկայի մասին» 2000թ. թիվ 36 որոշմամբ:

Վերահաստատելով իր 09.04.2007թ. ՍԴՈ-690 որոշման 7-րդ եւ 11-րդ կետերում արտահայտած դիրքորոշումը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական ժամկետները բաց բողնելու պատճառների դատական գնահատման հիմքում պետք է լինեն իրավական չափանիշներ՝ ենելով իրավակարգավորման ընդհանուր սկզբունքներից, բացառելով կամային ու չիմնավորված որեւէ նոտեցում։ Այդպիսի ազատությունը պետք է իրականացվի իրավասու դատարանի՝ օրենքով նախատեսված լիազորությունների շրջանակներում, անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով՝ ՀՀ Սահմանադրության 3 հոդվածում եւ 47 հոդվածի 1-ին մասում ամրագրված հիմնարար սկզբունքների պահպանմամբ։ Հակառակ պարագայում, դատարանը նարդու սահմանադրական իրավունքների՝ որպես անմիջական գործող իրավունքի, ապահովման ու պաշտպանության փոխարեն իր ակտով այդ իրավունքների ուսնահարման պատճառ կարող է դառնալ։ Դրանով է պայմանավորված դատական ակտերի՝ որպես սահմանադրական արդարադատության օբյեկտ հանդիսանալու իրողությունը միջազգային պրակտիկայում։

Ենելով դիմողի առաջադրած հարցադրումներից, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածի հիման վրա ի պաշտոնե պարզելով գործի հանգամանքները, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրությունը նախատեսել է բոլոր հնարավոր լուծումները քննության առարկա հարցով դիմողի սահմանադրական իրավունքների պաշտպանության համար։ Խնդիրը կայանում է նրանում, թե այդ հնարավորություններն ինչպես են իրացվել դատական պրակտիկայում։ Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա գործով դա չի արվել հօգուտ իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման, միաժամանակ արձանագրելով, որ ՀՀ Սահմանադրությամբ դատական ակտերը սահմանադրական վերահսկողության օբյեկտ հանդիսանալ չեն կարող։

8. Անդրադանալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգործի 77 հոդվածի 2-րդ մասի հիմքով կայացված դատական որոշման պատճա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԵՒԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ուստանան պարտադիր պահանջի վերաբերյալ դիմող կողմի պնդմանը, նկատի ունենալով, որ այդպիսի որոշման կայացումը դուրս է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144 հոդվածի կանոնակարգման շրջանակներից, եւ վերահաստատելով 09.04.2007թ. ՍԴՈ-690 եւ 11.04.2007թ. ՍԴՈ-691 որոշումներում արտահայտած իր դիրքորոշումը, սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է ՀՀ դատական օրենսգրքի 21, 48, 50 (4-րդ մաս) եւ 60 (1-ին մասի 1-ին եւ 6-րդ կետեր) հոդվածներով նախատեսված՝ դատական որոշումների պատճառաբանման պարտադիր պայմանների միավերապ կիրառման կարեւորությունը ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների պահանջների լիարժեք երաշխավորումն ապահովելու խնդրում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

22 ապրիլի 2008 թվականի  
**ՍԴՈ- 752**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**«Ուղիղ ՀաՅ» ՍՊԸ-ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ**

**«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՍԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 53 ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ**

**ՀԱՍՏԱՏԱՎԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ**

**ՎԵՐԱՓԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**13 մայիսի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմու՝ «Ուղիղ Հայ» ՍՊԸ-ի տեսօրեն Ա. Մկրտչյանի, նրա ներկայացուցիչ Հ. Ալումյանի, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դրսքաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց ««Ուղիղ Հայ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53 հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Ուղիղ Հայ» ՍՊԸ-ի՝ 25.12.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԵՒԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի բացատրությունները, ուսումնասիրելով գործի նյութերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2000 թվականի հոկտեմբերի 9-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2000 թվականի նոյեմբերի 9-ին եւ ուժի մեջ է մտել 2000 թվականի նոյեմբերի 18-ին (ՀՕ-97):

Ազգային ժողովի կողմից 2001 թվականի հոկտեմբերի 24-ին ընդունված եւ 2001 թվականի դեկտեմբերի 12-ին ուժի մեջ մտած՝ ««Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-251 ՀՀ օրենքով «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարվել են միշտք փոփոխություններ եւ լրացումներ: Մասնավորապես, ««Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-251 ՀՀ օրենքի 20 հոդվածի ուժով օրենքի 53 հոդվածից երկրորդ մասը հանելու կապակցությամբ օրենքի երրորդ եւ չորրորդ մասերը համապատասխանաբար համարվում են երկրորդ եւ երրորդ մասեր, իսկ օրենքի 53 հոդվածի՝ նոր խմբագրությամբ երկրորդ մասից հանվել է «կամ արտադրության եւ հեռարձակման» բառերը, «հազարապատիկը» բառը փոփոխվել է «հինգհարյուրապատիկը» բառով:

Քննության առարկա դիմումով վիճարկվում է օրենքի նոր՝ 2001 թվականի հոկտեմբերի 24-ի խմբագրությամբ 53 հոդվածի 3-րդ մասը, որը, ըստ էության, հանդիսանում է օրենքի նախկին խմբագրությամբ 53 հոդվածի 4-րդ մասը եւ առայսօր որեւէ բովանդակային փոփոխության չի ենթարկվել:

Օրենքի՝ «Արտոնագիր (լիցենզիա) տալը» վերտառությամբ 53 հոդվածը սահմանում է. «Արտոնագրատիրոջ իրավունք ստացած իրավաբանական անձին Ազգային հանձնաժողովն արտոնագիր (լիցենզիա) է տալիս համապատասխան մուծումներ կատարելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

Հեռուստառադիհաղորդումների հեռարձակման համար արտոնագրային (լիցենզային) վճարի չափը կախված է հաղորդչի հզորությունից եւ սփռման հնարավոր տարածքից: Արտոնագրային (լիցենզային) վճարը սահմանում է հանձնաժողովը. դա չի կարող լինել ավելի, քան սահմանված նվազագույն (հաշվարկային) աշխատավարձի հինգհարյուրապատիկը:

Հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար արտոնագրատերը մուծում է տարեկան երերազմար, որի չափը հաշվարկվում է՝ ենթավագույն հաճախության սպասարկման համար անհրաժեշտ ծախսերից»:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

2. ՀՀ կառավարությունը, օրենքի 53 հոդվածի կիրարկումն ապահովելու նպատակով եւ ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածի 3-րդ մասով, 06.07.2006 թվականին ընդունել է «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարությանը լիազորություն վերապահելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի N 1807-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 946-Ն որոշումը, որով ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը վերապահվել է հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար տարեկան երերազմարի չափը հաշվարկելու եւ հաստատելու լիազորություն:

Իր հերթին, ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարը, հիմնվելով «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածի եւ ՀՀ կառավարության 06.07.2006թ. թիվ 946-Ն որոշման վրա, 01.11.2006 թվականին ընդունել է թիվ 274-Ն հրամանը, որով հաստատել է հեռարձակման հաճախությունների սպասարկման տարեկան երերազմարի չափը:

ՀՀ տնտեսական դատարանը, դիմողի, ինչպես նաև մի քանի այլ ռադիոռենկարությունների դիմումի հիման վրա՝ ընդդեմ ՀՀ կառավարության, քննելով ՀՀ կառավարության 06.07.2006թ. թիվ 946-Ն որոշումը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ քաղաքացիական գործը, իր 2007թ. մայիսի 11-ի վճռով մերժել է դիմուների պահանջը: ՀՀ կառավարության նշված որոշումը, «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածի եւ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարի 01.11.2006թ. թիվ 274-Ն հրամանի հետ մեկտեղ, իրավական հիմք էր հանդիսացել դիմուներին երերազմար մուծելու պահանջ ներկայացնելու համար: Ըստ դիմուների՝ ՀՀ կառավարությունն իրավասու չէր իր այդ որոշմամբ լիազորելու ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը՝ հաստատելու հեռարձակման հաճախությունների սպասարկման տարեկան երերազմարների չափերը: ՀՀ տնտեսական դատարանը գտել է, որ ՀՀ կառավարության վիճարկվող որոշումը «որեւէ կերպ չի հակասում օրենքին, որպիսի հիմքով եւ չի խախտում դիմուների՝ դիմումի հիմքում նշված իրավունքները, քանի որ ՀՀ կառավարության կողմից՝ վիճարկվող որոշումը կայացվել է ՀՀ Սահմանադրության 85 հոդվածի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի եւ 14 հոդվածի պահանջների պահպանմամբ, եւ քննարկվող որոշմամբ ՀՀ կառավարության կողմից չի սահմանվել իրավաբանական անձանց կողմից վճարվող պարտադիր վճարի չափ...»:

3. Ըստ դիմողի՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածի 3-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ մասին, 5 հոդվածի 2-րդ մասին, 27 հոդվածին՝ 43 հոդվածի հետ համատեղ, 42 հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությանը եւ 45 հոդվածին:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԵՒՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի ներկայացրած փաստարկները վերաբերում են ոչ միայն օրենքի փիճարկվող դրույթի հակասահմանադրականության հիմնավորմանն ու պատճառաբանմանը, այլև դրա հիման վրա լնդունված՝ «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարությանը լիազորություն վերապահելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի N 1807-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության 06.07.2006թ. թիվ 946-Ն որոշման եւ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարի 01.11.2006թ. թիվ 274-Ն հրամանի սահմանադրականության հարցին: Նշված ակտերի սահմանադրականության հարցը, սակայն, չի կարող քննության առարկա դառնալ սահմանադրական դատարանում, քանզի անհատական դիմումի հիման վրա սահմանադրական վերահսկողության օբյեկտ կարող են լինել միայն օրենքները, եւ ֆիզիկական կամ իրավաբանական անձն իրավասու չեւ սահմանադրական դատարանում վիճարկելու ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականությունը:

Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողը բարձրացնում է օրենքի 53 հոդվածի 3-րդ մասի իրավական անորոշության հարցը՝ այն հիմնավորմամբ, որ օրենքի 53 հոդվածի 3-րդ մասը չի սահմանել հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար տարեկան եթերավճարի չափը եւ չի լիազորել որեւէ մարմնի՝ որոշելու հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար տարեկան եթերավճարի չափը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիմուրդումների հեռարձակման համար եթերային հաճախությունների ցանկով սահմանված տիրույթը գտնվում է բացառապես Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ կառավարության, կառավարման ներքո: Ուստի հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար տարեկան եթերավճարի սահմանումը չի կարող դիտարկվել որպես բացառապես օրենքի կարգավորման առարկա: Դա պայմանավորված է նրանով, որ եթերավճարի մուծումն օրենքի համաձայն կատարվում է պետության լիազորած իրավասու մարմնի կողմից հաճախության սպասարկման համար անհրաժեշտ ծախսերի, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների հատուցման դիմաց:

Ըստ պատասխանող կողմի՝ խնդրո առարկա եթերավճարը բացառապես պետության լիազորած մարմնի կողմից հաճախության սպասարկման համար անհրաժեշտ ծախսերի, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների հատուցման դիմաց կատարվող վճար է:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Պատասխանող կողմը փաստում է նաեւ, որ օրենքի 53 հոդվածի 3-րդ մասով նախատեսված եթերավճարը հանդիսանում է բյուջեի այլ եկամուտների աղբյուր եւ մուտքագրվում է պետական բյուջե:

5. Քննության առարկա դիմումի շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ Սահմանադրության 45 հոդվածում մատնանշված «պարտադիր վճար» հասկացության բովանդակությանը, ինչպես նաև օրենքի վիճարկվող դրույքում օգտագործված «եթերավճար» հասկացության բովանդակությանն ու էությանը:

Սահմանադրության 45 հոդվածում «այլ» բառի առկայությունից բխում է, որ հիշյալ հոդվածում նշված հարկերը եւ տուրքերը եւս պարտադիր վճարումներ են, եւ, հետեւաբար, հիշյալ հոդվածում նշված պարտադիր այլ վճարումները, հարկերից եւ տուրքերից տարբերվելով հանդերձ, վերջիններիս հետ պետք է ունենան ընդհանուր հատկանիշներ:

Հարկային օրենսդրության վերլուծության արդյունքների հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 45 հոդվածում մատնանշված պարտադիր վճարները.

ա/ կրում են հանրային իրավական բնույթ, այսինքն՝ սահմանվում եւ վճարվում են հանրային իրավական բնույթի հասարակական հարաբերությունների շրջանակներում,

թ/ նախատեսված են պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվելու համար:

6. Հստ ներկայումս գործող ՀՀ օրենսդրության՝ հեռուստառադիրադրումներ հեռարձակող կազմակերպություններն ունեն հետեւյալ վճարատեսակները վճարելու պարտականություն.

ա) արտոնագրային (լիցենզային) վճար. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածով սահմանվում են լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները: Համաձայն այդ հոդվածի՝ ի թիվս այլոց, որպես հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ են ամրագրվում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործումը, ծայնային ծառայությունների, շարժական կապի ծառայությունների, տվյալների հաղորդման եւ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցումը, հեռուստահաղորդումների հեռարձակումը:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համաձայն՝ լիցենզայի տրման համար գանձվում է պետական տուրք՝ օրենքով սահմանված կարգով եւ չափով:

Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի՝ հեռուստառադիրադրումների հեռարձակման բնագավառում լիցենզավորման հետ կապ-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ված իրավահարաբերությունները նշված օրենքով կարգավորվում են այնքանով, որքանով այն չի հակասում քնազավարը կարգավորող «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» եւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքներին եւ դրանց հիման վրա Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի ընդունած համապատասխան կարգերին:

Համաձայն «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակումն իրականացվում է արտոնագրի (լիցենզիայի) հիման վրա: Վերջինս միակ օրինական հիմքն է, որը թույլ է տալիս իրականացնել հեռուստառադիոհաղորդումների հեռարձակում, օգտվել որոշակի հաճախությունից, կարելային (լարային) ցանցից: Նոյն օրենքի 53 հոդվածը սահմանում է արտոնագրային (լիցենզային) վճար մուծելու՝ արտոնագրատիրոջ իրավունք ստացած իրավաբանական անձի պարտականությունը: Այս վճարը սահմանում է Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը: «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածի հիման վրա գանձվող արտոնագրային (լիցենզային) վճարը միանվագ գանձվող եւ պետական բյուջե մուծվող վճար է, եւ նշված հոդվածին համապատասխան՝ արտոնագրատիրոջ իրավունք ստացած իրավաբանական անձին Ազգային հանձնաժողովն արտոնագրի (լիցենզիա) է տալիս այդ վճարումը կատարելուց հետո՝ տասնօրյա ժամկետում: «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի, ինչպես նաև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի իմաստով՝ նշված արտոնագրային (լիցենզային) վճարն իր բնույթով հանդիսանում է պետական տուրք, եւ որպես այդպիսին այն վճարվում է հեռուստառադիոհաղորդումների հեռարձակելու համար արտոնագրի (լիցենզիայի) տրման համար («ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի 2.1. մասի ուժով՝ պետական տուրքերն են օրենքով սահմանված պետական տուրքի տեսակները: Այսինքն՝ պետական տուրք կարող է սահմանվել ոչ միայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով, այլ նաև այլ օրենքներով),

թ) հեռուստառադիոհաղորդումներ հեռարձակելու համար պետական տուրք. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համաձայն՝ լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար օրենքով կարող են նախատեսվել տարեկան տուրքեր: Հարկ է նկատել, որ նշված օրենքը լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող տնտեսավարող սուրյեկտների համար նախատեսում է երկու վճարատեսակ վճարելու պարտականություն, այն է՝ լիցենզիայի տրման համար եւ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար: Ընդ որում, օրենքը լիցենզիայի տրման համար գանձվող պետական տուրք վճարելու պարտականությունը սահմանել է իմադերատիվ կերպով, իսկ լիցենզավոր-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ման գործունեություն իրականացնելու համար տարեկան պետական սուրբի առնչությամբ նախատեսել է նման տուրք գանձելու հնարավորությունը:

Համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի՝ ի թիվս հարկային եկամուտների, պարտադիր սոցիալական ապահովության վճարների, պաշտոնական դրամաշնորհների եւ այլ եկամուտների, պետական բյուջեի աղբյուր է հանդիսանում նաև պետական տուրքը: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի համաձայն՝ պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ նոյն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական եւ (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է: Այն ծառայությունները եւ գործողությունները, որոնց համար պետական տուրք է գանձվում, սպառիչ կերպով թվարկված են նոյն օրենքի «Պետական տուրքի գանձման օբյեկտները» վերտառությամբ 7 հոդվածում: Ըստ այդ հոդվածի՝ ի թիվս այլոց, պետական տուրքի գանձման օբյեկտ են հանդիսանում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալը, ինչպես նաև նոյն օրենքի 19.1 եւ 20 հոդվածներով սահմանված այլ ծառայությունները կամ գործողությունները: Խնդրու առարկա բնագավառին վերաբերում է օրենքի 19.1. հոդվածի՝ «հեռահաղորդակցության բնագավառ» վերտառությամբ 9-րդ կետը: Այդ կետով սահմանվում է տարեկան տուրքի վճարման պարտականություն՝ լիցենզավորման ենթակա գործունեության հետեւյալ տեսակների իրականացման համար: հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման, ձայնային ծառայությունների, շարժական կապի ծառայությունների, տվյալների հաղորդման եւ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման, հեռուստահաղորդումների եւ ռադիոհաղորդումների հեռարձակման համար:

Այսպիսով, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի, «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համադրված ուսումնասիրությունը վկայում է, որ լիցենզավորված գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներն ունեն երկու տեսակի պետական տուրք վճարելու պարտականություն, այն է՝ միանվագ վճարվող պետական տուրք, որը վճարվում է լիցենզիա տալու դիմաց, եւ տարեկան տուրք, որը վճարվում է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար: Հեռուստառադիմումներ հեռարձակող ընկերությունների դեպքում՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին համապա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԵՒԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տասխան որպես լիցենզիա տալու դիմաց պետական տուրք հանդիսացող միանվագ վճար հանդես է գալիս «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածով նախատեսված արտոնագրային վճարը, իսկ լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար տարեկան պետական տուրքը նախատեսված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19.1. հոդվածի 9-րդ կետով,

զ) եթերավճար, այս վճարը մուծելու՝ հեռուստառադիոլնկերությունների պարտականությունը սահմանված է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածով: Ի տարբերություն վերոհիշյալ երկու վճարատեսակների՝ այս վճարատեսակը գանձվում է ոչ թե համապատասխան պետական մարմինների լիազորություններով պայմանավորված՝ ծառայության կամ գործողության դիմաց, այլ տնտեսավարող սուբյեկտի կողմից ռադիոհաճախականությունների օգտագործման դիմաց: «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի 5-րդ կետը ռադիոհաճախականության օգտագործման վճարը՝ որպես պետական բյուջեի եկամտի աղբյուր, չփառական որպես հարկային եկամուտ կամ պետական տուրք, դասում է այլ եկամուտների շարքին:

Ռադիոհաճախականությունների օգտագործման վճար մուծելու պարտականություն օրենսդրությամբ սահմանված է ոչ միայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի հիման վրա գործող տնտեսավարող սուբյեկտների, այն է՝ հեռուստառադիոլնկերությունների, այլ նաև «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի (նշված օրենքը չի տարածվում հեռարձակվող հեռուստատեսային եւ ծայնային ծրագրեր մատուցող անձանց կամ բացառապես նմանօրինակ ծրագրերի համար օգտագործվող ենթակառուցվածքների վրա) հիման վրա գործող՝ հեռահաղորդակցության ոլորտի այլ տնտեսավարող սուբյեկտների համար: Վերջիններիս՝ ռադիոհաճախականությունների օգտագործման վճար մուծելու պարտականությունը եւ այդ վճարի գանձման գործընթացն օրենսդրությամբ ստացել է հետեւյալ կարգավորումը: «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի համաձայն՝ եթե էլեկտրոնային հաղորդակցության որեւէ ցանցի շահագործման կամ ծառայություն մատուցելու համար անհրաժեշտ է ռադիոհաճախականությունների օգտագործում, ապա անձը չի կարող տվյալ ցանցն օգտագործել կամ ծառայությունը մատուցել առանց ռադիոհաճախականություններն օգտագործելու համար պահանջվող թույլտվության: Նույն օրենքի 19 հոդվածը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն ունեցող անձանց պարտավորեցնում է կատարել այդ թույլտվության պայմանները: Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը հաստատված է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2006թ. մարտի 7-ի թիվ 28-Ն

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

որոշմամբ: Այդ որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ ռադիոհաճախականություններն օգտագործելու թույլտվությունը տրվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից: Թույլտվության անբաժանելի մասն են համարվում ռադիոհաճախականության օգտագործման պայմանները: Վերջիններս, ի թիվս այլոց, ներառում են նաև ռադիոհաճախականության օգտագործման վճար մուծելու պայմանը: Համաձայն հաստատված կարգի՝ ռադիոհաճախականության օգտագործման վճարները վճարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Թույլատրված ռադիոհաճախականության օգտագործման համար տարեկան վճարները գանձվում են եռամսյակը մեկ անգամ՝ տարեկան վճարի մեկ քառորդի չափով: Մինչեւ յուրաքանչյուր եռամսյակի վերջին օրը թույլտվություն ունեցող անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել վճարումը հավաստող անդրրագիրը: Ռադիոհաճախականությունների օգտագործման վճարների չափերը սահմանված են նշված որոշմամբ հաստատված կարգի Այլուսակ 2-ում: Սահմանված օգտագործման վճարների իրավական բնույթն ու բովանդակությունն էլ ավելի է հստակեցվել Հանձնաժողովի 2006թ. մարտի 7-ի թիվ 28-Ն որոշման մեջ կատարված համապատասխան լրացմամբ: Հանձնաժողովի 2007թ. ապրիլի 20-ի թիվ 189-Ն որոշմամբ 2006թ. մարտի 7-ի թիվ 28-Ն որոշմամբ հաստատված կարգի N 8-րդ հավելվածի 1-ին զլիսի 1.1. կետը լրացվել է հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Սույն կետով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման վճարները հանդիսանում են հրապարակային պայմանագիր կնքելու պարտադիր պայման»:

7. Վերոհիշյալ իրավակարգավորման վերլուծությունը վկայում է, որ ռադիոհաճախականությունների օգտագործման վճարի հաստատման եւ գանձման գործընթացի ամբողջական եւ լիարժեք կարգավորումը թույլ է տալիս բացահայտել այդ վճարի բնույթն ու բովանդակությունը: Նշված իրավակարգավորման համատեքստում ռադիոհաճախականությունների օգտագործման վճարը, հանդիսանալով գույքի օգտագործման դիմաց գանձվող վճար, իրենից ներկայացնում է քաղաքացիական հարաբերությունների տարր, եւ որպես այդպիսին նման գումարի գանձման համար իրավական հիմք է հանդիսանում ռադիոհաճախականությունների սեփականատիրոջ, այն է՝ պետության, որն այդ իրավահարաբերություններում գործում է Հանձնաժողովի միջոցով, եւ ռադիոհաճախականությունն օգտագործողի միջեւ կնքված համապատասխան քաղաքացիական պայմանագիրը: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի վերոհիշյալ՝ 2006թ. մարտի 7-ի թիվ 28-Ն եւ 2007թ. ապրիլի 20-ի թիվ 189-Ն որոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԵՒՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

որպես նշված սուբյեկտների միջև իրավահարաբերությունները կանոնակարգող եւ օգտագործման վճարի գանձման համար իրավական հիմք ծառայող քաղաքացիական պայմանագիր է հանդիսանում ռադիոհաճախականությունների օգտագործման բույլտվությունը. վերջինս հանդիսանում է իրապարակային պայմանագիր եւ որպես այդպիսին ներառում է ռադիոհաճախականությունների օգտագործման բոլոր պայմանները, այդ թվում՝ նաև ռադիոհաճախականության օգտագործման վճարներ մուծելու վերաբերյալ պարտադիր պայմանը: «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածն ամրագրում է այդ բույլտվության պայմանները կատարելու՝ ռադիոհաճախականության օգտագործման բույլտվություն ունեցող անձանց պարտավորությունը: Հարկ է նկատել, որ նման իրավակարգավորումը համահունչ է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան պահանջներին: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով (հոդված 438)»: Իսկ նույն օրենսգրքի 440 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ «Օրենքով նախատեսված դեպքերում կիրառվում են լիազորված պետական մարմինների կողմից սահմանված կամ կարգավորված գները (տարիքները, վարձաշափերը, դրույքները եւ այլն)»:

Այսպիսով, Էլեկտրոնային հաղորդակցության որեւէ ցանցի շահագործման կամ ծառայություն մատուցելու համար ռադիոհաճախականությունների օգտագործման անհրաժեշտություն ունեցող անձը, դիմելով ռադիոհաճախականությունների օգտագործման բույլտվություն ստանալու համար, համաձայնում է իրապարակային պայմանագիր հանդիսացող բույլտվության պայմաններին եւ պայմանագրերի ազատության սկզբունքին համապատասխան ըստ էության մտնում է քաղաքացիական հարաբերությունների մեջ՝ իր ազատ կամքով ի թիվս այլ պարտավորությունների՝ ստանձնելով նաև օգտագործման վճար մուծելու պարտավորություն:

Մինչդեռ հեռուստառադիմերությունների պարագայում նույնատիպ վճարի սահմանման եւ գանձման գործընթացն ստացել է այնպիսի անորոշ եւ հակասական կարգավորում, որ հնարավոր չէ հստակ հետեւություն անել ո՞չ այդ վճարի գանձման նպատակի, ո՞չ այդ վճարի բնույթի ու բովանդակության մասին: Վիճարկվող դրույթում «Հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար արտոնագրատերը մուծում է տարեկան եթերավճար» ձեւակերպումը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2005թ. հոկտեմբերի 6-ի թիվ 1807-Ն որոշման մեջ «Հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար տարեկան եթերավճարի չափի հաշվարկ-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ման եւ հաստատման, ինչպես նաև հավաքագրման լիազորությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարությանը» դրույքը թերեւս իիմք են տալիս նըրակացնելու, որ այդ վճարը, ինչպես վերոհիշյալ դեպքում, պետության սեփականությունը հանդիսացող սահմանափակ ռեսուրսի՝ ռադիոհաճախականության օգտագործման դիմաց գանձվող վճար է: Այս դիրքորոշումն են պաշտպանել նաև ՀՀ կառավարության ներկայացուցիչները տնտեսական դատարանում՝ համարելով, որ «...Հեռուստառադիորենկերությունների հեռարձակման եթերային հաճախությունները հանդիսանում են պետության սեփականությունը, եւ պետությունը՝ ի դեմս կառավարության, վարձակալական հիմունքներով օգտագործման նպատակով ՀՀ օրենսդրությանը համապատասխան իր կողմից սահմանված վճարի դիմաց այն տրամադրում է նրանության կարգով արտոնագիր ստացած հեռուստառադիոհադրումների հեռարձակում իրականացնել ցանկացող սուբյեկտներին»:

Մինչդեռ, ինչպես միեւնույն՝ օրենքի 53 հոդվածի 3-րդ մասի դրույթում՝ «...չափը հաշվարկվում է՝ ելեկտրոնային հաճախության սպասարկման համար անհրաժեշտ ծախսերից», այնպես էլ «Հեռարձակման հաճախությունների սպասարկման տարեկան եթերավճարների չափերը հաստատելու մասին» ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարի 2006թ. նոյեմբերի 1-ի թիվ 274-Ն հրամանում «Հաստատել հեռարձակման հաճախությունների սպասարկման տարեկան եթերավճարների չափերը» ձեւակերպումներից կարելի է հետեւություն անել, որ նշված վճարը սպասարկման դիմաց տրվող վճար է: Հարկ է նկատել, որ իրավակիրառական պրակտիկայում եւս այդ վճարն ըստ Էության ընկալվել է որպես սպասարկման վճար: Այսպես, եւ՝ դիմողին, եւ՝ մի քանի այլ ռադիոռենկերությունների եթերավճար վճարելու պահանջ ներկայացվել է «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության գլխավոր տնօրենի գրությամբ: Նշված գրության մեջ որպես եթերավճարի վճարում պահանջելու իրավական իիմք մատնանշվել է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքը, ընդ որում, առանց մատնանշելու համապատասխան հոդվածը, ինչպես նաև ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարի 01.11.2006թ. հրամանը: Գրությամբ պահանջվել է սահմանված ժամկետում վճարումը հաստատող անդորրագրի կրկնօրինակը ներկայացնել «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին: Մինչդեռ համապատասխան օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ նշված կազմակերպությունը որեւէ իրավական իիմք չուներ դիմողին եւ մյուս ռադիոռենկերություններին նման պահանջ ներկայացնելու համար, եւ ընդհանրապես այդ կազմակերպության եւ ռադիոռենկերությունների միջև որեւէ իրավական կապ գոյություն չունի: Այսպես, ««Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՒԽ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կերպություն ստեղծելու մասին» ՀՀ կառավարության 6 հոկտեմբերի 2005 թվականի N 1807-Ն որոշման առաջին պարբերության մեջ որպես այդ որոշման իրավական հիմք է մատնանշված «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4 հոդվածի 12-րդ մասը: Իսկ նշված օրենքի՝ «Օրենքի գործողության շրջանակները» վերտառությամբ 3 հոդվածի 2-րդ մասում ամրագրված է. «Սույն օրենքը չի տարածվում հեռարձակվող հեռուստատեսային եւ ճայնային ծրագրեր մատուցող անձանց կամ բացառապես նմանօրինակ ծրագրերի համար օգտագործվող ենթակառուցվածքների վրա»: Ավելին, ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 6-ի թիվ 946-Ն որոշման 2-րդ կետով ՀՀ կառավարության 2005թ. հոկտեմբերի 6-ի թիվ 1807-Ն որոշման 5-րդ կետը լրացվել է հետեւյալ բովանդակությամբ նոր՝ «է» ենթակետով՝ «է» հաճախություններն օգտագործողների, բացառությամբ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան գործող հեռուստառադիորենկերությունների, հաճախությունների սպասարկում»:

Այսինքն՝ «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ն իր գործառույթները, այդ թվում՝ նաև ռադիոհաճախականությունների սպասարկման գործառույթը, իրականացնում է պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին՝ միայն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի հիման վրա գործող՝ ռադիոհաճախականություններ օգտագործող տնտեսավարող սուբյեկտների առնչությամբ. հեռուստառադիորենկերությունները դուրս են ինչպես նշված օրենքի, այնպես էլ ՀՀ կառավարության 6 հոկտեմբերի 2005 թվականի N 1807-Ն որոշման իրավակարգավորման շրջանակից:

Հարկ է նկատել, որ օրենքի 53 հոդվածով նախատեսված եթերավճարի իրավական բովանդակությունը վերոհիշյալից էականորեն տարբերվող ընկալում է ստացել դատական պրակտիկայում: Մասնավորապես, գործում առկա՝ ՀՀ տնտեսական դատարանի 2007թ. մայիսի 11-ի վճոյի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ դատարանը, ի տարբերություն գործադիր իշխանության վերոհիշյալ մեկնաբանության, հիմք է ընդունել այն հանգամանքը, որ օրենքի 53 հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար տարեկան եթերավճարը ՀՀ Սահմանադրության 45 հոդվածի իմաստով հանդիսանում է պարտադիր վճար եւ դրա չափը սահմանված է օրենքի 53 հոդվածով: Իսկ ՀՀ կառավարությունը լիազորել է ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը ոչ թե սահմանելու, այլ հաշվարկելու եւ հաստատելու օրենքի 53 հոդվածով արդեն իսկ սահմանված հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար տարեկան եթերավճարի չափը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ հարցը կա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նոնակարգելիս օրենսդրությունը տարբերակված մոտեցում չի դրսեւորել նաեւ առանձին ոլորտները կարգավորող անկախ հանձնաժողովների ու կոնկրետ նախարարության պետադրավական կարգավիճակների հարցում՝ գործնականում ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը վերապահելով անկախ հանձնաժողովի իրավասություն:

8. Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, եթե օրենսդիրն օրենքի 53 հոդվածի 3-րդ մասով եթերավճար սահմանելիս՝ այն դիտարկել է որպես պետության սեփականությունը հանդիսացող սահմանափակ ռեսուրսի՝ ռազմիահաճախականությունների օգտագործման դիմաց տրվող վարձավճար, ապա վերջինիս վճարման հետ կապված իրավահարաբերությունները պետք է ստանային քաղաքացիադրավական հարաբերություններին բնորոշ իրավակարգավորում, որտեղ խնդրո առարկա վճարը պետք է դիտարկվեր որպես քաղաքացիադրավական հարաբերությունների տարր: Նույն մոտեցումը պետք է լիներ նաեւ այն պարագայում, եթե խնդրո առարկա եթերավճարը դիտարկվեր որպես սպասարկման վճար: Մինչդեռ առկա իրավակարգավորման վերլուծությունը վկայում է, որ, ի տարբերություն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի հիման վրա գործող տնտեսավարողների, հեռուստառադիոլունկերությունների կողմից վճարվող եթերավճարի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորումը կրում է ոչ թե քաղաքացիադրավական հարաբերությունների կարգավորմանը բնորոշ հատկանիշներ, այլ հանրային իրավական հարաբերությունների կարգավորմանը բնորոշ հատկանիշներ, այն է՝ խնդրո առարկա եթերավճարը սահմանվել է հանրային իրավական բնույթի հասարակական հարաբերությունների շրջանակներում եւ 2007 թվականից համարվել է պետական մարմինների լիազորություններով պայմանավորված ծառայությունների մատուցման (հեռարձակման հաճախության սպասարկման) համար որպես պետական բյուջե մուտքագրվելու համար նախատեսված վճար, ինչի արդյունքում այն ձեռք է բերում պարտադիր վճարի հատկանիշներ՝ մասնավորապես համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի: Խսկ եթերավճարն օրենսդիրի կողմից որպես պարտադիր վճար դիտարկվելու դեպքում իրավակարգավորումը պետք է համապատասխաներ ՀՀ Սահմանադրության 45 հոդվածի եւ 83.5. հոդվածի 2-րդ կետի պահանջներին:

9. Հեռուստառադիոլունկերությունների՝ եթերավճար վճարելու պարտավորության կապակցությամբ առկա ոչ լիարժեք, անհստակ, հակասական իրավակարգավորման եւ իրավակիրառական պրակտիկայի պայմաններում, երբ տվյալ տնտեսավարող սուրբեկտի համար որոշակիացված չեն

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ո՞չ եթերավճարի բնույթն ու բովանդակությունը, ո՞չ գանձման նպատակը, ո՞չ գանձող մարմինը, ո՞չ գանձման ընթացակարգը, ձեւավորվում է իրավական անորոշության եւ անկանխատեսկի լիության մի վիճակ, որը կասկածի է ենթարկում եթերավճարի գանձման իրավաչափությունը՝ հիմքեր ստեղծելով օրենքով նախատեսված պարտականությունը չկատարելու համար:

Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձեւակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական եւ ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. Նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետեւանքները, որոնք կարող են առաջացնել տվյալ գործողությունը:

Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարենու գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը:

Հաշվի առնելով միեւնույն սահմանափակ ռեսուրսի, այն է՝ ռադիոհաճախականությունների օգտագործման իրավակարգավորման հակասականությունը, օրենքի վիճարկվող դրույթի անորոշությունը, այդ անորոշությունից բխող՝ օրենքի դրույթի սխալ մեկնաբանության վրա հիմնված իրավակիրառական պրակտիկան, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթը տնտեսավարող սուբյեկտի համար հստակ կանխատեսելի չի դարձնում եթերավճարի գանձման նպատակը, իրավական մեխանիզմները, եթերավճարի բնույթն ու բովանդակությունը, այդ եթերավճարը վճարելու՝ տնտեսավարող սուբյեկտի պարտականության իրավաչափությունը:

Ելնելով գործի բննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Ց**.

1. «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53 հոդվածի 3-րդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ հանդերձ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածով սահման-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ված՝ իրավական պետության սկզբունքին, 45 հոդվածի և 83.5. հոդվածի 2-րդ կետի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, հաշվի առնելով, որ, մի կողմից, եթերավճարի գանձումն առնչվում է բյուջետային հարաբերությունների կայունությանը, մյուս կողմից՝ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից հեռուստառադիրընկերությունների համար եթերավճար վճարելու պարտավորության անմիջական ընդհատումը կարող է անհավասար վիճակ ստեղծել ռադիոհաճախականություն օգտագործող տնտեսավարող սուբյեկտների միջեւ՝ խարարելով սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահին վեճի առարկա դրույթի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ինչպես նաև նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանը հեռուստառադիրընկերություններից եթերավճարի գանձման օրենսդրական ներկա կարգավորումն անհարիր համարելով իրավական պետության սկզբունքներին՝ միաժամանակ ռադիոհաճախականությունների օգտագործման դիմաց վճարելու պարտականությունն ինքնին իրավաչափ է համարում, «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53 հոդվածի 3-րդ մասի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2008թ. դեկտեմբերի 1-ը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### **ՆԱԽԱԳԱՀՈՂ**

### **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**13 մայիսի 2008 թվականի  
ՍՊԸ- 753**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**«ՈՎԳԻՈ ՀԱՅ» ՍՊԸ-ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ  
«ՀԵՌՈՒՏԱԶԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՎԳԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 53  
ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՎԱՏԱԿԱՆԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ 13.05.2008թ. ՄԴՈ-753 ՈՐՈՇՄԱՆ ԱՌԻՎ**

Նշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածի 3-րդ մասը ճանաչեց ՀՀ Սահմանադրության 1 հոդվածով սահմանված՝ իրավական պետության սկզբունքին, 45 հոդվածի և 83.5 հոդվածի 2-րդ կետի պահանջներին հակասող և անվավեր:

Ես ունեմ հատուկ կարծիք այդ որոշման վերաբերյալ՝ հետևյալ նկատառումներով:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար արտոնագրատերը մուծում է տարեկան եթերավճար, որի չափը հաշվարկվում է՝ ելնելով միայն հաճախության սպասարկման համար անհրաժեշտ ծախսերից»:

Սահմանադրական դատարան դիմողը գտնելով, որ տարեկան եթերավճարը պարտադիր վճար է, իսկ ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի համաձայն պարտադիր վճարների տեսակները, դրանց չափերը և վճարման կարգը սահմանվում են բացառապես ՀՀ օրենքներով, և քանի որ Օրենքի վիճարկող դրույթը պարտադիր վճարի չափը չի սահմանել, հետևաբար այն հակասում է ՀՀ Սահմանադրության 45 և 83.5 հոդվածների պահանջներին:

Սահմանադրական դատարանը, անտեսելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86 հոդվածի 1-ին մասի պահանջը, ըստ որի «իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները։ Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը», մի կողմ քողնելով մաքուր հայերենով պարզ գրված այն միտքը, որ հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար արտոնագրատերը մուծում է տարեկան եթերավճար, որի չափը հաշվարկվում է՝ ելնելով միայն հաճախության սպասարկման համար անհրաժեշտ ծախսերից, փորձել է «պարզել» «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ

օրենքի 53 հոդվածի 3-րդ մասով նախատեսված եթերավճարը պարտադիր վճար է, թե սպասարկման վարձ: Ի սկզբանե որդեգրելով սխալ մոտեցում՝ պետությանը չղիտարկելով որպես քաղաքացիական իրավունքի սուրյեկտ և հեռարձակման հաճախության սեփականատեր, սահմանադրական դատարանը անդրադառնալով վիճարկվող դրույթի հետ հեռավոր աղերսներ ունեցող «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին», «ՀՀ բյուջետային համակարգի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքներին, ապա պարզելով, որ «ի տարբերություն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի հիման վրա գործող տնտեսվարողների, հեռուստառադիմոնների կողմից վճարվող եթերավճարի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորումը կլում է ոչ թե քաղաքացիական հարաբերությունների կարգավորմանը բնորոշ հատկանիշներ, այլ՝ հանրային իրավական հարաբերությունների կարգավորմանը բնորոշ հատկանիշներ, այն է՝ խնդրուած առարկա եթերավճարը սահմանվել է հանրային իրավական բնույթի հասարակական հարաբերությունների շրջանակներում և 2007 թվականից համարվել է պետական մարմինների լիազորություններով պայմանավորված ծառայությունների մատուցման (հեռարձակման հաճախության սպասարկման) համար որպես պետական բյուջե մուտքագրվելու համար նախատեսված վճար, ինչի արդյունքում այն ձեռք է բերել պարտադիր վճարի հատկանիշներ»: ՀՀ սահմանադրական դատարանի համար նման հետևողաբար հիմք է ծառայել նաև ՀՀ տնտեսական դատարանի 2007թ. մայիսի 11-ի վճու նույնքան անհիմն եզրահանգումը, ըստ որի հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար տարեկան եթերավճարը, ՀՀ Սահմանադրության 45 հոդվածի իմաստով, պարտադիր վճար է:

Մինչեւ պատասխանողը փաստարկներ է բերել այն մասին, որ Օրենքի վիճարկվող դրույթում հիշատակված եթերավճարը պարտադիր վճար չէ, այլ հեռարձակման հաճախության օգտագործման վարձ, որ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակման հաճախությունների սեփականատերը Հայաստանի Հանրապետությունն է և դրանց սպասարկումը կատարվում է պետության լիազորած իրավասու մարմնի կողմից: Այդ մարմինը ֆինանսավորվում է պետրյուջեի միջոցներից և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի հիմքով հեռարձակման հաճախության օգտագործման տարեկան եթերավճարը հանդիսանում է բյուջեի այլ եկամուտների աղբյուր և այն մուտքագրվում է պետական բյուջե՝ որպես օրենքով սահմանված դեպքերում պետական հիմնարկների կողմից մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարի տեսակ:

Սահմանադրական դատարանը ոչ միայն չի հերքել պատասխանողի վերոհիշյալ փաստարկները, այլև որոշման տեքստում ամբողջ շարադրական դատարանը պատասխանություն ունի այս գործությունների վերաբերյալ:

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

բանքով հաստատել է այն: Աննպատակահարմար դիտելով որոշման պատճառաբանական մասի ամրողական մեջքերումը, այնուամենայնիվ ավելորդ չէ նշել որոշման 6-րդ կետի գ ենթակետը, որտեղ ասված է. «Եթե-րավճար. այս վճարը մուծելու՝ հեռուստառադիրընկերությունների պար-տականությունը սահմանված է «Հեռուստառեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածով: Ի տարրերություն վերոհիշյալ երկու վճարատե-սակների՝ (լիցենզիա ստանալու համար և լիցենզավորման ենթակա գոր-ծունեություն իրականացնելու համար պետտուրքեր - ծանոթությունն իմն է՝ հեղինակ) այս վճարատեսակը գանձվում է ոչ թե հանապատասխան պետական մարմինների լիազորություններով պայմանավորված՝ ծառա-յության կամ գործողության դիմաց, այլ տնտեսվարող սուբյեկտի կողմից ուսդիոհաճախականությունների օգտագործման դիմաց: «ՀՀ բյուջետա-յին համակարգի մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի 5-րդ կետը, ռադիոհաճա-խականության օգտագործման վճարը՝ որպես պետական բյուջեի եկամ-տի աղբյուր, չփակելով որպես հարկային եկամուտ կամ պետական տուրք, դասում է այլ եկամուտների շարքին»:

Հավաստագրելով վերոհիշյալ իրողությունը, սահմանադրական դատա-րանը այնուհետև վերլուծելով Օրենքի վիճարկվող դրույթը, գտնում է, որ հնարավոր չէ հստակ հետևություն անել այդ վճարը հեռարձակման հա-ճախությունն օգտագործելու դիմաց, թե հաճախության սպասարկման վճար է: Այս հարցադրումն անելիս սահմանադրական դատարանը կրկին մոռացության է տալիս, որ օրենքը մեկնարանվում է դրանում պարունակ-վող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ: Իսկ Օրենքում ասված է. «Հեռարձակման հաճախությունն օգտագործելու հա-մար արտոնագրատերը մուծում է տարեկան եթերավճար»: Այսինքն՝ պարզ ասված է, որ եթերավճարը մուծվում է հաճախության օգտագործ-ման համար: Ինչ վերաբերում է Օրենքի տեքստի այն շարունակությանը, ըստ որի եթերավճարի «չափը հաշվարկվում է՝ ելեկով միայն հաճախու-թյան սպասարկման համար անհրաժեշտ ծախսերից», ոչնչով չի փոխում եթերավճարի՝ որպես հաճախության օգտագործման դիմաց վճարի էռո-յունը, այլ ընդամենը կողմնորոշում է, թե ինչը ելակետ պետք է ընդունել հաճախության օգտագործման դիմաց գանձվող գումարի չափը որոշելիս:

Չնայած վերը նշված տեքստում սպասարկման դիմաց վճարի մասին խոսք չկա և լինել չի կարող, համենայնդեպս, եթերավճարը հաճախության օգտագործման կամ սպասարկման վճար լինելով, ՀՀ Սահմանադրության 45 և 83.5 հոդվածների հետ խնդիր չի առաջացնում, քանի որ այն նշված հոդվածների իմաստով պարտադիր վճար չէ, և օրենսդիրը չի կարող քա-ղաքացիական իրավունքի սուբյեկտի՝ հաճախության սեփականատիրոջ փոխարեն եթերավճարի կոնկրետ չափ սահմանել:

Սահմանադրական դատարանը արձանագրել է նաև, որ Օրենքի վի-

ճարկվող դրույթը զուրկ է որոշակիությունից, հետևաբար, այն հակասում է ՀՀ Սահմանադրության 1 հոդվածով սահմանված՝ իրավական պետության սկզբունքին: Ինչպես հասկացվում է որոշման շարադրանքից, սահմանադրական դատարանը նման հետևության է հանգել, իիմք ընդունելով այն, որ կառավարությունը եթերավճարի չափը որոշելու հարցը հանձնարարել է տրանսպորտի և կառավարությանը, իսկ «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը պատշաճ կարգով քաղաքացիական պայմանագրեր չի կնքել հեռարձակման հաճախություններն օգտագործող ընկերությունների հետ: Սահմանադրական դատարանն այս դեպքում ևս հաշվի չի առել, որ պետությունը տվյալ հարցում հանդես է գալիս ոչ որպես հանրային իրավունքի, այլ քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտ, և սեփականատիրոջ կողմից իր սեփականության լավ կամ վատ տնօրինումը չի կարող Օրենքի վիճարկվող դրույթի սահմանադրականության խնդիր առաջացնել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԱՆԴԱՌ**

**Հ. ԴԱՎԻԵԼՅԱՆ**

**20.05.2008թ.**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ԷՄԻԼԻՅԱՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԽՄԱՆ ՎՐԱ  
ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻ ՎԱՏՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 231.1.  
ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ (Նոր ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ 233 ՀՈԴՎԱԾԻ  
4-ՐԴ ՄԱՍ)՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

27 մայիսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոփյանի, Զ. Դուկայանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝

դիմող՝ քաղ. Է. Մելիքյանի և նրա ներկայացուցիչ Հ. Հարությունյանի, գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ԱԺ աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչարյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դրեբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Էմիլիյա Մելիքյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 4-րդ մասի (նոր խմբագրության 233 հոդվածի 4-րդ մաս)՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Է. Մելիքյան՝ 28.12.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Լսելով գործով գեկուցողի հաղորդումը, կողմերի բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, Հանրապետության Նախագահի կողմից այն ստորագրվել է 1998թ. օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

Սկզբնապես դիմողի կողմից վիճարկվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228.1. հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության, 231.1. հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերի դրույթների սահմանադրականությունը: Սահմանադրական դատարանի կողմից դիմումը քննության է ընդունվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 4-րդ մասի առնչությամբ:

Օրենսգրքի 231.1. հոդվածը վերնագրված է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը», որի 4-րդ մասը սահմանում է.

«4. Առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման կայացման դեպքում բողոք բերող անձը չի կարող կրկին վճռաբեկ բողոք ներկայացնել»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածը դիմուի նկատմամբ կիրառվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-98-Ն՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 21.02.2007թ. ընդունված, 15.03.2007թ. ՀՀ Նախագահի կողմից ստորագրված, 07.04.2007թ. ուժի մեջ մտած ՀՀ օրենքի խմբագրությամբ: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշմամբ լուծել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի՝ մինչեւ նշված օրենքի ընդունումը գործող խմբագրությամբ տերսուի սահմանադրականության հարցը. նշված տերսուը բաղկացած է եղել միայն 3 մասից եւ չի ներառել վիճարկվող դրույթը: Վերջինս ավելացվել է վերոհիշյալ օրենքով: Հետագայում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-277-Ն ՀՀ օրենքով՝ ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին, որը ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 2007թ. դեկտեմբերի 20-ին, ուժի մեջ է մտել 01.01.2008թ., ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 231.1. հոդվածը վերաձեւակերպվել է որպես գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդված:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

2. Համաձայն վերջնական դատական ակտի՝ ՀՀ կառավարության 10.06.2004թ. նիստում ընդունվել է ՀՀ պետական գույքը մասնավորեցնելու մասին որոշում, որով նախատեսվել է «Պարեն» ԳԱՆ ՊՓԲԸ-ի բաժնետոմսերը մասնավորեցնել մրցույթով։ Հետագայում, առանց կառավարության կողմից կրկին քննարկման, փոխվել է գույքի մասնավորեցման ձեւը՝ վերածվելով ուղղակի վաճառքի։

Դիմողը, իր մի շաբթ աշխատակիցների հետ, դիմում է ներկայացրել Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել կառավարության նշված որոշումը։ Դատարանի 25.01.2005թ. վճռով դիմումը մերժվել է։ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի հունիսի 28-ի վճռով եւս դիմումը մերժվել է։ Դիմողը դիմել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ տնտեսական գործերով պալատ, որն իր 20.09.2005թ. որոշմամբ բեկանել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի վճիռը՝ ՀՀ կառավարության որոշումն անվավեր ճանաչելու պահանջը մերժելու մասով, եւ գործի վարույթը կարճել է՝ վճոի մնացած մասը բողնելով անփոփոխ։

Հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի 16.11.2006թ. ՍԴՈ-665 որոշումը, դիմողը դիմում է ներկայացրել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան՝ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման մասին, որն էլ իր՝ 23.03.2007թ. վճռով դիմումը թողել է առանց բավարարման։ Դիմողը կրկին դիմել է ՀՀ վճռաբեկ դատարան, որն իր՝ 28.06.2007թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է, գտնելով, որ գործը վարույթ ընդունելու հիմքերը բացակայում են։

3. Դիմողը 28.12.2007թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ գտնելով, որ ՀՀ քաղ. դատ.օր.-ի 231.1. հոդվածի 4-րդ մասի դրույթները՝ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնարանությամբ, հակասում են ՀՀ Սահմանադրության 3, 6 (1-ին, 2-րդ եւ 5-րդ մասեր), 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին, եւ դրանք անհրաժեշտ է անվավեր ճանաչել։

Դիմողը մասնավորապես մատնանշում է, որ Հայաստանի Հանրապետությունը, իրեն հոչակելով որպես իրավական պետություն, Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով հատակ նախատեսում եւ երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ իր խախտված իրավունքները դատական կարգով պաշտպանելու իրավունքը՝ օրենքով սահմանված կարգով ու ծավալով։

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթում թերությունները վերացնելու եւ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար վճռաբեկ դատարանի կողմից ժամկետների սահմանումը պետք է հետապնդի դատական պաշտպանության իրավունքի իրականացման ապահովման, այլ ոչ թե այդ իրավունքի

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊԹԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

սահմանափակման նպատակ: Ժամկետ չսահմանելը չի կարող բացառել օրենքով իսկ սահմանված ժամկետում թերությունները վերացնելու եւ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու իրավունքը (առնվազն մեկ անգամ՝ բարեխղճորեն օգտվելով դատավարական իրավունքներից): Վճռաբեկ դատարանը չի կարող իրազործել թերությունները վերացնելու եւ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետ սահմանելու կամ չսահմանելու իրավունքը՝ առանց պատճառաբանություններ նշելու:

Դիմողի պնդմամբ՝ վիճարկվող դրույթի եւ ՀՀ Սահմանադրության նշված հոդվածների միջեւ հակասությունը կայանում է նրանում, որ վիճարկվող դրույթը պարունակում է վճռաբեկ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված սովորական ժամկետներում ընդհանուր կարգով վճռաբեկ բողոք ներկայացնելու սահմանափակում:

4. Առարկելով դիմողի պնդումների դեմ՝ պատասխանող կողմը գտնում է, որ վեճի առարկա նորմը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Պատասխանողի կարծիքով, վճռաբեկ բողոքը քննության ընդունելուն վերաբերող դատավարական կանոնները նպատակ են հետապնդում ապահովել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ վճռաբեկ դատարանի գործունեության նպատակի՝ օրենքի միատեսակ կիրառությունը: Հաշվի առնելով, որ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու կամ չընդունելու որոշումը կարող է էական նշանակություն ունենալ անձի սահմանադրական իրավունքների իրականացման համար, եւ այն, որ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու մասին որոշումը վերջնական դատական ակտ է, օրենսդիրը ՀՀ դատական օրենսգրքի 53 հոդվածի 1-ին մասում սահմանել է բողոքը քննության ընդունելու կամ չընդունելու համար հատուկ ընթացակարգ, ինչը պայմանավորված է անձի իրավունքների դատական պաշտպանության երաշխավորման անհրաժեշտությամբ, եւ իրենից ներկայացնում է բողոքարկողի համար լրացուցիչ դատավարական երաշխիք:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ վճռաբեկ դատարանին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով վերապահիվել են ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի երկրորդ մասում ամրագրված հիմնադրությի իրացման անհրաժեշտությամբ: Տվյալ դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 3-րդ մասի համաձայն, վերապահիվել է հայեցողական լիազորություն:

Պատասխանողը գտնում է, որ այս մոտեցումները բխում են նաեւ ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի դրույթներից, եւ հենց այդ մոտեցումներից ելնելով է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարել է համապատասխան փոփոխություններ: Վի-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՒՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ճարկվող նորմերը որոշակի են ու հստակ, բխում են դատական համակարգի բարեփոխումների հայեցակարգային մոտեցումներից, համարժեք են արդարադատական համակարգի եվլոպական զարգացումներին:

Միաժամանակ, պատասխանողը՝ անդրադառնալով դատական համակարգի զարգացման բնագավառում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականներին, արել է այն հիմնական հետեւոթյունը, որ տարբեր մոտեցումներ են ցուցաբերվում դատական տարբեր ատյանների իրավասությունների սահմանման ու դրանց իրականացման կարգերի նկատմամբ, ընդ որում, երրորդ ատյանի դատարան բողոքներ պետք է բերվեն առաջին հերթին այնպիսի գործերով, որոնք կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ կարող են նպաստել օրենքի միանման մեկնաբանմանը: Այդ շրջանակը կարող է նաև նեղացվել այն գործերի վերաբերյալ բողոքներով, որոնք առնչվում են իրավունքի այնպիսի հարցերի, որպիսիք ողջ հասարակության համար կարեւորություն չեն ներկայացնում:

5. Դիմողի փաստարկները հիմնականում առնչվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելու համար վճռաբեկ դատարանի կողմից ժամկետ սահմանելու հայեցողական լիազորության վերաբերյալ դրույթին, որի սահմանադրականության հարցն արդեն խսկ քննության առարկա է դարձել ՀՀ սահմանադրական դատարանում:

Սահմանադրական դատարանը իր՝ 2007թ. ապրիլի 9-ի ՍԴ-Օ-690 որոշմամբ առանձնակիորեն կարեւորել է այն իրավական երաշխիքներն օրենսդրություններում ամրագրելու անհրաժեշտությունը, որոնք կոչված են ապահովելու վճռաբեկ դատարանի կողմից՝ նշված հայեցողական լիազորության իրավաչափ եւ ոչ կամայական իրականացումը: Մասնավորապես, սահմանադրական դատարանն իր որոշման 11-րդ կետում շեշտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 3-րդ կետում կիրառված «թերություններ» արտահայտության հստակ ըմբռնելի բովանդակությունը սահմանելը, բողոքատու անձանց կողմից վճռաբեկ բողոքն օրենսգրքի 230 հոդվածի պահանջներին ըստ ձեւի համապատասխանեցնելու պայմանները, կարգը եւ ժամկետն օրենսդրություն հստակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա վճռաբեկ վարույթում առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

Սահմանադրական դատարանն իր նշված որոշման եզրակափակիչ մասի 3-րդ կետում ամրագրել է. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) ... վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին

## «ԱՎԱՍՏԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետեւաբար, նաև՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին և 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր»: Այսինքն՝ վճռաբեկ դատարանի կողմից՝ նշված հայեցողական լիազորության իրավաչափ և ոչ կամայական իրականացումն ապահովող կարեւոր իրավական երաշխիք պետք է հանդիսանար նաև վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանման պարտադիր պայմանն օրենքով հստակ սահմանելը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադրական դատարանի նշված որոշման ընդունումից ի վեր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում վերոհիշյալ իրավական երաշխիքները լիարժեքորեն չեն ապահովվել:

Այսպես՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007թ. նոյեմբերի 28-ի օրենքի 75 հոդվածի համաձայն՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 233 հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից 10 օրվա ընթացքում: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված, բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքերի»: Նույնարդության դրույթ է ըստ էության ամրագրված նաև ՀՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 4-րդ մասում. վերջինս եւս վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանման պահանջը չի տարածում այն որոշումների վրա, որոնցում վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքն այն է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը չի կարող էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը՝ նման բացառություն սահմանելով, լիարժեքորեն չի ապահովել սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման կատարումը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենսդիրը դեռեւս չի սահմանել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 3-րդ մասում (գործող օրենսգրքի 233 հոդվածի 3-րդ մաս) կիրառված «թերություններ» արտահայտության հստակ ընդունելի բովանդակությունը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելու համար վճռաբեկ դատարանի կողմից ժամկետ սահմանելու հայեցողական լիազորության իրավաչափի եւ ոչ կամայական իրականացման ապահովմանը միտված անհրաժեշտ իրավական երաշխիքներն օրենսդրության ոչ լիարժեքորեն ամրագրելու պայմաններում «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 21.02.2007թ. ՀՕ-98-Ն օրենքով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածը (07.07.2006թ. խմբագրությամբ) լրացվել է վիճարկվող դրույթով:

Փաստորեն, մի կողմից՝ չեն ստեղծվել վերոհիշյալ հայեցողական լիազորության իրավաչափի իրականացումն ապահովող իրավական երաշխիքներ, մյուս կողմից՝ վիճարկվող դրույթով բացառվել է կրկին վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորությունն այն դեպքում, եթե վճռաբեկ դատարանը չի սահմանում բողոքի թերությունները շտկելու համար ժամկետ: Այսինքն՝ բացակայում են ինչպես հայեցողական լիազորության կամայական իրականացումը կանխելու երաշխիքները, այնպես էլ այդ հայեցողական լիազորության ոչ իրավաչափի իրականացումը հաղթահարելու միջոցը:

6. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ՀՀ վարչական դատավարության օրենքով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով համապատասխանարար հայցադիմումը, դիմումը, վերաքննիչ բողոքը, անհատական դիմումը վերադարձնելու հետ կապված հարաբերությունների իրավակարգավորման ուսումնասիրությունը վկայում է, որ համաձայն այդ իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության՝ հայցադիմումի, դիմումի, վերաքննիչ բողոքի, անհատական դիմումի թերությունները չեն կարող խոչընդոտել դրանց քննության ընդունման հարցի դրական լուծմանը եւ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը: Նշված տրամաբանությունն էլ իր հերթին բխում է դատարանի մատչելիությունն ապահովելու անհրաժեշտությունից:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92 հոդվածի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե դրանում առկա են այդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտումներ: Հայցադիմումը թույլ տրված խախտումները, նույնն է, թե թերությունները վերացվելու եւ եռօրյա ժամկետում դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումն ընդունված է համարվում սկզբնական ներկայացնելու օրը: Ընդ որում, հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան:

Նույն օրենսգրքի 213 հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանը գործն ստանալուց հետո եռօրյա ժամկետում կայացնում է որոշում վերաքն-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ահշ բողոքը վերադարձնելու մասին, եթե բողոքում թույլ են տրվել նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների խախտումներ: Համապատասխան խախտումները վերացվելու եւ որոշումն ստանալուց հետո՝ երկշարաբյա ժամկետում, կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Այս դեպքում եւս, վերադարձնելու որոշումը ենթակա է բողոքարկման. այն բողոքարկում է վճռաբեկության կարգով:

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78 հոդվածի՝ վարչական դատարանը հայցադիմումը վերադարձնելու մասին կայացնում է որոշում: Վարչական դատարանը հայցադիմումը վերադարձնում է պատշաճ հիմնավորմամբ՝ նշելով բոլոր առերեւույթ թերությունները: Հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացվելու եւ որոշումն ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը դատարանում ընդունված է համարվում սկզբնական ներկայացվելու օրը: Հարկ է նկատել, որ այս հոդվածում հայցադիմումի «թերություններ» եւ «խախտումներ» հասկացությունները նույնացված են:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածի համաձայն՝ դիմողը դիմումը վերադարձնելը կարող է ենօրյա ժամկետում բողոքարկել սահմանադրական դատարանի նախագահին, որն այդ հարցով ոչ ուշ, քան բողոքը ներկայացվելուց մեկ օր հետո ընդունում է վերջնական որոշում:

Վերոհիշյալ իրավակարգավորումը վկայում է, որ ստեղծված են այնպիսի իրավական երաշխիքներ, որոնք գործնականում կրացառեն թերությունների կամ օրենքի համապատասխան պահանջների խախտումների պատճառաբանությամբ հայցադիմումի, դիմումի, վերաքննիչ բողոքի կամ անհատական դիմումի քննության ընդունման հարցի դրական լուծումը: Նախեւառաջ, անձը դատարանի մատնանշած թերությունները շտկելուց հետո ըստ էության ազատ է շտկված փաստաթուղթը կրկին ներկայացնելու հարցում. կրկին ներկայացնելու հնարավորությունը կախվածության մեջ չէ իրավասու դատարանի հայեցողությունից, եւ, երկրորդ՝ անձն ունի արդյունավետ պաշտպանության միջոց ընդդեմ հայցադիմումը, դիմումը, վերաքննիչ բողոքը կամ անհատական դիմումը վերադարձնելու մասին իրավասու դատարանի որոշման. օրենսդրությունն ամրագրում է նման որոշումը բողոքարկելու հնարավորություն:

Մինչեւ վճռաբեկ բողոքի պարագայում՝ վճռաբեկ բողոքի թերությունները շտկելու հնարավորության օգտագործումը կախվածության մեջ է դրված վճռաբեկ դատարանի հայեցողությունից, եւ այդ հայեցողության կամայական դրսեւրման դեմ բացակայում է արդյունավետ պաշտպանության որեւէ միջոց: Նման պայմաններում, ի խախտումն վերոհիշյալ իրավակարգավորման հիմքում ընկած տրամարանության, վիճարկվող դրութի կիրառումը թույլ է տալիս այնպիսի վիճակի առաջացման հնարավորու-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թյուն, երբ բողոքի թերությունները կարող են խոչընդոտել անձին իրացնելու դատական ակտը բողոքարկելու իր իրավունքը եւ, հետեւաբար՝ նաեւ դատարանի մատչելիության իրավունքը:

7. Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ վճռաբեկ դատարանի կողմից իր՝ խնդրո առարկա հայեցողական լիազորության իրականացումն առանձին դեպքերում կրում է ոչ իրավաչափ եւ կամայական բնույթ: Մասնավորապես, վճռաբեկ դատարանի 28 հունիսի 2007թ. որոշման մեջ որպես վճռաբեկ բողոքի թերություն մատնանշվել է այն հանգամանքը, որ նշված չէ. «...թե վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով կայացվելիք դատական ակտն որ օրենքի միատեսակ կիրառության համար կարող է էական նշանակություն ունենալ»: Վճռաբեկ դատարանն իր այս որոշմամբ թերությունները շտկելու համար ժամկետ չի սահմանել: Մինչդեռ մեկ այլ՝ 15 նոյեմբերի 2007թ. որոշմամբ վճռաբեկ դատարանը, վերադարձնելով վճռաբեկ բողոքը, նշել է. «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում նշված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը բացակայում են, քանի որ բողոքը թերած անձի հիմնավորումները, թե որ օրենքների միատեսակ կիրառության համար վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով կայացվելիք դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ, թերի են, այսինքն՝ սույն վճռաբեկ բողոքի սահմաններում վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով կայացվելիք դատական ակտը օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակություն չի կարող ունենալ»: Չնայած նրան, որ այս դեպքում եւս թերությունն ըստ էության նույնաբնույթ է, այս որոշմամբ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել սահմանել ժամկետ թերությունը շտկելու համար: Վճռաբեկ դատարանն իր մեկ այլ՝ 2007թ. փետրվարի 22-ի որոշմամբ սույն գործով դիմողի վճռաբեկ բողոքը վերադարձել է՝ թերությունը վերացնելու համար ժամկետ չսահմանելով, այն պատճառաբանությամբ, որ բողոքասուն բողոքին չի կցել բողոքի պատճենը գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այսինքն՝ նման ձեւական բնույթի թերությունը հիմք է հանդիսացել անձի՝ վճռաբեկ դատարանի կողմից իր գործի քննության հնարավորությունը բացառելու համար:

Իրավակիրառական պրակտիկայի նման դրսեւորումների պայմաններում, հաշվի առնելով, որ ի կատարումն սահմանադրական դատարանի ՍԴ-690 որոշման՝ չեն ստեղծվել վճռաբեկ դատարանի խնդրո առարկա հայեցողական լիազորության իրավաչափ եւ ոչ կամայական իրականացումն ապահովող օրենսդրական լիարժեք երաշխիքներ, ինչպես նաև նկատի ունենալով, որ բացակայում է որեւէ արդյունավետ պաշտպանու-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թյան միջոց ընդդեմ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման, սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթն իրավական արգելք է հանդիսանում վճռաբեկ դատարանի միջոցով իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման համար:

8. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 231.1. հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմը հանդիսանում է մասնավոր նորմ նույն օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասում ամրագրված այն ընդիհանուր նորմի առնչությամբ, որի համաձայն՝ նույն անձը նույն դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերել միայն մեկ անգամ: Վիճարկվող նորմի եւ 224 հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմի նման առնչության պայմաններում, իրավական դաշտում վիճարկվող դրույթի բացակայության դեպքում եւս, հմարավոր կլինի 224 հոդվածի 3-րդ մասում ամրագրված ընդիհանուր նորմի ուժով անձին արգելել կրկին ներկայացնել շտկված վճռաբեկ բողոքը, եթե վճռաբեկ դատարանը թերությունները շտկելու համար ժամկետ չի սահմանել: Այսինքն՝ մասնավոր նորմի վերացման դեպքում կգործի ընդիհանուր նորմը՝ իրավակիրառական պրակտիկայում բողոք ներկայացրած անձի համար առաջացնելով միեւնույն բացասական իրավական հետեւանքները, ինչ վիճարկվող դրույթը: Հաշվի առնելով նշված դրույթների նման համակարգային փոխկապակցվածությունը՝ սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասին համապատասխան, հարկ է համարում անդրադառնալ նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության հարցին:

9. Միջազգային իրավունքում հայտնի սկզբունքը՝ «Դատարանը կրկին չի որոշի արդեն որոշված գործը» (res judicata), ամրագրված է ինչպես միջազգային դատական մարմինների հիմնադիր փաստաթղթերում, այնպես էլ մի շարք պետությունների՝ քրեական եւ քաղաքացիական արդարադատության վերաբերյալ օրենսդրության մեջ: Այս սկզբունքը ենթադրում է, որ դատական գործով ընդունված վերջնական որոշումը որպես իրավական որոշակիության արդյունք ենթակա է հարգանքի: Նշված սկզբունքն իր ամրողական եւ տրամարանական դրսեւորումն է գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասում, որի համաձայն՝ բողոքը բողնվում է առանց քննության այն դեպքում, եթե վճռաբեկ դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել: Սահմանադրական դատարանն իր 2007թ. հուլիսի 20-ի ՍԴՈ-709 որոշման մեջ նշված դրույթը գնահատել է որպես իրավագոր պահանջ, «... քանզի բողոքն առանց քննության բողնելու նման հիմքի նախատեսու-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մը կոչված է բացառելու կրկին անդրադառնալ այնպիսի հարցերի քննությանը, որոնց կապակցությամբ արդեն իսկ վճռաբեկ դատարանն արտահայտել է իր իրավական դիրքորոշումը, երբ ի հայտ չեն եկել նոր հանգամանքներ»: Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ նշված դրույթում օգտագործվող՝ «բողոքում նշված հիմքով» եւ «նույն գործով» ձեւակերպումները ենթադրում են, որ նույնաբնույթ է համարվում կրկին ներկայացված այն բողոքը, որում նույն դիմողը միեւնույն առարկայի վերաբերյալ նույն պատճառաբանություններով ներկայացված բողոքի հիման վրա ձգտում է հասնել նպաստավոր որոշման:

Միջազգային իրավունքում հայտնի վերոհիշյալ սկզբունքը, սակայն, աղավաղված եւ այդ սկզբունքի նպատակին ոչ համահունչ դրսեւորում է ստացել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասում: Այդ մասում ամրագրված դրույթն իր ձեւակերպումներով միտված է ոչ թե նրան, որպեսզի բացառվի այնպիսի հարցերի քննությանը կրկին անդրադառնալը, որոնց կապակցությամբ արդեն իսկ վճռաբեկ դատարանն արտահայտել է իր իրավական դիրքորոշումը, այլ խոչընդոտում է անձի՝ վճռաբեկ բողոք բերելու իրավունքի լիարժեք եւ արդյունավետ իրացմանը:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226 հոդվածը սահմանում է վճռաբեկ բողոք բերելու երկու հիմք, դրանք են՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումները, որոնք կարող են ազդել գործի ելքի վրա: Այն դեպքում, երբ նշված հիմքերից մեկով ներկայացված վճռաբեկ բողոքը չի ընդունվում քննության կամ մերժվում է, օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթը քույլ չի տալիս անձին նույն դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք ներկայացնել նաև մյուս հիմքով:

Նշված դրույթը ոչ միայն խոչընդոտում է անձին լիարժեք կերպով իրացնելու օրենքով նախատեսված հիմքերով վճռաբեկ բողոք բերելու իր իրավունքը, այլ նաև բացառում է վիճարկվող դատական ակտի օրինականության եւ հիմնավորվածության ստուգումը վճռաբեկության կարգով լրիվ ծավալով իրականացնելու հնարավորությունը, քանզի օրենսգրքի 239 հոդվածի ուժով վճռաբեկ դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերով եւ հիմնավորումներով:

Բացի դրանից, վիճարկվող դրույթը վերացնելու դեպքում օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթը կշարունակի իրավական խոչընդոտ հանդիսանալ վճռաբեկ բողոքի թերությունները շտկելու եւ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետում կրկին ներկայացնելու համար:

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ելեկով գործի քննության արդյունքներից, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 21-ին եւ նոյեմբերի 28-ին ընդունված օրենքներով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների փոփոխություններն ու լրացումները եւ հաշվի առնելով, որ վեճի առարկա 231.1. հոդվածի 4-րդ մասը բովանդակային փոփոխության չի ենթարկվել, այլ վերաձեւակերպվել է որպես 233 հոդվածի 4-րդ մաս, դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 4-րդ մասը (նոր խմբագրությամբ 233 հոդվածի 4-րդ մասը) առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքում կրկին բողոք ներկայացնելու իրավունքի սահմանափակման առումով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 4-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասի դրույթը՝ նույն անձի կողմից նույն դատական ակտի դեմ մեկից ավելի անգամ վճռաբեկ բողոքը բերելու արգելվի մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**27 մայիսի 2008 թվականի  
ՍՊԸ- 754**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՔԱՂԱՔԱՑԻ ԷՄԻԼԻՅԱՎ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ  
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 231.1.  
ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՅԱՄԲ 233 ՀՈԴՎԱԾԻ  
4-ՐԴ ՄԱՍ)՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 754  
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 62 հոդվածի 7 կետով և «Սահմանադրական դատարանի կանոնակարգ»-ի 35 հոդվածով, ներկայացնում եմ հատուկ կարծիք:

1.Վերը նշված գործով սահմանադրական դատարանն իր ՍԴՈ 754 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 4-րդ մասը (նոր խմբագրությամբ 233 հոդվածի 4-րդ մասը՝ առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերաբարձնելու դեպքում կրկին բողոք ներկայացնելու իրավունքի սահմանափակման առումով ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 4-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասի դրույթը՝ նույն անձի կողմից նույն դատական ակտի դեմ մեկից ավելի անգամ վճռաբեկ բողոք բերելու արգելքի մասով ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

Սահմանադրական դատարանը նման եզրահանգման եկել է հիմնականում մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները և չի անդրադարձել ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածների 1-ին մասերի սահմանադրախրավական իմաստի պարզաբանմանը:

Մասնավորապես, Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Իսկ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասը հոչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները եւ ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի իրապարակային քննության իրավունք:

Հաշվի առնելով, որ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկող դրույթները վերաբերում են վճռաբեկ դատարանի դատավարական կարգավիճակին (գործունեության կարգին)՝ անհրաժեշտ էր նաև տալ ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի 2-րդ մասի մեկնաբանումը, ըստ որի Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ եւ օրենքով:

Մեր կարծիքով, սահմանադրական դատարանն օրենքները սահմանադրական վերահսկողության ենթարկելիս, առաջին հերթին պետք է տա ոչ միայն վիճարկող օրենքի դրույթների մեկնաբանումը, այլ Սահմանադրության համապատասխան դրույթների իր մեկնաբանումը, որոնց ենթարրար հակասում են վիճարկող օրենքի դրույթները:

Հիմնավոր չէ այն մոտեցումը, երբ միայն օրենքի դրույթները մեկնաբանելով դրանք ճանաչվում են Սահմանադրությանը հակասող:

2. Սահմանադրական դատարանն իր ՍԴՌ 754 որոշման 7-րդ կետում փաստելով, որ վճռաբեկ դատարանը միևնույն իրավիճակում տարբերակված մոտեցում է դրսնորել, եկել է այն եզրահանգման, որ վերը նշված գործով «իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ վճռաբեկ դատարանի կողմից իր՝ խնդրո առարկա հայեցողական լիազորության իրականացումն առանձին դեպքերում կրում է ոչ իրավաչափ եւ կամայական բնույթ»: Մեր կարծիքով, տվյալ խնդիրն ընդհանրապես չի առնչվում վիճարկող դրույթի սահմանադրականությանը, այլ վերաբերում է վճռաբեկ դատարանի կողմից իր հայեցողական լիազորության իրականացման իրավաչափությանը, հետևաբար և՝ իրավունքի կիրառման օրինականությանը, ինչն՝ ըստ ՀՀ Սահմանադրության չի հանդիսանում սահմանադրական վերահսկողության օբյեկտ և դուրս է սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակներից:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԱՆԴԱՍ**

**Ֆ. ԹՈԽԵՅԱՆ  
26.06.08թ.**

## ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

2008թ. դեկտեմբերի 12-ին Կրեմլի մեծ սրահում Ռուսաստանի Դաշնության Նախագահ Դմիտրի Սեղվեդեևի նախագահությամբ հրավիրվել էր գիտագործնական կոնֆերանս՝ նվիրված Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության ընդունման 15-ամյակին: Կոնֆերանսի առաջին մասում նախատեսված էր չորս հիմնական զեկույց:

Ո՞Դ Նախագահ Դ. Սեղվեդեև անդրադարձավ 1993թ. ընդունված Ո՞Դ Սահմանադրության պատմական դերին եւ այն հիմնախնդիրներին, որոնք անհրաժեշտ է լուծել երկրի իրավական զարգացման ներկա փուլում:

Ո՞Դ սահմանադրական դատարանի նախագահ Վ. Զորկինի զեկույցը նվիրված էր Ռուսաստանի Դաշնությունում սահմանադրական զարգացումների առանձնահատկություններին եւ սահմանադրական արդարադատության առջեւ ծառացած խնդիրներին: Վերջիններիս անդրադարձավ նաև Գերմանիայի Դաշնության սահմանադրական դատարանի նախագահ Ի. Պապիեռը:



## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական արդարադատության մարմինների միջազգային կոնֆերանսի նախագահ, ՀՀ ՍԴ նախագահ Գ. Հարությունյանի գեկույցը նվիրված էր Ռուսաստանի Դաշնությունում սահմանադրական մշակույթի զարգացման առանձնահատկությունների ու իհմնական միտումների բացահայտմանը:

Կոնֆերանսի երկրորդ բաժնում նախատեսված էին նաև տարրեր գիտնականների (թվով 10) ելույթներ:

Դեկտեմբերի 13-15-ը շարունակվեց ՀՀ ՍԴ նախագահի պաշտոնական այցը ՌԴ սահմանադրական դատարան: Այցի ընթացքում հանդիպումներ կայացան ՌԴ ՍԴ նախագահ Վ. Չորկինի, ինչպես նաև սահմանադրական դատարանի ամբողջ կազմի հետ: Ջննարկվեցին մի շարք խնդիրներ, որոնք վերաբերում էին երկլողն հարաբերությունների հետագա զարգացմանը, սահմանադրական արդարադատության մարմինների միջազգային առաջին կոնֆերեսի հրավիրման նախապատրաստական աշխատանքներին, երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական արդարադատության մարմինների միջազգային կոնֆերանսի շրջանակներում՝ 2009 թվականին նախատեսվող աշխատանքներին:

Պաշտոնական այցի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը հանդիպում ունեցավ նաև Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի հետ, ելույթ ունեցավ «Նոր հազարամյակում սահմանադրական արդարադատության զարգացման իիմնական խնդիրներն ու միջազգային միտումները» թեմայով, պատասխանեց հանդիպման նաև ակիցների բազմաթիվ հարցերին:

2009թ. նախատեսվում է Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի պատվիրակության պաշտոնական այցը Հյայատան:

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅՐՀԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՔ

**2009թ. հունվարի 22-24-ին** Հարավաֆրիկյան Հանրապետությունում (Կեյփտառունում) տեղի ունեցավ Սահմանադրական արդարադատության մարմինների Համաշխարհային առաջին խորհրդաժողովը՝ սահմանադրական արդարադատության տարածաշրջանային մարմինների, Հարավաֆրիկյան Հանրապետության սահմանադրական դատարանի եւ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախաձեռնությամբ:

Խորհրդաժողովին մասնակցում էին աշխարհի 93 երկրների սահմանադրական դատարանների պատվիրակություններ:

Նման խորհրդաժողովն առանձնահատուկ էր ոչ միայն նրանով, որ պատմականորեն առաջինն էր եւ այս բնագավառում միջազգային համագործակցության նոր փուլ խորհրդանշեց, այլև նրանով, որ տարբեր մայրամաքների շուրջ 400 ներկայացուցիչներ երեք օրվա ընթացքում կարողացան հատակեցնել այն հիմնախնդիրները, Սահմանադրության գերակայության երաշխավորման այն առաջնահերթությունները, որոնք սոցիալական հանրության կայուն եւ ներդաշնակ առաջընթացի համար կենսական նշանակություն ունեն:



## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հունվարի 23-ի լիազումար նիստում, Հարավաֆրիկյան Հանրապետության Նախագահի ողջույնի խոսքից հետո, ընդգրկուն գեկույցներով հանդիս եկան 9 տարածաշրջանային եւ լեզվական խմբերի նախագահները, որոնց ելույթները պետք է պայմանավորեին հետագա քննարկումների ընդհանուր ուղղվածությունը: Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինները ներկայացրեց այդ երկրների միջազգային կոնֆերանսի նախագահ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ, պրոֆեսոր Գ. Հարույտյանը՝ «Սահմանադրական արդարադատությունը եւ զարգացող հասարակությունը» գեկույցով (այն տեղադրված է Վենետիկի հանձնաժողովի եւ ՀՀ սահմանադրական դատարանի հնատերնետային կայքերում):

Առանձին գեկույցներ ներկայացվեցին նաև Եվրոպական սահմանադրական դատարանների կոնֆերանսի, ֆրանսախոս երկրների սահմանադրական դատարանների միջազգային կոնֆերանսի, ազգերի միության, աֆրիկյան, ավիական, արարական, լատինաամերիկյան, պորտուգալախոս երկրների սահմանադրական դատարանների կոնֆերանսների անունից:

Ներկայացված գեկույցների ընդհանուր քննարկումներից հետո կազմակերպվեցին հատուկ քննարկումներ՝ տարածաշրջանային եւ լեզվական 9 խմբերի մակարդակով, որոնց արդյունքները խմբերի կողմից ընտրված գեկույցողները ներկայացրեցին համաշխարհային կոնգրեսի հունվարի 24-ի լիազումար նիստում: Եվրոպական երկրների եւ երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական արդարադատության մարմինները քննարկումները կազմակերպվեցին միացյալ խմբում:



## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը հունվարի 24-ին Խորհրդաժողովի լիազումար նիստում հանդես եկավ շուրջ 40 երկրների պատվիրակությունների կողմից միացյալ խմբում ներկայացրած գրավոր եւ քանակոր գեկույցների ամփոփ վերլուծությամբ՝ ոչ միայն ներկայացնելով սահմանադրական վերահսկողության միջազգային փորձի առանձնահատուկ գծերը վերջին հարյուրամյակում, այլև, անդրադառնալով ներկա մարտահրավերներին, ներկայացրեց համակարգային զարգացումների հիմնական միտումները հեռանկարում, պատասխանեց տարբեր երկրների ներկայացուցիչների բազմաթիվ հարցերին:

Սահմանադրական արդարադատության մարմինների միջազգային առաջին խորհրդաժողովը բարձր գնահատելով եռօրյա քննարկումների արդյունքները, ինչպես նաև այս ոլորտում միջազգային համագործակցության հետագա խորացման անհրաժեշտությունը, մասնավորապես որոշեց. նախ՝ կարեւորել սահմանադրական արդարադատության մարմինների համագործակցության հետագա խորացումը եւ միջազգային խորհրդաժողովների պարբերաբար կազմակերպումը, երկրորդ՝ ստեղծել սահմանադրական արդարադատության մարմինների միջազգային խորհրդաժողովի մշտական գործող բյուրո՝ տարածաշրջանային եւ լեզվական (ներկայումս գործող թվով 9 խմբերի նախագահների կազմով), երրորդ՝ այդ կազմում ընդգրկել նաև Վենետիկի հանձնաժողովի ներկայացուցին եւ շարունակել ակտիվ համագործակցությունն այդ հանձնաժողովի հետ, չորրորդ՝ հանձնարարել բյուրոյին առաջիկա երեք տարիների ընթացքում նախապատրաստել սահմանադրական արդարադատության մարմինների երկրորդ համաշխարհային խորհրդաժողովը՝ հստակեցնելով թեմատիկ քննարկումների ուղղվածությունը, անցկացման տեղը եւ ժամանակը:

Հայաստանը՝ ի դեմս ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի, առաջիկա տարիներին կշարունակի մնալ Համաշխարհային խորհրդաժողովի բյուրոյի 10 անդամներից մեկը: Խորհրդաժողովը ներառում է թվով 125 երկրների սահմանադրական արդարադատության մարմիններ:

## ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ՝ «ՖԵՄԻԴԱ»-Ի ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Իրավական պետության ինստիտուտների գարզացման և ժողովրդավարական հասարակության կերտման գործում ունեցած ավանդի համար, ամեն տարի «ՖԵՄԻԴԱ» ֆոնդը համանուն բարձրագույն իրավաբանական մրցանակի է արժանացնում ոչ միայն Ռուսաստանի, այլև արտասահմանյան երկրների իրավաբաններին, պետական և հասարակական գործիչներին, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետներին, գիտական և ուսումնական հաստատություններին։ Մրցանակի նշանաբանն է՝ *Salus populi suprema lex esto* (Բարձրագույն օրենքը բող լինի ժողովրդի բարօրությունը)։

Իրավաբանների միջազգային միության և ՀՀ իրավաբանների միության կողմից 2008 թվականի համար իրավաբանական բարձրագույն պարզևի հայցորդ էր ներկայացվել ՀՀ ՍԴ նախագահ Գ. Հարությունյանը։ Եվ ահա, 2009թ. փետրվարի 13-ին կայացած քվեարկության արդյունքում հետխորհրդային տարածաշրջանում դատական համակարգի բարեփոխման, անկախության և ինքնուրույնության անհրաժեշտ մակարդակի ապահովման գործում ունեցած անձնական մեծ ավանդի համար, ԱՊՀ անվանակարգում ՀՀ ՍԴ նախագահ, Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական դատարանների միջազգային ընկերակցության նախագահ, դոկտոր, պրոֆեսոր Գ. Հարությունյանը արժանացավ «ՖԵՄԻԴԱ» իրավաբանական բարձրագույն մրցանակին։ Փետրվարի 17-ին Մոսկվայի «Հովայ օպերա» բատրոնում կայացավ «ՖԵՄԻԴԱ» իրավաբանական բարձրագույն պարզևների հանձնման հերթական, 13-րդ, հանդիսավոր արարողությունը, որին նաև ՀՀ ՍԴ նախագահ Գ. Հարությունյանը։

«Անկախ երկրների համագործակցության» անվանակարգի մրցանակը Գագիկ Հարությունյանին հանձնեց Ռուսաստանի Դաշնության Հաշվիչ պալատի նախագահ Սերգեյ Ստեպաշինը և նշելով նրա անձնական ավանդը՝ բարեմաղթեց նորանոր հաջողություններ, առողջություն և երջանկություն։



## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆՈՒՄ

**Նոյեմբերի 20-ին** ՀՀ սահմանադրական դատարանում Հայաստանի տարրեր բուհերի հիսունից ավելի ուսանողներ հանդիպում ունեցան Սահմանադրական դատարանի նախագահ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Հարությունյանի եւ Հայաստանում Լեհաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Տոմաշ Կնոտիեի հետ:

Ուսանողներին հետաքրքրում էին սահմանադրական զարգացումների Եվրոպական արդի միտումները, ինչպես նաև Եվրոպական գործընթացները: Երկժամյա հանդիպման ընթացքում ուսանողներն ստացան իրենց հուզող հարցերի պատասխանները:

**Նոյեմբերի 20-ին** ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ Հայաստանից ընտրված դատավոր Ալվինա Գյուլումյանին եւ Ալրվակիայից ընտրված դատավոր Յան Շիկուտային:

**Դեկտեմբերի 5-ին** ավարտվեց ՀՀ սահմանադրական դատարանի սեմինարների շարքը, որ այս տարվա սեպտեմբեր ամսից սկսած կազմակերպվում էր «Հայաստանում իրավական համակարգի ամրապնդման համար խորհրդատվություն» ծրագրի (GTZ) հետ համագործակցությամբ:

«Ի պաշտոնե քննության սկզբունքը սահմանադրական դատավարությունում» թեմայով երկօրյա սեմինարը նախագահում էր ՀՀ ՍԴ նախագահ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանը:

Սեմինարի գլխավոր բանախոսը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դաշնային սահմանադրական դատարանի նախկին դատավոր, դոկտոր Հանս-Յոախիմ Ցենցն էր:

Ողջույնի խոսքերով հանդես եկան GTZ-ի իրավաբան Գ. Մուրայյանը, ՍԴ նախագահ Գ. Հարությունյանը, Հանս-Յոախիմ Ցենցը: Կարեւորվեց խնդրո առարկա թեման, որը հայկական դատավարական իրավունքի պրակտիկայում առաջին անգամ ամրագրվել է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում:

Հանս-Յոախիմ Ցենցը ներկայացրեց ի պաշտոնե քննության սկզբունքի էությունն ու բովանդակությունը եւ դրա սահմանափակումները, խոսեց տնօրինման (դիսպոզիցիոն) սկզբունքի, դիմումներ ներկայացնելու եւ հիմնավորման պարտականության մասին, պարզաբանեց

ապացույցների ձեռքբերման, սահմանադրական դատարանի եւ մասնագիտացված դատարանների միջեւ լիազորությունների տարանցատման հիմնախնդիրների, վերահսկողության մասշտարի, վերահսկողության ծավալի, ՍԴ որոշումների գերակայության՝ Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի փորձը: Բանախուսը սահմանադրական դատավարությունում ի պաշտոնե քննության սկզբունքի կիրառման մի շարք օրինակներ բերեց իր երկրի արդարադատության պրակտիկայից:

Մեմինարի երկրորդ օրը հարց ու պատասխանի, քննարկումների օրէր, որը հրաշալի առիթ հանդիսացավ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դաշնային սահմանադրական դատարանի փորձի ուսումնասիրման եւ մեր ունեցած գիտելիքների ու փորձի հետ դրանք զուգահեռելու ու եզրահանգումներ անելու համար:

ՀՀ ՍԴ նախագահը շնորհակալություն հայտնեց բանախոսին, կազմակերպիչներին, շեշտեց սեմինարների կարեւորությունն ու արդյունավետությունը, եւ գրիունակություն հայտնեց նման քննարկումների հնարավորության ընձեռման համար: «Մենք հնարավորություն ունեցանք, - ամփոփելով սեմինարի աշխատանքները՝ ասաց նա, - ուսումնասիրել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դաշնային սահմանադրական դատարանի ողջ փորձը, մեզ համար բացահայտելու համար անհնարինություն ու անհամարժեացություն առաջանակած է»:

Մել շատ նրբերանգներ, որոնք կարեւոր են սահմանադրական արդարադատության համար: Գերմանացիների փորձը մեզ հնարավորություն կտա հետագա քայլեր իրականացնել մեր երկրում սահմանադրական արդարադատության համակարգային զարգացումների ուղղությամբ»:

### **ՄԴ մամուլի ծառայություն**

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կողեզրայի թիվ 37/214 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝  
Երևան Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 588171  
Email: armlaw@concourt.am.  
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 24.02.2009թ.  
Դասիչ՝ 77754  
Գրաշափը՝ 70x100 1/16  
Տպաքանակը՝ 500

*ՀՀ ՍԴ դեղեկագիրը ՀՀ կառավարությանն  
առընթեր բարձրագույն որակավորման  
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է  
ապրենախտությունների արդյունքների  
դրագրման համար ընդունելի  
պարբերականների ցանկում*